



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

964
965

1 Երասխի
հնգյեկ Կոչեր
Թիֆլիս 1895

2. Ռոման Ա.
Հոգևածար ոճով Պոնտիֆիկ
Սարկիսյանի Կ. Պոլս 1880

82

Ը-53



12003

ՀՌԶԱԿԱԻՈՐ ՈՃԻՐՔ
ՊՐԷՆՎԻԼԻԷ ՄԱՐԳԻՉՈՒՀԻՆ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Հ Ե Ղ Ի Ն Ա Կ

ԱՂԷՔՍԱՆԴՐ ՏԻՒՄԱ

ԹԱՐԳՄԱՆԻԶ

Մ. Յ. ՄԷԼԻՔԵԱՆ



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. Ղ. ՊԱՐՏԻՉՊԱՆԵԱՆ ԵՔ ԸՆԿԵՐ

1880

23190

7581.57

Ի ՅԻՉԱՏԱԿ
ՀԱՐԱԶԱՏԻ ԻՄՈՅ ՍԻՐԵԼԻՈՅ
ԿԱՐԱՊԵՏԻ Յ. ՄԷԼԻՔԵԱՆ

Զ Օ Ն
ԵՂԲԱՅԲԱԿԱՆ

Վերջին ատեններս մեր ազգին մէջ ընթերցանութեան ծաւալը
և օգտակար հրատարակութեանց բաղձանք մը տեսնելով, փափաքեցայ
Ազգին եւ ժողովրդեան օգտաւէտ գործեր հետզհետէ տպագրել, իմով-
սանն Ազգիս մանաւանդ զարթուն երիտասարդութեան ծառայութիւն
մը մատուցանելու համար, յուսալով որ երբ այս ասպարէզն կրնտրեմ
ինձ եւ ներկայ սերնդին համար նիւթական զոհողութիւններ ընել յան-
ձըն կանոնում, անշուշտ ընթերցասէր ազգայինք ալ իրենց քաջալե-
րութեամբը պիտի պատուեն զիս:

Ասկէ առաջ փոփովիչ Հայազգի նշանաւոր բժշկին «Արուեստ Եր-
կայնակեցութեան» անուն պատուական գրքոյն ի լոյս ընծայեցի իւ-
րեւ առաջին գործ, զայն բարեյիշատակ հեղինակին ընտանիքէն գնե-
լով:

Այս անգամ ալ ներկայ պատմական գործն ի լոյս կընծայեմ ի մի
հատոր խիստ գեղեցիկ պատկերներով ճոխացած, որուն պիտի յաջոր-
դեն հետզհետէ միւս հատորները:

«Տնական Բժիշկ» անուն կենցաղօգուտ գործի մը թարգմանու-
թիւնն ալ որ Մամլոյ տակ է, ի լոյս պիտի ընծայեմ քանի մը շարա-
թէն:

Այս ասպարէզն ընտրելով, իմ նպատակս ուրիշ բան չէ, բայց կա-
րելի եղածին չափ խրախուսել Ազգային գրագէտներն ու հեղինակները
որոնք օգտակար գործեր կը յղանան, սակայն Հայ գրագիտաց միակ
բաժինն եղած նիւթական անբաւականութեան պատճառաւ անկարող
կը լինին զայն տպագրութեան յանձնել, որով օգտակար աշխատու-
թիւններ փոշիներու կամ ցեցերու մէջ մնայու կը դատապարտուին,
եւ հասարակութիւնը լուսատու գաղափարներէ եւ հրահանգիչ խրատ-
ներէ կը զրկուի:

Քաղցր է ինձ յուսալ որ ուղղախոհ եւ ողջամիտ Ազգայինք իմ
ընտրած ասպարիզիս ծանր ու դժուարին հոգերը ուշադրութեան առ-
նըլով, պիտի հաճին հետզհետէ օգտակար հրատարակութիւններս քա-
ջալերել եւ նպատակիս հասնելու համար ըստ կարելոյն նպաստել
ինձ:

Ս. Ղ. ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ

ՎՐԻՊՍԿ

ՈՒՂԻՂ

- Երես 10 քանի մը օրէն
- » 11 ըմպելիքը
- » 17 կը գտնուէր
- » 18 աներոջմէն
- » 19 ասկէ
- » 56 ու զի
- 63 սը
- » 74 ւգեր

- քանի մը օր
- ըմպելին
- գտնուէր
- աներէն
- ասոր վրայ
- զի
- մը
- ըներ

Աղէքսանդր Տիւմա մեծանուն հեղինակին սոյն ընտիր գործը որ ճարտարարուեստ թունից և սոսկալի սպանութեանց ահաւոր պատկեր մ'է, թարգմանել սկսելով, առաջին մասն ահաւասիկ ի լոյս կրնծայեմք:

Թարգմանութիւնն որքան կարելի էր, ջանացինք աշխարհիկ ոճով ընել, որպէս զի իբրև վէպ ժողովրդեան ամէն կարգին դիւրահասկանալի լինի. իսկ բնագրին հարազատութիւնը անայլայլելի պահեցինք:

« Հռչակաւոր Ոճիրք » ի սոյն մասին մէջ պիտի տեսնուի ճարտարամիտ և հանճարեղ կին մը, տարփաւոր մը՝ Պրէնվիլիէ մարքիզուհի անուամբ որոյ կենաց վերջին մասն ամբողջ ահաւոր սպանութեանց, այն է հայրասպանութեան, եղբայրասպանութեան և այլն նուիրեալ է. և սակայն այս կինը յետ այնքան եղեռնագործութեանց ի մահ դատապարտուելով, կատարեալ ապաշաւողի և ճշմարիտ քրիստոնէի մը դերը կը կատարէ և աներկիւղ կառափնարան դիմելով դուռխը դահճին առաջ կը խոնարհէ:

Աւելորդ կը համարեմք այս պատմութեան մանրամասն պարագայներուն վրայ խօսիլ, զի սկզբամբ իրողութիւն ըլլալով, Գաղղիոյ պատմութիւնը դիտցողներուն արդէն ծանօթ է: Նոյնպէս աւելորդ կը համարեմք գովեստ կարգալ, զի բնագիրը կարգացողներն անշուշտ անոր վսեմութիւնը և նրբութիւնը ճանչած են. իսկ անոնք որ գաղափար չունին, արժան է որ կարդան, որպէս զի ճանչան Գաղղիոյ վերջին դարերը և անոնց մէջ ապրող իշխանաց և իշխանուհեաց բարքը և մոլութիւնները:

Սիրելի է մեզ յուսալ որ սոյն հետաքրքրական պատմութիւնը բանասէր և ընթերցասէր ազգայնոց քաջալերութեանը պիտի հանդիպի, որով և մեք մեր աշխատութիւնը պսակուած պիտի համարեմք:

Handwritten notes in the top left corner, including the name "Համբարձում" and some illegible characters.

ՊՐԷՆՎԻԼԻԷ ՄԱՐԿԻԶՈՒՇԻՆ

1676



Վտիտ, դալկադեմ, երկայնաներ եւ սեւ բանկոնակ հագած մարդ մը յամբարայլ ներս մտաւ .

1665 տարւոյն վերջերը աշնանային դեղեցիկ իրիկուն մը մեծ բազմութիւնը մը խոնած էր Բօն-Նէօֆի մէկ կողմը որ Տօֆին փողոցը կ'իջնէ :

Հասարակութեան ուշադրութիւնը գրաւող այս բանը գոց կառք մ'էր, որոյ մէկ դուռը պաշտօնակալ մը կը ջանար բանալու, մինչդեռ չորս ոստիկաններէն երկուքը ձիերը բռնած իսկ միւս երկուքը կառապանին հետ կ'ըրաղէին, թէև այս վերջինը բոլորովին անտարբեր՝ եղած ազդարարութեանց, իւր ձիերը արագընթաց վազցնել կը նայէր :

Այս կռիւը բաւական տևեց . և ահա յանկարծ դրան մէկը բռնութեամբ բացուեցաւ . և երիտասարդ սպայ մը հազարապե-

քարայտակին վրայ ցատքեց խոտի մը
այսրով, այնպէս որ մօտը գտնուողներն իսկ չկրցին ու
րոշել կառքին խորը վերարկուի մէջ փաթթուած և քօղի մէջ
ծածկուած կին մը որ կարծես ժողովրդէն չճանչցուելու համար
ամեն տեսակ զգուշութիւն ի դործ կը դնէր :

— Պարոն, ըսաւ երիտասարդը սէգ և հրամայական ձայ-
նով մը իւր խօսքը պաշտօնակալին ուղղելով, որովհետև այնպէս
կը կարծեմ թէ խնդիրը մի միայն իմ անձիս վրայ է, ուստի կա-
ղաչեմ զձեզ ըսել ինձ թէ որով իշխանութեամբ իմ կառքս կը
կեցնէք. և որովհետև կառքէն դուրս ելայ, ուստի կը պահան-
ջեմ ձեզմէ հրամայել ձեր մարդոց որ թողուն զի կառքը իր
ճամբան շարունակէ :

— Ամենէն առաջ, պատասխանեց պաշտօնակալը առանց
կարևորութիւն տարւո երիտասարդին իշխանական բարբառին և
նշանացի ընելով ոստիկանաց որ չթողուն ոչ կառքը ոչ ձիերը,
հաճեցէ՛ք պատասխանել իմ հարցմանցս :

— Լաւ, ըսաւ երիտասարդը, իւր անտարբերութիւնը չայ-
լայելու համար բռնի ջանք մը ընելով :

— Սէնթ-Քրուայի Պօտէն ասպետը դ՞ուք էք :

— Ես եմ :

— Թրասիի վաշտին հազարապետը :

— Այո, պարոն :

— Ուրեմն զձեզ կը ձերբակալեմ յանուն թագաւորին :

— Որով հրամանաւ :

— Այո կնքեալ հրամանագրով :

Ասպետը արագ նայուածք մը նետեց թղթին վրայ զոր
իրեն ներկայացուցին և առաջին տեսութեամբ ոստիկանութեան
պաշտօնէին ստորագրութիւնը ճանչնալով այնուհետև իւր ու-
շագրութիւնը կնոջը վրայ դարձուց որ կառքին մէջն էր. յետոյ
իւր առաջին հարցմանը դառնալով :

— Շատ աղէկ, պարոն, ըսաւ պաշտօնակալին. բայց այս կըն-
քեալ հրամանագիրը իմ անունս միայն կը կրէ, հետևաբար ի-
բաւունք չունիք արդելու այն կինը որ հետս կը գտնուի. կա-
ղաչեմ ուրեմն հրաման տուէք որ կառքը իր ճամբան շա-
րունակէ և զիս ուր որ կուզէք կրնաք տանիլ. պատրաստ եմ
ձեզի հետևելու :

Այս առաջարկութիւնը ոստիկանութեան
արդարացի երևցաւ. վասն զի հրաման ըրաւ ոստիկան-
որ կառքը և ձիերը ազատ թողուն. ասոնք անմիջապէս բազ-
մութիւնը ճգրելով հեռացան անոնց առջևէն և սրարչաւ տա-
րին կինը որուն վրայ ձերբակալեալ ասպետը մտախոհ կերևար :

Սէնթ-Քրուա բնաւ ընդդիմութիւն չըրաւ ինչպէս ինքը
խոստացած էր, և քանի մը վայրկեան առաջնորդին հետևեցաւ
բազմութեան մէջէն անցնելով, որոյ բոլոր հետաքրքրութիւնը
իր վրայ դարձած էր. յետոյ Հօբլօթի ծովափանց անկիւնը ոս-
տիկան մը հրապարակին վրայ գտնուած կառք մը կանչելով, ե-
րիտասարդը ներս մտաւ սէգ և զայրացիտ դէմքով մը զոր
սկիզբէն ի վեր ունէր : Պաշտօնակալը քովը նստաւ, ոստիկաննե-
րէն երկուքը ետևը և միւս երկուքը իրենց ընդունած հրա-
մանին համեմատ անուշտ՝ հեռացան, կառապանին սա խօսքն
ուղղելով. « Ի Պասթիլ » : Այժմ հարկ կ'ըլլայ այս դէպքին ա-
ռարկայ եղող անձանց վրայ ծանօթութիւն տալ մեր ընթեր-
ցողաց :

Սէնթ-Քրուայի Պօտէն ասպետը որոյ ծնունդը յայտնի չէ,
ըստ ոմանց՝ մեծ իշխանի մը պոռնկորդի մ'էր, մինչդեռ ըստ այ-
լոց աղքատ ընտանիքէ ծնած էր որոյ անուամբ չուզելով յորձոր-
ջուիլ աւելի նախապատիւ համարած էր զարդարուն անպատու-
ութիւն մը, ինքզինքն այնպէս ճանչցնելով ինչպէս որ չէր :
Այս անձին վրայ դիտցուած հաւաստի բանը սա էր որ ին-
քը Մօնթօպանի մէջ ծնած էր. աշխարհի մէջ ունեցած ներկայ
վիճակին դալով՝ Թրասիի վաշտին մէջ հազարապետ էր :

Սէնթ-Քրուա այս դէպքը պատահած ժամանակին այսինքն
1665 տարւոյն վերջերը 28-30 տարեկան էր. գեղեցիկ երիտա-
սարդ մը համակիր և հանճարեղ դէմքով, արբեցողութեան
զուարթ ընկեր և քաջ զօրապետ մը. իւր հաճոյքը ուրիշներու
հաճոյից մէջ կը փնտուէր և իւր յեղյեղուկ բնաւորութիւնը
բարեպաշտական գործոց ինչպէս նաև զեղխութեանց մէջ միշտ
բերկրալիւր էր. սիրային յարաբերութեանց տրամադիր և կա-
տաղութեան աստիճանի չափ նախանձոտ, փոյթ չէր եթէ գեղջ-
կուհի մ'իսկ լինէր, բաւական էր որ սա հաճոյ թուէր իրեն. իշ-
խանական շուայութեամբ կապէր թէև եկամուտ մը չունէր :
Վերջապէս նախատանաց շատ դիւրազգած էր, նման անոնց որք
ստորագրող կնքող

դիրքի մը մէջ գտնուելով այնպէս կը կարծեն
իրենց ծննդեան վրայ ակնարկութիւն մը ըրած ատեն
էրենք նախատելու դիտաւորութիւնն ունի :

Հիմա տեսնենք թէ ինչ պարագայներ պատճառ եղած էին
այս ձերբակալութեան: 1660 ին Սէնթ-Քրուա բանակին մէջ ըլ-
լալով Պրէնվիլիէ մարքիզը ճանչցած էր որ Նորմանտիոյ զնդին
գնդապետն էր. ասոնց տարիքը որ գրեթէ մի և նոյն էր և աս-
պարէզը որ մի և նոյն ճամբան կ'առաջնորդէր զիրենք, ինչպէս
նաև իրենց բարեմասնութիւնները և թերութիւնները որ նմա-
նօրինակ էին, ասոնց պարզ յարաբերութիւնը անկեղծ բարեկա-
մութեան մը փոխարկած էին, այնպէս որ Պրէնվիլիէ մարքիզը
բանակէն վերադարձին Սէնթ-Քրուա երիտասարդը իւր կնոջը
ներկայացուցած և զայն իր տունը բնակեցուցած էր :

Այս մտերմութիւնը սովորական արդիւնքներ յառաջ բե-
րաւ : Պրէնվիլիէ մարքիզուհին հաղիւ 28 տարեկան էր . 1651ին
այսինքն 9 տարի առաջ Պրէնվիլիէ մարքիզին հետ ամուսնա-
ցած էր որ 30,000 ոսկւոյ եկամուտ մ'ունէր և որուն 200,000 ոսկ-
ւոյ օժիտ մը բերած էր կինը առանց հաշուելու իւր ժառան-
գական բաժինը : Ասոր անունն էր Մառի Մատրլէն որ երկու
եղբայր և մէկ քոյր ունէր և որուն հայրը, պարոն Տուէօ ա'Օպ-
րէյ Փարիզի դատարանին մէջ քաղաքային տեղակալ էր :

Պրէնվիլիէ մարքիզուհին իւր 29 տարեկան հասակին մէջ
ամենագեղեցիկ էր . հասակը կարճ բայց վայելուչ . իւր կըլտ-
րիկ դէմքը հրապուրիչ գեղեցկութիւն մ'ունէր, իւր դիմաց
պատկերը որ ս և է տպաւորութեամբ մը բնաւ այլալած չէր,
կը նմանէր արձանի մը պատկերին որ մոգական իշխանութեամբ
մը վայրկենական կեանք կ'ընդունի, և ամէն ոք անբիծ ոգիի
մը զուարթութեան իրրև ցոյ կրնար համարիլ այն ցուրտ և
անգութ անվշտութիւնը որ խղճի խայթը ծածկելու համար դի-
մակ մ'էր և ոչ այլ ինչ :

Սէնթ-Քրուա և մարքիզուհին առաջին տեսութեամբ հա-
ճոյ եղան միմեանց և անմիջապէս սիրահար և սիրուհի եղան :
Իսկ մարքիզը որ թէև յիշեալ փոխադարձ սիրոյ փիլիսոփայու-
թեամբը օժտեալ էր, առանց որոյ ախորժ ճաշակ չկայ երբէք
այս տարիքին մէջ, և որ իր վայելած հաճոյքները ժամա-
նակ չտուն իրեն աչաց առջև տեղի ունեցած դարձուածքնե-

այս մտք

րը տեսնելու, իւր նախանձութեամբն հանդերձ չ'կրցաւ
մութեան արդեւք լինել . և շարունակեց իւր յիմար ծախք
որոց համար արդէն իւր հարստութեան մէկ մասը վատնած էր .
չուտով իւր գործերը այնպիսի կերպով մը աւրուեցան որ մար-
քիզուհին, որ զինքն այլ ևս չէր սիրեր և որ նոր սիրով մը վառ-
եալ աւելի ազատութիւն վայելելու կը փափաքէր, խնդրեց որ
երկու ամուսինները բաժնուին և յաջողեցաւ ալ : Յայնմ հետէ
ամուսնական տունը թողուց և այլ ևս զգուշաւոր վարուելու
փոյթ չունենալով, սկսաւ ամեն տեղ և ի հրապարակի Սէնթ-
Քրուայի հետ ազատաբար պտրտիլ և կենակցիլ :

Այս առևտուրը որուն հետևած էին մեծամեծ իշխաններ,
բնաւ տպաւորութիւն մը չըրաւ Պրէնվիլիէ մարքիզին վրայ : Սա
շարունակեց իւր շուայլ կեանքը առանց փոյթ ունենալու իւր
կնոջ ըրածին վրայ : Բայց պարոն Տրէօ-ա'Օպրէյ այսպէս չը-
րաւ . դատաւորի աշնուականութեան յարգը ճանչնալով և իւր
աղջկան խառնակ կեանքէն դայթակղելով որ կրնար իւր պատ-
ւոյն արատ բերել, հրամանագիր մը ձեռք ձգեց Սէնթ-Քրուան
ձերբակալելու համար ուր ուրեք որ հանդիպէր : Մեր ընթեր-
ցողները տեսան թէ ինչպէս գործադրուեցաւ արքայական այս
հրամանը երբ Սէնթ-Քրուա Պրէնվիլիէ մարքիզուհին հետ
կառքին մէջ կը գտնուէր : Դժուարին չէ մակարբերել Սէնթ-
Քրուաի բարկութիւնը երբ փողոցին մէջ այսպէս ձերբակալե-
ցաւ . և թէև ամբողջ ճամբորդութեանը մէջ բառ մը չ'արտա-
սանեց, սակայն դիւրին էր գուշակել որ տհաւոր փոթորիկ մը
կը դիզուէր իւր հոգւոյն մէջ և որ մտ էր անշուշտ փայլատա-
կելու : Սակայն պարոնը մինչև վերջը անտարբեր ցցուց ինքը-
զինքը ոչ միայն բանտին մահագուշակ դրները բացուելու դոյ-
ուելու ատեն որ դժոխոց դրներու նման մահկանացուն բոլոր
յոյսերը սեմոյ վրայ կը կլլէին, այլ և կառավարչին իրեն հարց-
մանց պատասխանելու ատեն : Իւր ձայնը անվիշտ երեցաւ և
իւր ձեռքերը առանց դողդոջելու ստորագրեցին բանտարկու-
թեան արձանագիրը երբ իրեն ներկայացուցին . անմիջապէս
բանտապահ մը կառավարչին հրամանին համեմատ հրաւի-
րեց բանտարկեալը որ ետևէն երթայ և ցուրտ ու խոնաւ անց-
քերու մէջէն ուր լոյսը դուն ուրեք կ'երևէր իսկ օդ՝ ոչ եր-
բէք, անցնելէ ետքը սենեկի մը դուռը բացաւ ուր Սէնթ-Քրուա

զիւ ներս մտնելով դուռը վրան գոցուեցաւ :

Նիգերու շառաչունէն Սէնթ-Քրուա ետին նայեցաւ . բան-
տապահը առանց լոյսի թողած էր զինքը լուսնոյ լոյսը բաւա-
կան համարելով, որ ութը կամ տասը ոտք բարձր պատուհա-
նի մը վանդակապատին մէջէն սահելով տգեղ անկողնոյ մը վը-
րայ կը տարածէր իր լոյսը, սենեկին միւս մասը խոր մթու-
թեան մէջ թողլով : Բանտարկեալը պահ մը ոտքի վրայ կեցաւ
ականջը իր չորս կողմը տարով և երբ քայլերու ձայնը անհե-
տացաւ, միայնակ լինելուն վրայ համոզուելով և սրտի զայրոյթ
մը զգալով, վայրի կենդանւոյ նման մռնչմամբ մը անկողնոյն վը-
րայ ինկաւ, անիծելով զմարդիկ որ իւր հեշտալիք կենաց մէ-
ջէն կորզած էին զինքը բանտին մէջ նետելու համար, անիծե-
լով նաև զՍատուած որ թոյլ կուտար այս ամենուն, և իւր յու-
սահատութեան մէջ յօգնութիւն կը կարդար ամեն զօրութիւն
և իշխանութիւն որ կարող էին վրէժխնդիր լինել և ազատութիւնն
իրեն վերադարձնել :

Նոյն վայրկենին իբրև թէ իւր խօսքերը երկրին արգան-
դէն դուրս հանէին, վտիտ, գունաթափ, երկայնահեր և
սև բաճկոնակով մարդ մը սենեկին դէպ ի լուսաւոր կողմը
յառաջացաւ և Սէնթ-Քրուայի անկողնոյն մօտեցաւ : Այս
տեսիլը, բանտարկեալը որքան ալ արիասիրտ լինէր, այն-
պէս լաւ կը պատասխանէր իւր խօսքերուն որ այս ժամանա-
կին մէջ յորում մոգութեան և հմայութեան խորհուրդնե-
րուն տակաւին կը հաւատային, բանտարկեալը բնաւ տարակոյս
չունեցաւ որ մարդկային սեռին այս թշնամի անձը անշուշտ
զինքը լած ու դէպ ի իւր ձայնը վաղած եկած է : Ուստի ան-
կողնոյն մէջէն ցատքելով ոտք ելաւ և սկսաւ իւր սուրին երա-
խակալը փնտռել այն տեղը ուր երկու ժամ առաջ թողած էր,
և այս խորհրդաւոր և ցնորական էակը ցորչափ կը յառաջէր,
այնչափ բանտարկելոյն մաղերը կը քստմնէին և պաղ քրտինք մը
կը հոսէր իւր ճակտէն : Վերջապէս ուրուականը կանկ առաւ և
ինքն ու բանտարկեալը վայրկեան մը լուռ մնացին աչքերնին ի-
րարու վրայ յառելով : Այն ատեն խորհրդաւոր էակը լուռ-
թեան կապը խզեց և ազօտ ձայնիւ մը :

« Ո՛վ երիտասարդ, ըսաւ, դուն գոթիւքէն հնարք մը խընդ-
րեցիր զքեզ դատապարտող անձերէն վրէժ լուծելու և Սատու-

ծոյ դէմ մարտնչելու համար որ զքեզ կը լքանէ : Այս
ես ինքնս կարող եմ քեզի պարգևելու . զայն ընդունելու ար-
ութիւնն ունիս :

— Բայց ամենէն առաջ ո՞վ ես դու, հարցուց Սէնթ-Քրուա :

— Ի՞նչ փոյթ է քեզ իմ ո՞վ ըլլալս գիտնալ, կրկնեց ան-
ծանօթը, մինչ դու զիս կը կանչես և ես կուգամ և ուղածդ
քեզ կը պարգևեմ :

— Բայց ի՞նչուս պէտք, պատասխանեց Սէնթ-Քրուա խոր-
հելով միշտ որ դերմարդկային էակի մը հետ կը խօսի . երբ
այսպիսի դաշինք մը դնել կուզուի, պէտք է գիտնալ թէ որո՞ւ-
հետ է գործերնիս, և ասոր վրայ հարկ չէ բարկանալ :

— Շատ լաւ, որովհետև գիտնալ կուզես, ըսաւ օտարա-
կանը, ըսեմ ուրեմն . ես իտալացի էքզիլիին եմ :

Սէնթ-Քրուա վերատին դող մը զգաց իւր երակաց մէջ . զի
դժոխային տեսիլէ մը ահաւոր իրականութեան կը դառնար :
Եւ արդարև իւր լած անունը հռչակաւոր և անուանի էր ոչ մի-
այն բոլոր Գաղղիոյ այլ և բովանդակ իտալիոյ մէջ : Սա բազմա-
թիւ թունաւորութեանց կասկածներով զորս չէին կրցած ապա-
ցուցանել, Հռովմէն արտաքսուելով, Փարիզ եկած էր ուր ան-
միջապէս իւր հայրենի երկրին նման իշխանութեան ուշադրու-
թիւնը հրաւիրած էր իւր վրայ . բայց որքան ի Հռովմէնոյն քան
և ի Փարիզ Թրօֆանայի և Ռընէի աշակերտը չէին կրցած յաղ-
թահարել : Եւ սակայն թէև ապացոյցները կը պակսէին, բայց
ընդհանուր բարոյական այնպիսի մեծ համոզում մը կար այս
անձին վրայ, որ զանի ձերբակալել հարկ կը լինէր : Ուստի հը-
րամանադիր մը կնքուեցաւ և էքզիլի ի Պասթիլլ քստրուեցաւ,
ուր կը դանուէր վեց ամէն ի վեր երբ Սէնթ-Քրուա հոն բան-
տարկուեցաւ : Եւ որովհետև այն ատեն բանտարկեալք բազմա-
թիւ էին, կառավարիչը նոր հիւրը հնոյն սենեկին մէջ դրած
և էքզիլին Սէնթ-Քրուաի հետ միացուցած էր առանց խորհե-
լու թէ երկու սատանաներ իրարու հետ կը զուգէր : Ընթեր-
ցողք մնացեալը դիւրաւ կրնան հասկնալ : Սէնթ-Քրուա սեն-
եակը մտնելէ ետքը, ուր բանտապահը առանց լոյսի թողած էր
զինքը, մութին պատճառաւ իւր երկրորդ սեղանակիցը չէր
կրցած տեսնել . այն ատեն զայրոյթ զգալով, և իւր անէծք-
ները էքզիլի տեսութիւնը գրգռելով, սա՛ պատեհ առիթ

էր զօրաւոր և անձնուէր աշակերտ մ'ունենալ, որ
տախն ելնելով կրնար զինքն ալ հանել և կամ գոնէ իւր վրէ-
ժը լուծել եթէ մշտնջենաւորապէս բանալ պիտի մնար ինքը :
Սէնթ-Քրուաի՝ իւր սենեկակցին վրայ ունեցած տժգոհու-
թիւնը երկար չը տևեց և ճարտարագէտ վարպետը արժանա-
ւոր աշկերտ մ'ունեցաւ : Սէնթ-Քրուա որ բարիէ և չարէ ,
բարեմասնութեամբք և թերութեամբք , մոլութեամբ ու առա-
քինութեամբ խառն տարօրինակ բնաւորութիւն մ'ունէր , կե-
նաց այն դերագոյն կէտին հասած էր յորում մարդիկ իւրեանց
նմանիներուն յաղթանակել կը պարտին : Եթէ իւր դատուած
վեճակին մէջ հրեշտակ մը ներկայանար իրեն , թերևս զինքն
առ Սատուած տանէր . սակայն դե մը հանդիպեցաւ իրեն որ
զինքն առ Սատան առաջնորդեց :

Էքզիլի տգէտ թունատու մը չէր , այլ թունի վարպետ ար-
ուեստաւոր մ'էր ինչպէս էին Մէտիլիները և Պորճիայք : Մար-
դասպանութիւնը իրեն համար արհեստ մ'էր զոր դրական և
հաստատուն կանոններով կը գործադրէր , և այն կէտին հասած
էր որ շահուն համար չէր գործածեր զայն , այլ փորձառական
անդիմադրելի փափաք մը կը մղէր զինքը : Սատուած ստեղ-
ծումը միմիայն աստուածային կարողութեան սահմանած էր ,
իսկ մահը և ջնջումը՝ մարդկային սեռին : Այսպէս մարդ՝ մա-
հացնելով և ջնջելով , ինքզինքը Սատուծոյ հաւասար կը համա-
րի : Ահա այսպիսի գոռոզութիւն մ'ունէր Էքզիլի , ոչնչութեան
գաղտնածածուկ քիմիագէտը , որ կենաց գաղտնիքը որոնել
ուրիշներու թողլով , ինք միայն մահուան գաղտնիքը գտած
էր :

Սէնթ-Քրուա պահ մը դեղեկեցաւ . բայց վերջապէս իւր
ընկերոջ կատականաց զիջաւ , որ գաղղիացիները կամբաստա-
նէր ըսելով թէ սոքա մինչև իսկ իրենց ոճիրներուն մէջ խոստ-
մնապահութիւն կը գործածեն , և այսպէս իրենք իսկ իրենց
վրէժխնդրութեան մէջ բռնուելով թշնամոյն հետ կը մեռնին ,
մինչդեռ կարող էին անոր մահուամբը իրենք ապրիլ և արհա-
մարհել անոր մահը :

Գաղղիական այս բուռն ընթացքին , որով շատ անգամ մար-
դասպանը իւր տուած մահէն աւելի անողորմ մահ մը կը գտնէ ,
Էքզիլի իբր հակապատկեր ներկայացուց ֆիօրէնցիական խո-

րամանկութիւնը որ թէև ժպտող բերան մը , իսկ անողորմ թոյս
մ'ունի : Անոր յայտնեց մի ըստ միովէ այն փոշիները և ըմպե-
լիները որոց մէկ քանին այնքան յամր կը գործեն որ հիւան-
դը երկարատե հեծեծանքներով կը մեռնի , իսկ այլք այնքան
զօրաւոր են և արագաքայլ որ կայծակի նման կը սպաննեն ա-
ռանց ժամանակ տալու որ սպանեայր ճիչ մ'արձակէ : Սէնթ-
Քրուա տակաւ առ տակաւ միտում ցըցուց այս սոսկալի խաղուն
որ ամէնուն կեանքը մէկ մարդու մը ձեռացը մէջ կը զնէր :
Ուստի սկսաւ Էքզիլի փորձառական դասերը ուսնիլ . այնպէս
որ ինքն ալ բաւական յաջողակութիւն ստացաւ այս արհեստին
մէջ , և երբ տարի մը վերջը Պասթիլէն դուրս ելաւ , աշակեր-
տը գրեթէ իւր վարպետին հաւասարած էր :

Սէնթ-Քրուա վերստին ընկերականութեան մէջ մտաւ յորմէ
ժամանակ մը տարագրեալ էր , այս անգամ մահագուշակ գաղա-
նիքի մը վարպետը լինելով , որուն միջոցաւ կարող էր իւր ըն-
դունած բոլոր չարեաց փոխարէնը հատուցանել : Քիչ մը վերջը
Էքզիլի ալ բանտէն դուրս ելաւ , չգիտցուիր թէ ինչ միջոցով
և եկաւ Սէնթ-Քրուան գտաւ որ իւր գործակատար Մարթէն
տը Պէօյլի անուամբ սենեակ մը վարձեց անոր . այս սենեակը
Մօպէրի հրապարակին ձիւ վաճառականաց անել փողոցին մէջն
էր և Պիւնէ անուն կնոջ մը կը պատկանէր :

Չգիտցուիր թէ Պրէնվիլիէ մարքիզուհին Սէնթ-Քրուան
տեսներու պատեհութիւնն ունեցաւ արդեօք , մինչ Պասթիլի
մէջ բանտարկեալ էր սա , բայց այս միայն յայտնի է որ բան-
տարկելոյն ազատելէն անմիջապէս վերջը երկու տարիաւորք
առջինէն աւելի սկսան սիրել զիրեար : Սակայն անգամ մը փոր-
ձեալ ըլլալով , և այսուհետեւ ալ երկիւղ չունենալու համար որո-
շեցին Սէնթ-Քրուաի ուսած գիտութիւնը կարելի եղածին չափ
շուտով գործադրութեան դնելը : Ուստի առաջին զոհը Պ. ա' Օպրէյ
եղաւ նոյն իսկ իւր աղջկան ընտրութեամբ , որ թէ անոր խիստ
ձեռքէն ազատիլ և թէ հայրական ժառանգութեան տիրանալ
կուզէր . զի իւր հարստութիւնը գրեթէ վատնած էր ամուսինը :

Եւ սակայն այսպիսի հարուած մը անվրիպելի լինելը հասկը-
նալու համար մարքիզուհին Սէնթ-Քրուաի թոյնը ուրիշի մը
վրայ փորձել ուզեց : Ուստի օր մը երբ իւր սենեկապանը որոյ
անունը Փրանսուազ Բուսէլէր , իւր նախածայն ընելէ ետքը

սենեակը կը մտնէր , կտոր մը խոզի ապուխտ և հաղարջէ անու-
շեղէն տուաւ , որպէս զի ուտէ : Աղջիկը առանց ո և է կասկա-
ծի կերաւ . բայց գրեթէ անմիջապէս հիւանդացաւ , սոսնձի
Դէլ ցաւ Դէլ Դէլ , «յուէն» որ կործեն զնորասեղով սերու կը խայտէին :
Սակայն աղջիկը չը մեռաւ . իսկ մարքիզուհին տեսնելով որ
թունին զօրութիւնը աւելցնել պէտք է , Սէնթ-Քրուաի տուաւ
որ քանի մը օրէն վերջը ուրիշ մը բերաւ :

Ժամանակն եկած էր զայն գործածելու : Պ. տ'Օպրէյ իւր աշ-
խատութիւններէն խոնջած Օֆրմոնի դղեկին մէջ հանգիստ ք-
նելու պիտի երթար . Պրէնվիլիէ մարքիզուհին ուղեց ի միասին
երթալ . Պ. տ'Օպրէյ կարծելով որ իւր աղջկան՝ Սէնթ-Քրուաի
հետ ունեցած յարաբերութիւնները բոլորովին վերջացած են ,
ուրախութեամբ ընդունեց :

Օֆրմոն առանձին տեղ մ'էր խիստ յարմար նմանօրինակ ոճի
մը գործադրելու : Դղեակը էկ անտառին մէջ տեղը կանդ-
նած ըլլալով Քոմբիէնէն 3 կամ 4 փարսախ հեռի , թոյնը արագ
յառաջդիմութիւն մը կրնար ընել մինչև որ օգնութիւնք հաս-
նէին որոնք ապարդիւն ալ կրնային ըլլալ :

Պ. տ'Օպրէյ իւր աղջկան և ծառայի մը հետ մեկնեցաւ :
Մարքիզուհին իւր հօրը այնպիսի գորով և խնամք ցրցուց ճամ-
բորդութեան միջոցին որոյ նմանը երբէք չէր ըրած : Իսկ Պ.
տ'Օպրէյ նման Քրիստոսի որ առանց զաւակ ունենալու հայրա-
կան սիրտ մը կը կրէր , իւր աղջկան գղջումը տեսնելով չափա-
զանց կը սիրէր զանիկա իբր թէ երբէք մեղանչած չէր :

Յայնժամ մարքիզուհին օգնութեան կոչեց այն ահաւոր տե-
սիլը որուն վրայ արդէն խօսեցանք . անդադար իւր հօրը քով
կը նստէր , անոր սենեկին մօտ կը ննջէր , անոր հետ մեկտեղ
կ'ուտէր , լիուլի կը խնամէր , կը դգուէր և ամեն նախազգոյշ
միջոցներ կը գործածէր և չէր ուղեր որ իրմէ զատ ոչ ոք ծա-
ռայէ . բաց ասկէ իւր եղբունական մտածութեան մէջ զուարթ
և գեղաձիծաղ դէմք մը կը ցցունէր որուն վրայ կասկածոտ աչք
մ'անգամ գորով և որդիական սէր կը կարդար : Այս դիմակին
տակ ծածկուած՝ իրիկուն մը թունաւոր արգանակ մը տուաւ իւր
հօրը : Պ. տ'Օպրէյ անոր ձեռքէն առաւ , աղջիկը տեսաւ որ
հայրը բերնին կը մօտեցնէ . անոր աչքերուն նայեցաւ մինչև իր
կուրծքին խորը և անոր պղնձէ դէմքին վրայ բնաւ չերևցաւ

այն անձկութիւնը որ քիչ մը վերջը իւր սիրտը պիտի ճնշէր
եւ երբ Պ. տ'Օպրէյ ամենը խմեց , աղջիկն առանց դողալու ձեռ-
քէն գաւաթն առաւ և իւր սենեակը քաշուեցաւ վախճանին
սպասելով :

Ըմպելիքը իւր աղդեցութիւնը շուտով գործադրել սկսաւ .
մարքիզուհին լսեց որ իւր հայրը հառաչանքներ ապա հեծե-
ծանքներ կ'արձակէ և վերջապէս չկրնալով իւր ցաւոցը դիմա-
նալ , բարձր ձայնով իր աղջիկը կանչեց . մարքիզուհին ներս մը-
տաւ :

Այս անգամ աղջկան դէմքին վրայ անհանգստութիւն մը
կը նշմարուէր : Պ. տ'Օպրէյ պարտաւորեցաւ իւր աղջիկը յու-
սադրել թէ բան մը չունի . ինքն ալ կը կարծէր թէ թեթև հի-
ւանդութիւն մը եկած է վրան և չէր ուղեր որ բժիշկ կանչեն :
Վերջապէս ստամոքսի ցաւով սկսաւ սոսկալի կերպով ժայթքել ,
այնպէս որ իւր աղջկան աղաչանացը լսելով հրաման ըրաւ որ
օգնութիւն փութացնեն : Առաւօտեան ժամը ութին բժիշկ մ'ե-
կաւ . բայց դիտութեան համար ինչ որ կարելի էր ընել , ժա-
մանակը անցած էր . բժիշկը Պ. տ'Օպրէյի պատմութենէն այն-
պէս հասկցաւ թէ անմարտողութեան մը արդիւնք է , ուստի
գեղ տուաւ և Քոմբիէյն վերադարձաւ :

Մարքիզուհին ամբողջ օրը հիւանդին քովէն չը հեռացաւ .
և երբ գիշերը վրայ հասաւ , հօրը սենեկին մէջ անկողին մը շի-
նել տուաւ և ըսաւ որ ինքը միայնակ պիտի հսկէ , և սկսաւ
հիւանդութեան հետզհետէ յառաջդիմութիւնը քննել և իւր
աչքերովը դիտել մահուան և կենաց կռիւը որ իր հօրը մարմ-
նոյն մէջ կը կատարուէր :

Հետեւեալ օր բժիշկը նորէն եկաւ . Պ. տ'Օպրէյ աւելի գէշ
էր . ժայթքելը դադրած բայց ստամոքսի ցաւը սաստկացած
էր և տարօրինակ ջերմութիւն մը անոր աղիքները կ'այրէր . բը-
ժիշկը այնպիսի հրահանգ մը տուաւ որ հիւանդին Փարիզ
վերագառնալը հարկ կ'ըլլար : Արդէն այնքան տկարացած էր որ
վարանեցաւ թէ արդեօք կարելի էր Քոմբիէյն վերագառնալ .
բայց մարքիզուհին աւելի կատարեալ խնամք տանելու պէտ-
քին վրայ պնդելով , Պ. տ'Օպրէյ հաւանեցաւ իր տունը վերա-
դառնալու :

Հիւանդը ճամբորդութեան միջոցին կառքին մէջ ընկող-

մանեալ էր գլուխը իր աղջկան ուսին կրթնցնելով : մարքիզու-
հին մինչև վերջն այսպէս շարունակեց և ամբողջ ճամբորդու-
թեան մէջ մի և նոյն գորովը ցցուց . վերջապէս Պ. տ'Օպրէյ Փա-
րիզ հասաւ : Ամեն բան մարքիզուհիին բաղձանացը համեմատ
կընթանար . թատերաբեմը փոխուած էր . բժիշկը որ հիւան-
դութեան նշաններ տեսած էր , հոգեւար.ք վիճակը չպիտի կա-
րենար տեսնել . ինչպէս նաև ոչ մէկ աչք մ'ալ հիւանդու-
թեան յառաջանալը տեսնելով չպիտի կարենար պատճառը հաս-
կընալ . խուզարկութեան թելը կիսով չափ խզուած էր . երկու
մասերը շատ հեռացած էին . . . :

Հակառակ ամեն փութաջան ինամոց Պ. տ'Օպրէյի վիճակը
հետզհետէ կը վատթարանար . մարքիզուհին հաւատարիմ լի-
նելով իւր պաշտօնին ժամ մը չը հեռացաւ անոր քովէն . վեր-
ջապէս չորս օր հոգեւար.քէ վերջը իւր աղջկան բազկացը մէջ
մեռաւ օրհնելով իւր սպանիչը :

Այն ատեն մարքիզուհիին վիշտը բուռն զգացումներով և
խորին հեծեծանքներով սկսաւ բազմապատկիչ այնպէս որ իւր
եղբայրներուն ցաւը իրենին քով աննշան կ'երևար : Եւ սակայն
որովհետև ոճիրին վրայ ոչ ոք չէր կասկածեր, գիակի քննութիւն
չկատարուեցաւ և մարմինը հողին տրուեցաւ առանց ամենա-
թեթև կասկած մը ծագելու աղջկան վրայ :

Սակայն մարքիզուհին իւր նպատակին կիսով չափ հասած
էր . իւր սիրահարութիւնը շարունակելու համար ազատ աւ-
պարէզ մը ունեցած էր . բայց իւր հօրը հարստութիւնը յուսա-
ցածին չափ շահաւոր չէր եղած իրեն, անոր ստացուածոց մեծա-
դոյն մասը պաշտօնին հետ մէկտեղ իւր անդրանիկ եղբօրը և
երկրորդ եղբօրը վիճակելով , որ խորհրդարանին մէջ խորհրդ-
դական էր . ուստի մարքիզուհիին վիճակը հարստութեան մա-
սին սակաւիկ ինչ բարւոքեցաւ :

Իսկ Սէնթ-Քրուա ազատ և զուարճալի կեանք մը կ'անցու-
նէր և թէև հարստութեան համբաւ մը չունէր, սակայն Մարթէն
անունով գործակատար մը և Ժօրժ լա Բիէռ , Լաչօսէ անու-
նով երեք ծառայ ունէր, ինչպէս նաև կառ.ք մը և ձիեր . և գի-
շերային այցելութեանց համար սովորական գեսպակակիրներ . և
որովհետև երիտասարդ էր և գեղեցիկ , ուստի գծուարին չէր
հասկնալ թէ ինչ էր այս գեղխութեանց ազբիւրը : Այս ժամա-

նակին մէջ սովորութիւն էր որ վայելուչ հագուած դեղեցիկ
երիտասարդները բանի մը կարօտութիւն չունենան . ըստ այ-
սըմ Սէնթ-Քրուայի համար կ'ըսէին թէ փիլիսոփայական քարը
գտած էր :

Իւր աշխարհային յարաբերութեանց մէջ շատ մարդերու
հետ բարեկամութիւն հաստատած էր որոնք ազնուականու-
թեամբ կամ հարստութեամբ նշանաւոր էին . այս վերջիննե-
րուն մէջ կը գտնուէր Բէշ-տը-Բնօթիէ անունով անձ մը որ կը-
ղերականութեան ընդհանուր հիւրնկալը և Լանկրտօքի իշխա-
նութեանց արկղին գանձապահն էր . միլիօնաւոր հարուստ մ'էր
և մին այն մարդիկներէն որք ամեն յաջողութիւն ունին և ի-
րենց դրամին զօրութեամբը օրէնքներ կը սահմանեն այն բա-
ներուն զորս յԱստուծոյ միայն կընդունին :

Եւ արդարև Բէշ-տը-Բնօթիէ, Սլիպէռ անուն մէկու մը հետ
դործով և շահով կապուած էր որ իւր առաջին գործակալն էր
և որ յանկարծ կաթուածահար մեռաւ . այս կաթուածը Բնօ-
թիէ իմանալով անոր ընտանիքէն առաջ , ընկերութեան վերա-
բերեալ թղթերը չգիտցուիր ինչ կերպով անյայտ եղան և Ա-
լիպէռին կիսն ու տղան սնանկացեալ կործանեցան :

Սլիպէռին փեսան Մակաէլինի ամուսինը այս մահուան վրայ
անորոշ կասկածներ ունեցաւ և ուզեց քննութեան ենթարկել .
հետեւաբար սկսաւ խուզարկութիւններ ընել . բայց խուզարկու-
թեանց մէջ յանկարծ իւր կեանքը կնքեց :

Մէկ վայրկենի մէջ երջանկութիւնը կարծես պիտի հեռա-
նար իւր նպաստաւորեալ անձէն . Պ. Բնօթիէ Պ. Տըմէնիվիլէ-
թի յաջորդելու անզուսպ փափաք մ'ունէր որ կղերին ընդու-
նողն էր . այս պաշտօնը 60,000 ոսկեոյ ծախքի մը կը կարօտէր և
Բնօթիէ գիտնալով որ Պ. տը Մէնիվիլէթ անկէ պիտի հրաժարէր
ինպաստ իւր առաջին գործակատարին որոյ անունն էր Բիէռ-
Հանիվէլ Սէն-Լօրանի պարոնը , ամէն միջոց ի գործ դնել սկը-
սած էր այս պաշտօնը ի վնաս պարոնին ծախու առնելու հա-
մար . բայց Սէն-Լօրանի պարոնը զոր կղերականք կը սիրէին և
կը պաշտպանէին , ձրի ստացած էր այս պաշտօնը , որոյ նմանը
երբէք տեսնուած չէր : Այն ատեն Բնօթիէ 40,000 սկուդ ա-
ռաջարկած էր տալ այս պաշտօնին կէսը իրեն յանձնուելու հա-
մար . բայց Սէն-Լօրան մերժած էր : Եւ սակայն իրենց յարա-

բերութիւնը ընդհատած չէր և կը շարունակէին իրարու հետ տեսնուիլ. այլուստ Բնօթիէ հաստատամիտ և յամառ մէկը ըլլալով ոչ ոք չէր տարակուսեր որ օր մը իւր բաղձացած պաշտօնը ձեռք ձգելու անպատճառ պիտի յաջողէր :

Անոնք որ քիմիագիտական գաղտնեաց չէին հաւատար, կը սէին թէ Սէնթ-Քրուա Բնօթիէի հետ գործ կընէ :

Պ. տ'Օպրէյի մահուան սգոյ ժամանակը անցած լինելով Սէնթ-Քրուաի և մարքիզուհիի յարաբերութիւնք վերստին սկըսած էին . իւր եղբայրները իրենց կրտսեր քրոջը միջոցաւ որ կարմելեանց վանքը կը գտնուէր, տիկին Պրէնվիլիէի այս մասին յանդիմանութիւններ ուղղեցին . մարքիզուհին տեսաւ որ իւր հայրը մեռնելով իւր ընթացքին վրայ հսկելու պաշտօնը եղբայրներուն վիճակած էր : Հետեւաբար մարքիզուհիին առաջին տճրագործութիւնը գրեթէ ապարդիւն եղած էր . սա ուզած էր իւր հօրը յանդիմանութիւններէն ազատիլ և անոր հարստութիւնը ժառանգել . սակայն հարստութիւնը իւր եղբայրներուն մէջ բաժնուելով փոքրիկ բաժին մ'իյնկած էր իրեն որով հազիւ կարող էր իւր պարտքերը վճարել . և ահա նախկին յանդիմանութիւնները վերստին կը նորոգէին իւր եղբայրներուն բերանով որոյ մէկը քաղաքային տեղակալի պաշտօն ունենալով կրնար զինքն այս երկրորդ անգամ իւր սիրահարէն բաժնել :

Ուստի պէտք էր այս բաներուն առաջին առնուլ . Լաչօսէ Սէնթ-Քրուաի քովէն ելնելով 3 ամիս վերջը մարքիզուհիին միջոցաւ խորհրդականին քով ծառայութեան մտաւ որ քաղաքային տեղակալ եղբօրը հետ կը բնակէր :

Այս անգամ պարոն տ'Օպրէյը մեռցնող թոյնին նման արագ թոյն մը գործածելը աղէկ չէր լիներ . զի մէկ ընտանիքի մէջ այսքան արագահաս մահ պատահելով կրնար կասկած յարուցանել : Ուստի սկսան գործել, բայց ոչ կենդանեաց վրայ . զի այլ և այլ գործարանաւորութեանց մէջ գտնուած տարբեր անդամները կրնային դիտութիւնը ի դերեւ հանել, այլ սկսան առաջնոյն նման մարդկային սեռին վրայ կատարել իրենց փորձը :

Մարքիզուհին բարեպաշտ և մարդասէր կին մը ճանչցուած էր, շատ քիչ անգամ կը պատահէր որ դժբաղդութեան մը ենթարկուէր և միտիթարութիւն չը գտնէր : Աւելին կար . հիւանդաց ծառայելու փափաքող անձնուէր աղջիկներու հետ եր-

բեմն հիւանդանոցները կայցելէր և գինի ու դեղ կը զրկէր անոնց : Ուստի բնաւ զարմանալի չերեցաւ երբ սա իւր սովորութեան համեմատ Հիւանդանոցի մէջ տեսնուեցաւ . այս անգամ նկանակ և անուշեղէն բերած էր ապաքինելոց համար . իւր պարգևները ամէն ատեն երախտագիտութեամբ կընդունուէին :

Ամիս մը վերջը կրկին Հիւանդանոցը գնաց և քանի մը հիւանդներու որոց վրայ մասնաւոր համակրութիւն ունէր, հարցումներ ուղղեց և տեղեկութիւններ քաղեց : Իւր այցելութենէն ի վեր հիւանդութիւննին կրկներ էր . և հիւանդանոցին մէջ համաճարակ ախտ մը տիրած էր : Մահացու նուազում մը տարօրինակ մաշողութեամբ ի դերեղման կառաջնորդէր զանոնք : Մարքիզուհին բժիշկներուն հարցուց . սակայն բժիշկները չկրցան բան մ'ըսել . զի հիւանդութիւնը բոլորովին անծանօթ էր իրենց և բժշկական արուեստին ամէն հնարքները ի դերեւ կը հանէր :

Տասնևհինգ օր վերջը վերստին եկաւ . հիւանդներէն ումանք մեռած էին . ուրիշներն ալ յուսահատական վիճակի մէջ յոգիս ապաստան եղած էին և կենդանի ոսկր դառնալով, մարդկային գոյութեան մասերէն ոչ այլ ինչ ունէին բայց ձայն, աչք և շունչ մը :

Երկու ամիս վերջը ամէնքն ալ մեռած էին և բժշկութիւնը դիակաց զննութիւն ընելովն հանդերձ բոլորովին կուրացած էր, ինչպէս եղած էր անոնց հոգեւարքի ատեն :

Այս փորձերը աներկեան էին . ուստի Լաչօսէ հրաման ընդունեցաւ որ իւր ստացած հրահանգը գործադրէ : Օր մը քաղաքային տեղակալը ծառան կոչելով, Լաչօսէ ներս կը մտնէ և կը տեսնէ որ պարոնը իւր գրագրին հետ կաշիտաթի որոյ անունն էր Քուսթէ . Պ. տ'Օպրէյի ուզածը գաւաթ մը ջուր և գինի էր : Լաչօսէ վայրկեան մը վերջը տիրոջը սենեակը վերադարձաւ անոր ուղածը տալու համար :

Քաղաքային տեղակալը գաւաթը իւր շրթանցը մտնեցուց և առաջին կաթիլին մէկդի առաւ պոռալով . « Ինչ էր տուածդ, թշուառական . կարծեմ զիս թունաւորել կուզես » : Յետոյ իւր գրագրին դառնալով, « նայէ, ըսաւ, Քուսթէ, տես ինչ կայ մէջը » : Իրագրիւր ըմբռնիքէն քանի մը կաթիլ խահուէի

դ գալի մը մէջ կաթեցուց և բերնին ու քթին մօտեցուց : Ըմպելին արջասպի (զած) հոտը և դառնութիւնն ունէր : Այս միջոցին Լաչօսէ դէպ ի գրագրին մօտենալով ըսաւ թէ ինչ ըլլալը հասկցաւ ինքը , այն է թէ խորհրդականին սենեկապանին մէկը նոյն առաւօտ դեղ առած էր և ինքը առանց ուշադրութիւն ընելու սխալմամբ իւր ընկերոջ գաւաթը բերած էր : Յետոյ գաւաթը գրագրին ձեռքէն առնելով բերնին մօտեցուց և զանի ճաշակել կեղծելով ըսաւ թէ ճիշդ այն է , զի հոտը մի և նոյն է , և անմիջապէս կրակարանին մէջ նետեց : Եւ որովհետեւ քաղաքային տեղակալը ըմպելիէն մեծ քանակութիւն մը խմած չէր որպէս զի անհանդիստ լինէր , ուստի այս պարագան անմիջապէս մոռցաւ և առաջին անգամ իւր մտքին մէջ ծագած կասկածը բոլորովին փարատեցաւ : Իսկ Սէնթ-Քրուա և մարքիզուհին տեսնելով որ հարուածը վրիպեցաւ , իրենց վրէժխրնդրութեան շատեր զոհ տալու համար որոշեցին ուրիշ միջոց մը գործադրել :

Երեք ամիս անցան առանց պատեհ առիթ մը ներկայանալու . բայց վերջապէս 1670 ապրիլ ամսոյ առաջին օրերուն մէջ քաղաքային տեղակալը իւր խորհրդական եղբայրը հրաւիրեց Ջատկական տօնը ի Պօսի Վիլէգուաի ազարակին մէջ մէկտեղ կատարելու համար : Լաչօսէ տիրոջը հետ գնաց և իւր մեկնելու ատեն նոր հրահանգներ ընդունեցաւ :

Ամարանոցը հասնելուն հետեւեալ օրը աղանեակէ կարկանդակ մը պատրաստուած էր սեղանին վրայ . եօթը հոգի յիշեալ կարկանդակէն ուտելով , ճաշէն վերջը հիւանդացան . իսկ երեք հոգի չուտելով բնաւ անհանգստութիւն մը չզգացին :

Անոնք որոնց վրայ յիշեալ թունաւոր կերակուրը սաստիկ ներզործութիւն մ'ըրած էր , քաղաքային տեղակալը , խորհրդականը և պահակաց ասպետն էին : Քաղաքային տեղակալը կամ մեծ քանակութեամբ մը ուտելէն և կամ թոյնը իւր վրայ աւելի սաստիկ ազդեցութիւն մ'ընելէն ամենէն առաջ ինքն սկսաւ ժայթքել . երկու ժամ վերջը խորհրդականը մի և նոյն նշաններն ունեցաւ . իսկ ասպետը և միւսները քանի մը օր ըստամոքսի սոսկալի ցաւ մը զգացին . բայց առաջին անգամ մի և նոյն ծանր վիճակը չունեցան զոր ունէին երկու եղբարք :

Այս անգամ ալ ինչպէս ամէն ատեն , բժշկաց օգնութիւնք

անզօր եղան : Ապրիլ 12 ին այսինքն թունաւորուելէն
 5 օր վերջը քաղաքային տեղակալը և խորհրդականը Փարիզ վերգարձան այնքան կերպարանափոխ եղած որ տեսնողը կը կարծէր թէ երկար և անողորմ հիւանդութիւն մը կրած էին : Իսկ տիկին մարքիզուհի որ ամարանոց կը գտնուէր , բնաւ քաղաք չեկաւ ցորչափ տեւց իւր եղբայրներուն հիւանդութիւնը : Իժիշկները առաջին խորհրդակցութեան զոր քաղաքային տեղակալին վրայ ըրին , բոլորովին յուսահատեցան : Մի և նոյն հիւանդութեան նշաններն էին որոյ հետեւանօք մեռած էր հայր տ'Օպրէյ : Կարծեցին թէ ժառանգական և անծանօթ հիւանդութիւն մը կայ այս ընտանեաց մէջ և հիւանդին վիճակին վրայ յուսահատեցան :

Արդարեւ հիւանդին վիճակը երթալով գէշցաւ : ամէն տեսակ մահ անդիմադրելի զգուանք մը կզգար և փոխելը երբէք չէր դադրեր : Իւր կենաց վերջին օրերուն մէջ շարունակ կը գանգատէր ու կը ցաւէր իբրու թէ կուրծքին մէջ բոցակէզ վառարան մը կը գտնուէր և զինքն ի ներքուստ այրող բոցը կարծես աչքերէն դուրս կը ցայտէր , որք իւր մարմնոյն միակ մասը մնացած էին . վասն զի թէև մարմինը տակաւին կենդանի , սակայն մնացեալ անդամները բոլորովին դիակ մը դարձած էին : Վերջապէս 1670 յունիս 17 ին մեռաւ . թոյնը եօթնասուուն և երկու օրուան մէջ իւր գործն աւարտած էր :

Այս անակնկալ մահուան վրայ կասկածներ սկսան զարթնուլ . ուստի քաղաքային տեղակալին մարմինը ճեղքուելով քննութիւն կատարուեցաւ Տիւփրէ և Տիւրօ վիրաբոյժներուն , Կավար դեղագործին և երկու եղբարց բժիշկ Պաչօի ներկայութեան որոնք ստամոքսը և երկուստասան մասնեայ աղիքը բոլորովին սևեցած և դիշատեալ , լեարդը փտած և այրած գտան : Հասկցան որ այս դէպքը թոյնէն առաջ կուգայ . բայց որովհետեւ քանի մը տեսակ բնաւորութիւն և արամադրութիւնք մի և նոյն արդիւնքը կրնան արտադրել , ուստի չկրցան հաստատապէս վճռել թէ քաղաքային տեղակալի մահը բնական մահ չէ . հետեւաբար առանց արտաքին խուզարկութեանց տեղակալին մարմինը գերեզման դրուեցաւ :

Պ. Պաչօ իբրև խորհրդականին բժիշկը պահանջած էր որ նորա եղբոր մարմնոյն վրայ անպատճառ քննութիւն կատարուի :

15-184

ըրբ անդրանիկ եղբոր նման հիւանդութեամբ մը վախճուի
կերևար և բժիշկը մահուան մէջ իսկ զէնք գտնել կը
յուսար նորա կեանքը պաշտպանելու համար : Խորհրդականը
սաստիկ տենդով մը կը տագնապէր և մտաց ու մարմնոյ բուռն
և անընդհատ յուզմանց մէջ կը տատանէր . և չէր կրնար գոնէ
քանի մը վայրկեան իւր ցաւոց տուկալ : Անկողինը իրեն համար
տանջանք մ'էր . և սակայն անկէ ելնելուն պէս վերստին հոն
դառնալ կուզէր գոնէ ցաւերը մեղմելու համար : Վերջապէս ե-
րեք ամիսէն այս թշուառականն ալ մեռաւ : Ասոր ստամբսը ,
աղիքը և լեարդը մի և նոյն վիճակն ունէին ինչ որ ունէր իւր
եղբոր ստամբսը և այն , և աւելի՛ ասոր մարմինը արտաքուստ
այրած էր , որ հասարակոն նշան մ'է լեյնի ըստ բժշկաց , իւր կը պա-
սակէ երբեմն , կըսէին անոնք որ սիրտ-սիրտ-իւնն ալ մի և նոյն արդեանքն
էր :

Իսկ Լաչօսէ այս մահուան առթիւ կասկածանքէ այնքան ա-
զատ համարուեցաւ որ իւր տէրը անոր գորովալիլ խնամքները
տեսնելով , հարիւր սկուզ կասկած էր անոր . միւս կողմանէ
հազար ֆրանք ալ Սէնթ-Քրուաէն և մարգիզուհիէն ընդունե-
ցաւ :

Սակայն մէկ ընտանիքի մէջ այսքան մահ ոչ միայն սրտերը
կը վշտացնէր այլև մտքերը կահարեկէր : Մահը յիսակալ չէ ,
խուլ և կոյր է . և ամէն ոք կը զարմանար տեսնելով մահուան
արիւնարբու կատաղութիւնը որ մի և եթ անուն կրող ընտանիք
մը սպառսպուռ կը ջնջէր : Բայց բուն յանցաւորաց վրայ ոչ ոք
կասկած մը չունեցաւ . մարդոց աչքերը կուրացան և խուզար-
կութիւնք մտրոբեցան : Մարքիզուհին իւր եղբայրներուն սու-
գը պահեց . և ամէն բան ըստ առաջնոյն ի կարգի էր :

Այս միջոցին Սէնթ-Քրուա Սէն-Լօրան Պարոնին հետ ծա-
նօթացած էր , այն անձին որոյ պաշտօնը Փրնօթիէ խնդրած սա-
կայն չէր յաջողած , և անոր հետ բարեկամացած էր : Եւ թէ-
պէտ Պ. Փրնօթիէ ժամանակաւ իւր աներոջմէն՝ Պ. Լէսէքէն հա-
րըստութիւն մը ժառանգած էր սորա անակնկալ մահուամբը որ
Լանկրաօքի արկղին երկրորդ պաշտօնը և անհուն ստացուածք-
ներ ալ թողած էր , սակայն Պ. Փրնօթիէ ամենևին չը դադա-
րեցաւ կղերի արարողապետի պաշտօնին փափաքելէ : Ինչպէս ծը
այս պարագային մէջ ալ օգնեց ասոր , Պարոն տը Սէն-Լօրան

Սէնթ-Քրուաէն ժօրժ անուն նոր ծառայ մը ընդունելէն քանք
մը օր վերջը հիւանդացաւ և իւր հիւանդութիւնը մի և նոյն
ախտին նշանները կը ցցունէր ինչ որ տեսնուած էր Պ. տ'Սպրէյի
և իւր որդւոց հիւանդութեան մէջ , սա տարբերութեամբ մի-
այն որ Սէն-Լօրանի հիւանդութիւնը աւելի արագ առաջ գը-
նաց , զի 24 ժամ տևեց : Վերջապէս սարոն տը Սէն-Լօրան անոնց
նման սոսկալի ցաւերով իւր կեանքը կնքեց : Մի և նոյն օրը պա-
լատական սպայ մը եկաւ զայն տեսնելու համար , իւր բարեկա-
մին մահուան վրայ մանրամասն տեղեկութիւններ քաղեց և
հիւանդութեան պարագայներէն ու դէպքերէն զգածեալ ծա-
ռայներուն առջև Սէնֆրէյ նօտարին ըսաւ թէ դիակը բանալ
պէտք է : Ժամ մը վերջը ժօրժ առանց մէկու մը բան մը ըսե-
լու և իւր ամուսկաններն իսկ ուզելու անյայտ եղած էր : Սակէ
կասկածներն աւելցան . բայց այս անգամ ալ անստուգութեան
մէջ մնացին : Քննութիւնը այնպիսի ընդհանուր երևոյթներ ե-
րևան բերաւ որոնք թոյնի յատուկ չէին . միայն աղիքները զոր
մահարեք նիւթը այրելու ժամանակ չէր ունեցած տակաւին
տ'Սպրէյ պարոններուն աղիքներուն նման , լուի խայթուածքի
նման կարմրագոյն բիծերով ներկուած էին :

1669 յունիս ամսոյ մէջ Փրնօթիէ Սէն-Լօրանի պաշտօնը
ձեռք ձգեց : Սակայն Սէն-Լօրանի այրիին ունեցած կասկած-
ները ժօրժին փախչելով գրեթէ ստուգութեան փոխուեցան :
Պարագայ մ'ալ այս կասկածներուն օգնեց և այս մասին համա-
զում մը գոյացուց : Հանգուցելոյն բարեկամներէն արքայ մը որ
ժօրժին փախչելուն պարագան խիստ աղէկ դիտէր , Սօնպօնի
մօտ Մասօններու փողոցին մէջ քանի մը օր վերջը անոր հան-
դիպեցաւ . երկուքն ալ մէկ գծի վրայ էին և փողոցին վրայ
գտնուած յարդէ կառք մը երկուքին մէջտեղ պատուար մը ե-
ղած էր : Ժօրժ գլուխը վեր կը վերցնէ , արբան կը տեսնէ , իւր
նախկին տիրոջ բարեկամն ըլլալը կը յիշէ , կառքին ներքև ջախ-
ջախուիլը աչքն առնելով արքային ներկայութենէն խոյս կ'ու-
տայ որոյ կերպարանքը միայն իւր ոճիւրը կը յիշեցնէր և պատ-
ժոյ երկիւղ կ'ազդէր իրեն :

Սէն-Լօրանի տիկինը ժօրժի դէմ բողոքեց . բայց հակա-
ռակ ամեն խուզարկութեանց չկրցան զայն գտնել :

Սակայն այս տարօրինակ , անծանօթ և արագահաս մահե-

բուն լուրը Փարիզի մէջ տարածուելով ամենուն սոսկում կը պատճառէր: Սէնթ-Քրուա միշտ զարդարուն և զուարթ, սակայն իւր յաճախած տուներուն մէջ շարունակ այս խօսքերը ըսելով մտատանջութեան մէջ ինկաւ: Ստոյգ է որ իրեն դէմ տակաւին կասկած մը չկար, սակայն զգուշութիւնք հարկաւոր էին. ուստի այս երկիւղէն ազատ ըլլալու համար խորհեցաւ իւր դիւրքը փոխել: Թագաւորին քով պաշտօն մը կար որ դատարկանալու մօտ էր. այս պաշտօնը 100,000 սկուդ կ'արժէր. Սէնթ-Քրուա ինչպէս ըսինք, բնաւ հասոյթի աղբիւր մը չունէր, ուստի ոչ ոք չկրցաւ կասկածիլ թէ այս պաշտօնը ծախու պիտի առնէ:

Սէնթ-Քրուա Պէլլէկիզի դիմեց որպէս զի Փրնօթիէի հետ այս գործին համար բանակցի. այս վերջինը բաւական դժուարութիւն ցցուց: Գումարը մեծ էր. Փրնօթիէ Սէնթ-Քրուաի այլևս պէտք չունէր, զի իւր յուսացած բոլոր ժառանգութիւնը ձեռք ձգած էր. ուստի ջանաց համոզել զանիկա որ այս խորհրդէն ետ կենայ:

Մյն ատեն Սէնթ-Քրուա Պէլլէկիզի հետևեալը գրեց.

« Կարելի է արդեօք, սիրեցեալդ իմ, վերստին յիշեցնել ձեզ այն գործը որ ձեր ունեցած գործին չափ գեղեցիկ, կարևոր և մեծ է և որ երկուքիս ալ կենաց հանգիստ կրնայ պարգևել: Ես այնպէս կը կարծեմ թէ սատանան արդեւք կըլլայ և կամ դուք չէք ուզեր իմաստասիրել: Աղէկ մտածեցէք սիրեցեալդ իմ, կաղաչեմ զձեզ և իմ առաջարկութիւնս հակառակ տեսութեամբ դատելով ենթադրեցէք որ աշխարհին ամենէն վատ և թիւր առաջարկութիւնն է զոր ձեզի կընեմ. և պիտի տեսնէք որ դուք պարտաւոր էք զիս գոհացնել, այնպէս ինչպէս ես ձեր ապահովութեան համար բան մը չիմայեցի ընել. որովհետեւ մեր բոլոր շահերը համաձայն են: Վերջապէս սիրեցեալդ իմ, օգնեցէք ինձ կաղաչեմ. իմ կատարեալ երախտագիտութեանս վտահ եղիք և համոզուեցէք որ թէ ձեզի և թէ ինձի համար ասկէ աւելի հաճոյ բան մը չկայ աշխարհի վրայ: Արդէն դուք գիտէք զայն, զի իմ սիրտս աւելի համարձակ կերպով կը բանամ ձեզի զոր երբէք բացած չեմ իմ հարազատ եղբորս անգամ: Եթէ ճաշէն վերջը կրնաք դալ, տունս կամ ծանուցեալ տեղը կրնաք գտնել զիս և կամ վաղն առտու կսպա-

սեմ ձեզ կամ ես կուգամ զձեզ գտնելու ինչպէս որ կուզէք. եւ ձեզ յամենայն սրտէ և այլն »:

Սէնթ-Քրուայի բնակարանը Պէրնարտէն փողոցն էր և այն տեղը ուր պիտի սպասէր Պէլլէկիզի, այն սենեակն էր զոր Մօպէռի հրապարակին անել փողոցին մէջ Պրիւնէ այրիին տան մէջ վարձած էր:

Մյն սենեկին և Կըլազէ դեղագործին տանը մէջ կը պատրաստէր Սէնթ-Քրուա իւր դեղերը. բայց խիստ արդար տեսութեամբ մը թոյնի մատակարարութիւնը զայն պատրաստողներուն համար ալ մահաբեր էր: Ինքզինքը հիւանդացաւ և մեռաւ. Մարթէն սոսկալի ժայթքումով մը բռնուեցաւ և յոգիս ապաստան եղաւ. Սէնթ-Քրուա ալ հիւանդացաւ առանց պատճառը գիտնալու և չափազանց տկարութեան պատճառաւ չկրնալով դուրս ելնել, Կըլազէի տնէն դարբնոց մը բերել տուաւ իր տունը որպէս զի իւր հիւանդութեանը մէջ թոյնի պատրաստութիւն տեսնէ:

Արդարև Սէնթ-Քրուա խիստ նուրբ թոյն մը փնտռելու ետևէ էր, որոյ հօտումը միայն կարող ըլլար սպաննել զմարդ. լած էր այն թունաւոր ղենջակը որուն Կարողոս է. ի անդրանիկ եղբայրը՝ երիտասարդ դահաժառանգը գնտախաղ խաղալու ատեն հպելով մեռած էր. նոյնպէս կենդանի աւանդութիւնք Յովհաննա Ալլրէդի ձեռնոյնբուն պատմութիւնը յիշատակած էին իրեն. այս դաղտնիքները կորսուած էին և Սէնթ-Քրուա զանոնք վերստին գտնել կը յուսար:

Մյն ատենները ահաւոր դէպք մը պատահեցաւ որ ոչ դիպուածի արդիւնք այլ նախախնամութեան մէկ պատիժն էր: Մյն պահուն յորում Սէնթ-Քրուա իւր դարբնոցին վրայ կախուելով իւր մահագուշակ պատրաստութեան հետզհետէ սաստկանալը կը տեսնէր իւր երեսը անցընելով ապակիէ դիմակ մը զոր պատրաստած ըմպելիին մահացու գորրչիէն ինքզինքը պահանջելու համար կը գործածէր, յանկարծ դիմակը երեսէն վար ինկաւ և Սէնթ-Քրուա կայծակնահար գետին թաւալեցաւ:

Ընթրիքի ատեն կինը տեսնելով որ իր ամուսինը սենեկէն դուրս չելներ, եկաւ դուռը զարկաւ. ոչ ոք չպատասխանեց իրեն, և որովհետեւ գիտէր որ իր ամուսինը խորհրդաւոր գործերով կը պարապէր, վախցաւ որ մի գուցէ դժբաղդութիւն

մը պատահած ըլլայ իրեն : Ծառայները կանչեց որոնք դուռը խորտակեցին և Սէնթ-Քրուա դարբնոցին մէկ կողմը գետին տապալած տեսնուեցաւ , իր քովն ունենալով ապակիէ դիմակը որ կտարած էր :

Այս տարօրինակ և արագահաս մահուան պարագայները հասարակութենէն ծածկելու հնարը չկար . զի ծառայները դիակը տեսած էին և կրնային աստ անդ խօսիլ : Բիքառ պաշտօնեայն անմիջապէս կանչուեցաւ սենեակը կնքելու համար . իսկ Սէնթ-Քրուաի այրին դարբնոցը և դիմակին կտորուանքը անհետացնելով բաւականացաւ :

Այս ահաւոր դէպքին լուրը շուտով ամբողջ Փարիզի մէջ տարածուեցաւ : Սէնթ-Քրուա բաղնիքանոթ էր և արքունեաց մէջ նոր պաշտօն մը առնելու լուրը իւր անունն աւելի հռչակած էր : Լաչօսէ իւր տիրոջ մահը լսելով և իմանալով որ անոր սենեակը կնքած էին , անմիջապէս բողոքագիր մը պատրաստեց հետեւեալ բառերով .

« Բողոքագիր Լաչօսէի յորում կըսէ թէ 7 տարիէ ի վեր հանգուցելոյն ծառայութեան մէջ է . թէ երկու տարիէ ի վեր անոր պահպանութեան տուած էր 1,000 ֆրանք և 100 ճերմակ սկուգ որոնք սենեկին պատուհանին ետեւը կտաւէ քսակի մը մէջ են և որուն մէջ տոմսակ մը կայ թէ յիշեալ գումարը իրեն կը վերաբերի և 300 ոսկեոյ գումարի փոխանցագիր (շէն) մը զոր հանգուցեալ խորհրդական տ'Օպրէյ իրեն կը պարտէր . յիշեալ փոխանցագիրը զոր Լաչօսէի մէջ կատարած էր և իւր տիրոջ ամսականի երեք պարտամուրհակ որոյ իւրաքանչիւրը 1,000 ֆրանք կը պարունակէր , այս բոլոր գումարը և թղթերը կը պահանջէր Լաչօսէ » :

Լաչօսէի պատասխան տրուեցաւ թէ կնքը բացուելուն պէտք է սպասել , և թէ՛ եթէ ամեն բան իւր ըսածին պէս ելնէ , ինչ որ իրեն կը վերաբերի պիտի տրուի իրեն :

Սակայն Սէնթ-Քրուաի մահուան վրայ միայն Լաչօսէ չը յուզուեցաւ . մարքիզուհին կնքուած մահագուշակ սենեկին բոլոր գաղտնիքները գիտնալով , մահուան դէպքը պատահելէն անմիջապէս վերջը պաշտօնէին տունը վազած էր և թէպէտ երեկոյեան ժամը 10ն էր , սակայն անոր հետ խօսելու հրաման խնդրած էր . բայց Բիէն Ֆուրէն գրագիրը պատասխան տը-

ւած էր թէ իւր տէրը պառկած է . մարքիզուհին շատ պնդաւ և աղաչած էր որ արթնցնեն զինքը և առանց բացուելու արկղ մը կը պահանջէր . հետեւաբար գրագիրը Պ. Բիքարի ննջարանը մտնելէ վերջը վար իջած էր ըսելով որ մարքիզուհին խնդրածն անկարելի էր զի պաշտօնեայն կը քնանար : Այն ատեն Պրէնվիլիէ մարքիզուհին տեսնելով որ իւր աղաչանքն անօգուտ է , դուրս ելաւ ըսելով որ հետեւեալ առտուն մարդ պիտի իրկէ արկղը խնդրելու համար : Եւ արդարև այս մարդը հետեւեալ առտու մարքիզուհին կողմանէ գալով 50 դադդոսկի տալ խօստացաւ պաշտօնէին եթէ արկղը իրեն յանձնուի . սակայն պաշտօնեայն պատասխան տուած էր թէ արկղը կնքուած ըլլալով այն ատեն պիտի բացուի երբ կնքը քակուի , և թէ՛ եթէ մարքիզուհին պահանջած բաները արդարև իրեն են , անշուշտ իրեն պիտի յանձնուին :

Այս պատասխանը շանթահար ըրաւ զմարքիզուհին . կորսնցնելու ժամանակ չկար . ուստի նէօլ-Սէն-Քօլ փողոցէն ուր էր իւր քաղաքային տունը , Բիքբիւս իւր ամարանոցը վերադարձաւ և նոյն իրիկունը թղթատարին հետ Լիէժ մեկնեցաւ ուր օր մը վերջը հասնելով վանք մը քաշուեցաւ :

Սէնթ-Քրուայի տունը 1672 յուլիս 31 ին կնքուած էր . հետեւեալ ամսոյն օգոստոս 8 ին կնքը բացուեցաւ և երբ գործողութիւնը կսկսէր , մարքիզուհին կողմանէ լիազօր փոխանորդ մը ներկայացաւ և հետեւեալ պարբերութիւնն արձանագրել տուաւ .

« Այլքսանդր Տէլէմար՝ Պրէնվիլիէ տիկնոջ կողմանէ ներկայանալով յայտնեց թէ՛ եթէ իւր փոխանորդին պահանջած արկղին մէջ մարքիզուհւոյն կողմանէ ստորագրեալ 300,000 ֆրանքի խոստմագիր մը գտնուի , այս թուղթը իրմէ խաբկանօք առնուած է որուն դէմ կը բողոքէ և ի դատ մտնելու պատրաստ ըլլալը կը յայտնէ , անոր ոչինչ ըլլալը հաստատելու համար , եթէ ճիշդ իւր ստորագրութիւնը կը կրէ » :

Այս ձևակերպութիւնը կատարուելէ վերջը Սէնթ-Քրուաի տունը բանալ սկսան . եղբայր Վիգթօրէն անուն կարմելեան կըրօնաւոր մը բանալին Բիքառին ներկայացուց . պաշտօնեայն դուռը բացաւ . այս գործոյն մէջ շահ ունեցող անձինք , սպայները և այրին հետը ներս մտան և սկսան նախ թղթերը դուրս

... զանոնք իրարու ետևէ կարգի դնելու համար : Ասոնց մէջէն պզտիկ թուղթ մը գետինը ինկաւ որուն վրայ այս երկու բառերը գրուած էին . Ն՝ Խոստովանութիւն : Հոն ներկայ եղողները Սէնթ-Քրուան վատաբարոյ անձ մը կարծելու դեռ պատճառ մը չունենարով վճռեցին որ այս թուղթը չպիտի կարդացուի . ընդհանուր դատաստագին կարծիքը հարցուելով այս մասին համամիտ ըլլալը յայտնեց և Սէնթ-Քրուան խոստովանութիւնը այրեցաւ :

Խղճմտանաց այս գործը կատարուելէ վերջը սկսան գոյքերը մի ըստ միով քննել : Առաջին անգամ սպայներուն աչքին զարնուած բանը Տիկին Պրէնսիպիէի պահանջած արկղը եղաւ : Ասոր թախանձանքը ամենուն հետաքրքրութիւնը շարժած ըլլալով, անկէ սկսան քննութիւնը . ամեն մարդ մտքը եկաւ արկղին մէջինը գիտնալու համար , և բացին զայն : Ահաւասիկ ինչ որ կը խօսի արձանագրութիւնը այս մասին . սոյն պաշտօնական թղթին նման զօրաւոր և ահարկու բան երբէք չկրնար ըլլալ :

« Սէնթ-Քրուայի տանը մէջ քառակուսի ոտքով փոքրիկ արկղ մը գտնուեցաւ զոր բանալով կէս թերթ թուղթ երեւան ելաւ որուն մէկ կողմը գրուած էր իմ կոյս . որ հետևեալ բառերը կը պարունակէր :

« Այս արկղը որի ձեռք որ անցնի կաղաչեմ խոնարհաբար որ հաճի անձամբ Պրէնսիպիէ մարքիզուհիին յանձնել որ Նէօֆ-Սէն-Բօլ փողոցը կը բնակի , վասն զի արկղին պարունակութիւնը անոր և միայն անոր կը վերաբերի , մանաւանդ որ արկղին մէջ գտնուածը և ոչ ումեք օգտակար կրնայ ըլլալ բաց իրմէ . իսկ եթէ տիկին մարքիզուհի ինձմէ առաջ մեռած ըլլայ , զայն և անոր մէջ գտնուած ամեն բան այրել առանց բանալու : Եւ որպէս զի այս պահանջումն տկարամտութեան չընծայուի , իմ պաշտած աստուծոյս և ամենէն սրբազան առարկաներուս վրայ կերդնում թէ ինչ որ կըսեմ ճշմարիտ է : Իսկ եթէ պատահամբ իմ արդար և օրինաւոր պահանջմանցս հակառակին , այս աշխարհին մէջ և ի հանդերձելումս իրենց խիղճը պատասխանատու և իմն ազատ կը համարիմ և կը բողոքեմ զի այս իմ վերջին կամքս է :

« Տուեալ ի Փարիզ 23 մայիս կէս օրէն վերջը 1672 , ստորագրեալ Սէնթ-Քրուայ » :

Եւ ներքեւը այս բառերը գրուած էին .
« Մէկ ծրար մը կայ Պ. Բընօթիէի ուղղուած զոր պէտք է իրեն յանձնել » :

Յայտնի է որ այսպիսի սկզբնաւորութիւն մը տեսարանին կարևորութիւնը կաւելցընէր , հետաքրքրութեան մրմունջ մը լրսուեցաւ . յետոյ լուծութիւնը վերահաստատուելով քննութիւնը շարունակեց հետևեալ բառերով :

« 8 կնիքով կնքեալ և տարբեր զինանշաններով նշանակեալ ծրար մը գտնուեցաւ որուն վրայ գրուած էր . « Մահուան պարագայի մէջ այրելու թղթեր են ասոնք որք բնաւ կարևորութիւն չունին և ոչ մէկուն : Որի ձեռքը որ անցնին այս թղթերը կաղաչեմ խոնարհաբար որ այրեն , խղճերնին պատասխանատու կը բռնեմ . պէտք է որ այրեն ամենքը առանց ծրարը բանալու » : Այս ծրարին մէջ պարզուած սնդիկի նիւթի երկու ծրար գտնուեցաւ :

« Նոյնպէս ուրիշ ծրար մը շատ մը զինանշաններով 6 կնիքէ կնքեալ որուն վրայ վերոյիշեալ արձանագրութիւնը կար որուն մէջ կէս լիտր ծանրութեամբ ուրիշ պարզուած սնդիկի նիւթ մը գտնուեցաւ :

« Նոյնպէս ուրիշ ծրար մը շատ մը զինանշաններով 6 կնիքով կնքեալ որուն վրայ յիշեալ արձանագրութիւնը կար և որուն մէջ 3 ծրար ևս կային , որուն մէկը կէս ունկի սնդիկ , միւսը երկու ունկի և մէկ քառորդ լիտր հոսովմէական արջասպ , իսկ երրորդը կիր եղած և պատրաստուած արջասպ կը պարունակէր :

« Արկղին մէջ գտնուեցաւ նաև քառակուսի մեծ սրուակ մը վճիտ ջրով լեցուն զոր քննելով Պ. Մօռօ բժիշկը ըսաւ թէ ասոր յատկութիւնը գիտնալ անկարելի է մինչև որ փորձը չըլլայ :

« Նոյնպէս վճիտ ջրով լեցուն ուրիշ սրուակ մը որուն տակը սպիտակացուցիչ միւր մը կար . Մօռօ ասոր համար ալ մի և նոյն բանը ըսաւ . նոյնպէս խեցիէ պզտիկ սան մը որուն մէջ պատրաստուած ափիօնի երկու կամ երեք կտոր կային :

« Նոյնպէս ծալուած թուղթ մը որուն մէջ երկու տրամ մաշողական սնդիկի փոշի կար :

« Նաև փոքրիկ տուփ մը որուն մէջ տեսակ մը քար գըտնուեցաւ դժոխաբար անուամբ :

« Նաև 3 ունկի կշռող ծարրաքար (րաստրգ թաշը) մետաղի կտոր մը :

« Նաև փոշիով լեցուն ծրար մը որուն վրայ գրուած էր .
« Կանանց արեան հոսումը դադարեցնելու համար » :

Մօռօն ըսաւ թէ սերկեւիլի ծաղկէ և չորցած սերկեւիլի կոկոնէ շինուած էր :

« Նոյնպէս 6 կնիքով կնքեալ ծրար մը գտնուեցաւ որուն վրայ գրուած էր . « Մահուան պարագայի մէջ այրելու թըղ-
թեր » որուն մէջ 34 նամակ կար զորս Պրէնսվիլիէ տիկինը գրած էր :

« Նոյնպէս 6 կնիքով կնքեալ ուրիշ ծրար մը որուն վրայ վերնոյն նման արձանագրութիւն մը կար և որուն մէջ 27 կտոր թուղթ գտնուեցաւ ամեն մէկուն վրայ սապէս գրուած . « Բազմաթիւ հետաքրքրական գաղտնիքներ » :

« Նոյնպէս ուրիշ ծրար մը 6 կնիք կրող որուն վրայ վերնոյն նման արձանագրութիւն մը կար որուն մէջ 73 գրութիւնք կային զանազան անձանց ուղղեալ » .

Ասոնցմէ զատ երկու պարտամուրհակ կար արկղին մէջ , մէկը Պրէնսվիլիէ տիկինէն և միւսը Բնօթիէէն , առաջինը 30000 իսկ երկրորդը 40000 Ֆրանքի . վերջինը հայր Ծօպրէյի մահուան թուականին , իսկ առաջինը Սէն-Լօրանի մահուան թուականին կը համապատասխանէր : Սոյն գումարներուն տարբերութիւնն ալ կը ցցունէր թէ Սէնթ-Քրուա գնոց ցանկ մ'ունէր և թէ հայրասպանութիւնը պարզ սպանութենէ մ'աւելի ծանրագնի էր :

Այսպէս Սէնթ-Քրուա մեռնելով իւր թոյները սիրուհիին և բարեկամին կը կտակէր . բաւական չէին իւր անցեալ ոճիրները , կուզէր որ ապագայ ոճիրներու ալ պատճառ լինի :

Քաղաքային սպայներուն առաջին գործն եղաւ այս զանազան նիւթերը լուծել և այլ և այլ կենդանեաց վրայ փորձ կատարել :

Ահաւասիկ դեղագործ Կիւյ Սիմօնի տեղեկագիրը որուն յանձնուած էր այս նիւթերուն քննութիւնը և փորձին գործողութիւնը :

« Այս արուեստական թոյնը խուզարկութեանց ներքեւ չկնար . այնքան ծպտեալ է որ երբէք չը ճանչցուիր . այնքան նուրբ որ զարհետը կը խարէ , և այնքան թափանցիկ որ ամենակարող բժիշկներուն անհասկանալի կ'ըլլայ . այս թոյնին վրայ

կատարուած փորձի գործողութիւնք սուտ , բժշկական կանոնները խարուսիկ և վճիռները ծաղրական են :

« Ամենէն աւելի ստոյգ և հաւաստի գործողութիւնները կենդանեաց վրայ կ'ըլլան :

« Զուրին մէջ սովորական թոյնին ծանրութիւնը զայն յատակը կը մղէ , թոյնը կը գահավիժի և մինչև տակը կ'իջնէ :

« Կրակին փորձը անվրիպելի է . կրակը գողորջի կը դարձնէ կը ցնդէ և կը հատցնէ ամեն ինչ որ անմեղ և անբիծ է , խայթիչ և դառն նիւթ մը միայն կը թողու որ միայնակ կը դիմադրէ անոր ազդեցութեանը :

« Այս թոյնին կենդանեաց վրայ ըրած ներգործութիւնը աւելի սաստիկ է . իւր վատ ազդեցութիւնը կը տարածէ ամեն մասերու մէջ ուր որ կը հաղորդուի և ինչ բանի որ դպչի զայն կ'եղծանէ . տարօրինակ և շերմաջերմ կրակով մը բոլոր աղիքները կայրէ և կը խորովէ :

« Սէնթ-Քրուայի թոյնը ամեն փորձերէ անցած է և ամեն փորձառական միջոցներ առ ոչինչ կը գրէ . այս թոյնը ջրին վրայ կը լողայ , միշտ վրան է և ջուրը իրեն կը հնազանդեցունէ , կրակին փորձէն կը խուսափի ուր մեղմ և անմեղ նիւթ մը կը թողու , կենդանեաց մէջ այնպիսի արհեստով և ճարտարութեամբ մը կը ծածկուի որ երբէք զայն չեն կրնար ճանչնալ . կենդանւոյն բոլոր անդամները առողջ և կենդանի են . մահուան այս արուեստական թոյնը հոն կաթիլներ վաղեցուցած միջոցին կենաց նշաններ և պատկերը կը թողու հոն :

« Ամեն տեսակ փորձերը կատարեր են . առաջին՝ գտնուած ըմպելիէն քանի մը կաթիլ վազցնելով ծովու ջուր և գինեքարի իւղ պարունակող սրուակի մը մէջ ուր բնաւ ամանին յատակը չէ իջած . երկրորդ՝ մի և նոյն ըմպելիէն աւազուտ ամանի մը մէջ գնելով որ ատեն ամանին տակը չոր և դառնահամ նիւթ մը բնաւ գտնուած չէ և ոչ իսկ աղտեղութիւն մը . երրորդ՝ հնդկահաւի մը , աղանիի մը , շան մը և ուրիշ կենդանիներու վրայ որոնք քիչ մը վերջը մեռնելով և հետեւեալ օրը անոնց մարմինը ճեղքուելով սրտին խոռոչին մէջ քիչ մը թանձրացեալ արիւն միայն գտնուած է :

« Ճերմակ փոշիէ ուրիշ փորձ մը կատուի մը և ոչխարի լեարդի մը վրայ կատարուելով կատուն կէս ժամ ամբողջ փոխեց և հե-

տեւեալ օր մեռնելով փորը ճեղքուեցաւ , բայց թոյնէն ապա-
կանեալ մաս մը բնաւ չգտնուեցաւ :

« Մի և նոյն փոշիէ երկրորդ փորձ մ'ալ աղանիի մը վրայ
կատարուելով քիչ մը ատեն վերջը աղանիին մեռաւ . ստամոք-
սին մէջ քիչ մը ժանգոտ ջուր գոյացած էր » : Այս փորձերը
կատարելապէս հաստատեցին թէ Սէնթ-Քրուա ամենաճար-
տար քիմիագէտ մ'էր որով և ընդհանուր գաղափար մը գոյա-
ցաւ թէ 'ի հարկէ ձրի չէր գործածեր իւր արհեստը . քիչ մը
առաջ պատմուած արագահաս և անակնկալ մահերը ամենուն
յիշողութիւնը զարթուցին . Մարքիզուհւոյն ու Բնօթիէի պար-
տամուրհակները արեան գին երեցան . և որովհետև մին բացա-
կայ կը գտնուէր իսկ միւսն այնքան զօրաւոր և հարուստ զոր
չէին համարձակեր ձերբակալել , Լաչօսէի բողոքագիրը յիշեցին :

Սոյն բողոքագրին մէջ ըսուած էր թէ Լաչօսէ եօթը տա-
րիէ ի վեր Սէնթ-Քրուաի քով կը ծառայէր . հետեւաբար Լա-
չօսէ պարոն տ'Օպրէյի քով անցուցած ժամանակն այս եօթ-
նամեայ ծառայութեան հետ ի միասին հաշուած էր : 10,000
ֆրանքը և 100 ֆրանքի երեք պարտամուրհակ պարունակող
քսակը անոր նշանակած տեղը գտնուեցաւ . ուստի Լաչօսէ այս
տանը տեղական հանգամանաց վրայ կատարեալ ծանօթութիւն
ունենալու էր . եթէ տունը կը ճանչնար , արկղն ալ ճանչնալու
էր , և եթէ արկղը կը ճանչէր , ուրեմն անմեղ չէր կրնար ըլլալ :
Այս նշանները բաւական եղան քաղաքային տեղակալ Պ. տ'Օպ-
րէյի այրիին որոյ անունն էր տիկին Մանկօ տը Վիլլաուսօ , բո-
ղոք բառնալու Լաչօսէի դէմ . հետեւաբար Լաչօսէ ձերբակալ-
ուեցաւ , և ձերբակալուելու ատեն թոյն գտնուեցաւ վրան :

Գործը Շաթրլէի ատենանը ելաւ . Լաչօսէ յամառ ընդդի-
մութեամբ մը ուրացաւ . և դատաւորները անոր դէմ բաւական
ապացոյց չունենալով ի ձեռին , նախնական հարցաքննութեան
ենթարկեցին : Տիկին Մանկօ տը Վիլլաուսօ տեսնելով որ դատաս-
տանը հաւանականաբար պիտի ազատէ զյանցաւորը , եթէ բան
մը չխոստովանելու և ցաւոյ դիմանալու չափ ոյժ ունենայ , վե-
րաքննութիւն պահանջեց և վերաքննութեամբ 1674 մարտ 4
թուականաւ Թոռնէյի մէկ վճիռը ժան Ամբլէն Լաչօսէ կոչեցան
վերջն Կալապիսի տեղական ու խորհրդականը խօստատելու ճանակցաւթիւնն
յայտնեց . որոյ ի պատիժ կենդանայն անբաժանարտելու և անխի վրայ մե-

նելու դատապարտուեցաւ , կանխաւ սովորական և սրտայ կարգի պանձանիւ-
րը կրելով որդէն զի էր դատակնէները յայտն :



Իւր աղջկան բազուկներուն մէջ նոզին աւանդեց , օրնելով
Խ.Ր սպանիչը

Մի և նոյն վճուագրով Պրէնվիլիէ մարքիզուհին ալ դատաս-
տանէ փախչելուն համար գլխատութեան դատապարտուեցաւ :
Լաչօսէ կոծեղի տանջանքը կրեց , որ էր դատապարտելոյն

ամեն մէկ սրունքը երկու տախտակներու մէջ կապել, երկաթէ օղակով մը երկու սրունքները մէկ մէկու մօտեցնել և մէջ տեղի տախտակներուն մէջ անկիւններ մխել. սովորական տանջանքը 4 անկիւնէ էր իսկ արտաքոյ կարգի տանջանքը 8 :

Երրորդ անկեան մէջ Լաչօսէ յայտարարեց թէ պատրաստ էր խօսելու . հետեւաբար տանջանքը դադարեցաւ , և մատրան դասին մէջ անկողնի մը վրայ դրին . և որովհետեւ խիստ տրկար էր և հազիւ կրնար խօսիլ , կէս ժամ միջոյ խնդրեց ինքըզինքը գտնելու համար . ահաւասիկ հարցմանց և մահուան գործադրութեան արձանագրութեան քաղուածոյն :

« Լաչօսէ տանջանքէ դադարելով անկողնոյն վրայ տարածեցաւ . Պ. հարցաքննիչը դուրս ելնելով կէս ժամ վերջը Լաչօսէ խնդրեց որ վերստին ներս մտնէ . ըսաւ անոր թէ յանցաւոր էր ինքը . թէ Սէնթ-Քրուա իրեն ըսած էր որ տիկին Պրէնվիլիէ իւր եղբայրները թունաւորելու համար թոյն տուած էր իրեն . թէ ջուրի և արգանակի մէջ զանոնք թունաւորած է , ի Փարիզ քաղաքային տեղակալի գաւաթին մէջ կարմիր ջուր մը և Վիլլէքուայի կարկանդակին մէջ յստակ ջուր մը դրած էր . Սէնթ-Քրուա 500 ֆրանք նոյնպէս և զինքը միշտ իր քովը պահել խոստացած էր . Սէնթ-Քրուա յիշեալ ջուրէն շատ անգամ տուած էր իրեն և ըսած էր որ Պրէնվիլիէ տիկինը միւս թունաւորութիւններէն բնաւ տեղեկութիւն չունի . բայց ինքը կը կարծէ թէ տիկինը գիտէր , որովհետեւ իրեն (Լաչօսէի) շատ անգամ իւր թոյներուն վրայ խօսած է . տիկինը կուզէր զինքը փախցնել , և երկու սկուզ տալ հեռանալու համար . տիկինը կը հարցնէր իրեն արկղին ո՞ւր և մէջը ինչ գտնուիլը . եթէ Սէնթ-Քրուա քաղաքային տեղակալի տիկնոջ քով մէկը գնելու կարողանար , կարելի էր որ զայն ալ թունաւորել տար . վերջապէս Սէնթ-Քրուա օրիորդ տ'Օպրէյի կը ցանկար :

Այս յայտարարութիւնը որ ալ կասկածի տեղի չէր թողուր , պատճառ եղաւ հետեւեալ վճիռը արտասանուելու զոր խորհրդարանի արձանագրութենէն կը քաղենք :

« Արքունիքը 1673 մարտ ամսոյ 24 ին մահուան գործադրութեան և տանջանաց արձանագրութիւնը քննելով որ ժամանակէն Լաչօսէ կոչեցելոյն յայտարարութիւնը և խոստովանութիւնը կը պարունակէր , հրամայեց որ Պէլլէկիզ , Մարթէն , Բուա-

թըվէն , Օլիվիէ անուն անձինքը , հայր Վերօն , Վարսավիրա Քեսթօն անուն անձի մը կինը դատարան հրաւիրուին հարցաքննուելու համար սոյն վճիռն արտասանող հարցաքննիչ տանջակալէն : Կառավարութիւնը կը հրամայէ որ Լարիէո անձին ձերբակալութեան վճիռը և Բընօթիէն ատեան կոչելու հրամանագիրը զոր եղեռնադատ տեղակալը որոշած էր , գործադրուին : « Տուեալ ի խորհրդարանի 27 մարտ 1673 » :

Ըստ այսմ վճռագրի ապրիլ 21 , 22 և 24 ին Բընօթիէ , Մարթէն և Պէլլէկիզ հարցաքննուեցան . յուլիս 26 ին Բընօթիէ հարցաքննութենէ դադարեցաւ . հրաման եղաւ որ Պէլլէկիզի նկատմամբ աւելի ընդարձակ տեղեկութիւններ քաղուին . իսկ Մարթէնի ձերբակալութեան վճիռ տրուեցաւ :

Մարտ 24 ին Լաչօսէ Կուէվի մէջ անւոյ տանջանք մեռաւ : Իսկ Էկզիլի որ բոլոր չարեաց աղբիւրն էր , Փօսթի մահուանէ վերջը Մէփիսթօփիէի նման աներեւոյթ եղած էր և բնաւ բան մը լսուած չէր անոր վրայ :

Տարւոյն վերջերը Մարթէն ազատ արձակուեցաւ բաւական վկայութիւններ չգտնուելուն համար :

Սակայն Պրինվիլիէ մարքիզուհին միշտ Լիէժ կը գտնուէր և թէպէտ վանքի մը մէջ առանձնացած սակայն կենաց աշխարհային հաճոյքները բոլորովին մոռցած չէր : Սէնթ-Քրուան անձնազոհութեան չափ սիրելովս հանդերձ , անոր մահուանը վրայ միտիթարուած էր և անոր տեղ Թեոփա անուն մէկը գտած էր ուրոյ անունը դատաստանի մէջ քանի մը անգամ ըսուած է և ուրուն վրայ աւելի ընդարձակ տեղեկութիւն քաղել անկարելի եղած է :

Ինչպէս տեսնուեցաւ , ամբաստանութեան բոլոր բեռը հետըզհետէ տիկին Պրինվիլիէի վրայ կը ծանրանար . ուստի որոշուեցաւ զինքը խուզարկել իւր առանձնութեան մէջ ուր ապահով կը կարծէր ինքզինքը :

Դժուարին նա մանաւանդ փափուկ պաշտօն մ'էր այս . ուստիկանութեան ամենէն ճարտար պաշտօնեայներէն մին Տէզկուէ դատարանին ներկայացաւ այս պաշտօնը ստանձնելու համար : 36-38 տարեկան դեղեցիկ երիտասարդ մ'էր որոյ ոստիկանութեան պաշտօնեայ ըլլալը ամենեւին յայտնի չէր . ասիկա ամեն տեսակ համազգեստ կրնար կրել մի և նոյն դիւրութեամբ և վա-

յերևութեամբ և իւր ծպտեալ կերպարանօք ամեն կարգի ընկերութեանց մէջ կը մտնէր շինականէն սկսեալ մինչև իշխանը : Ճիշդ պահանջուած մարդն էր ասիկա . ուստի ընդունուեցաւ : Հետեւաբար Լիէժ մեկնեցաւ բազմաթիւ աղեղնաւոր ունենալով հետը , արքայական հրամանագիր մը ի ձեռին քաղաքին վաթսնից ժողովին ուղղեալ , որով Լուդովիկոս ԺԳ. յանցաւորին բռնուիլը կը պահանջէր զայն պատժելու համար : Ժողովը Տէզկուէին ձեռքը գտնուած հրամանագիրը քննելէ վերջը մարքիզուհին ձերբակալութեան հրաման տուաւ :

Շատ էր ասիկա , բայց տակաւին բաւական չէր . մարքիզուհին ինչպէս ըսինք , վանքի մը մէջ ապաստանած էր ուր Տէզկուէ չէր համարձակեր բռնի ձերբակալել երկու պատճառի համար , նախ որ տիկինը կրնար կանխաւ խմանալով վանքին մէկ անկիւնը պահուելով որոյ գաղտնիքը բարձրագոյն անձինք միայն գիտեն . երկրորդ Լիէժի նման կրօնասէր քաղաքի մը մէջ այսպիսի դէպքի մը հրապարակաւ դործուիլը կրնար իբրև սրբապղծութիւն մը համարուիլ և ժողովրդական յեղափոխութեան մը պատճառ ըլլալ , յորում մարքիզուհին փախչելու մեծ դիւրութիւն կրնար ունենալ :

Տէզկուէ տիկնոջ հանդերձապահին այցելեց և կարծելով որ արքայի հաղուստը ամեն կտակածանքէ ազատ կրնար ընել զինքը , վանքին դուռը ներկայացաւ իբրև Հռովմէն եկող հայրենակից մը որ Լիէժէն անցած ատենը ուզած էր իւր յարգանքը նուիրել գեղեցկութեամբ և դժբաղդութեամբ նշանաւոր կընտել մը ինչպէս էր մարքիզուհին : Տէզկուէ բարի ընտանիքի մը կրտսեր որդւոյն ամեն ձեւերն ունէր և պաշտտականի մը նման շողքորթ և հրացանակրի նման ձեռներէց էր . առաջին այցելութեան մտքով և կերպարանքով հրապուրիչ երևցաւ , այնպէս որ դիւրութեամբ ստացաւ սոյն այցելութիւնն մինչդեռ ինքը երկրորդ մ'ընել չէր յուսար . երկրորդ այցելութիւնն ալ ուշ չտեսց . Տէզկուէ հետեւեալ օր վերստին ներկայացաւ . այսպիսի աճապարանք մը մարքիզուհւոյն համար հրապուրիչ էր . ուստի Տէզկուէ առջինէն աւելի պատուով ընդունուեցաւ : Տիկինը դիրքով և խելքով նշանաւոր լինելով և սակայն մէկ տարիէ ի վեր աշխարհի կարգ մը մարդոց հետ հաղորդակցութեանէ հետացած լինելով իւր փարիզական սովորութիւնները Տէզկուէին վրայ վերստին կը գտնէր : Դժբաղդաբար հրապուրիչ արբան քանի մը օրէն Լիէժէն պիտի մեկնէր որուն համար աւելի աճապարանք կը ցցունէր . ուստի հետեւեալ օր վերստին այցելելու հրաման խնդրեց և ստացաւ ճիշդ ժամադրութեան եղանակաւ :

Տէզկուէ ճշդապահ գտնուեցաւ , մարքիզուհին անհամբեր իրեն կսպասէր , բայց Տէզկուէի պատրաստած պարագայներուն պատճառաւ սիրային խօսակցութիւնն իր կու երեք անգամ վրդովեցաւ այն պահուն յորում տեսակցութիւնը սերտ յարաբերութեան փոխուելով վկայներէ երկիւղ կզգային . Տէզկուէ այսպիսի անպատեհութեան մը վրայ ցաւ յայտնեց մանաւանդ թէ ասով զինքը և մարքիզուհին կը մատնէր . ուստի իւր հագուստին պատճառաւ զգուշութիւն ընելու պարտաւոր էր : Խնդրեց մարքիզուհին որ քաղաքէն դուրս ժամադրութիւն մը չնորհէ իրեն այնպիսի տեղ մը ուր երթեալութիւնը նուազ էր , որպէս զի չճանչցուին կամ զիրենք չը լրտեսեն . մարքիզուհին դժուարութիւն չցցուց այսպիսի չնորհ մ'ընելու համար և նոյն իրիկուան համար ժամադրութիւն ըրին :

Իրիկուն եղաւ , երկուքն ալ անհամբեր իրարու կ'սպասէին , բայց տարբեր յուսով մը . մարքիզուհին Տէզկուէն որոշեալ տեղը գտաւ . ասիկա ձեռքը երկնցուց . և երբ անոր ձեռքը իր ձեռաց մէջ սեղմեց , ակնարկ մը ըրաւ որուն վրայ աղեղնաւորները երևցան . տարիածուն իր դիմակը վար առաւ և Տէզկուէ ինքզինքը յայտնեց . մարքիզուհին ձերբակալուած էր : Տէզկուէ Պրէնկիլիէ մարքիզուհին ոստիկաններուն յանձնեց և ինքը փութոյ պնդութեամբ վանքը վազեց : Այն ատեն վաթսնից ժողովոյն հրամանը ներկայացուց և անոր զօրութեամբ մարքիզուհին սենեակը բանալ տուաւ : Անկողնոյն ներքև արկղ մը գտաւ զոր առնելով անմիջապէս կնքեց և տիկինին քով վերադառնալով մեկնելու հրաման տուաւ :

Երբ մարքիզուհին արկղը Տէզկուէի ձեռքը տեսաւ առաջին անգամ ակնկոր գետինը նայեցաւ . յետոյ սթափելով , անոր մէջ գտնուած թուղթը խնդրեց որ իւր խօստովանութիւնը կը պարունակէր : Տէզկուէ մերժեց և երբ ետ կը դառնար կառքը յառաջ քշելու համար , մարքիզուհին դնդասեղ մը կընելով ինքզինքը խղրելու փորձ փորձեց , բայց Բլուա-Ուօլլա անուն աղեղ-

նաւոր մը իւր դիտաւորութիւնը հասկնալով դնդասեղը բերնէն դուրս հանեց : Տէգիւռէ հրաման ըրաւ որ հսկողութիւնը կըրկնապատկեն :

Անթուան Պարպիէ անուն աղեղնաւոր մը ճաշին ներկայ կը գտնուէր և կը հսկէր որ սեղանին վրայ դանակ պատառաքաղ և կամ ուրիշ գործիք մը չգտնուի որով մարքիզուհին կընար ինքզինքը սպաննել կամ վիրաւորել : Տիկին Պրէնկիլիէ գաւաթը բերնին տանելով իբրև թէ խմելու համար իւր ակօայներով կտոր մը փրցուց . աղեղնաւորը ժամանակին տեսաւ և ստիպեց որ բերնէն դուրս հանէ : Այն ատեն տիկինը ըսաւ որ եթէ զինքն ազատէ ամբողջ հարստութիւնը իրեն կուտայ . աղեղնաւորը հարցուց թէ ինչ պէտք էր ընել , մարքիզուհին առաջարկեց Տէգիւռէին կոկորդը կտրել , բայց աղեղնաւորը մերժեց ըսելով որ ասկէ զատ ամեն բան կատարելու պատրաստ է : Հետևաբար տիկինը գրեջ և թուղթ խնդրեց և հետևեալ նամակը գրեց :

« Սիրեցեալդ իմ Թեոփա , Տէգիւռէին ձեռաց մէջ կը գըտնուիմ որ Լիէփի ճամբով Փարիզ կը տանի զիս , փութա՛ զիս ազատել » :

Անթուան Պարպիէ նամակն առաւ խօստանալով զայն տիրոջը զրկել . բայց փոխան անոր՝ նամակը Տէգիւռէի յանձնեց :

Հետևեալ օր տիկինը կարծելով որ այս նամակը այնքան ստիպողական կերպով գրուած չէր , երկրորդ մը գրեց անոր որուն մէջ կ'ըսէր թէ պահակագունդը 8 անձէ միայն կը բաղկանար որոնք չորս կամ հինգ զօրեղ մարդոց միջոցաւ կրնային ցիր ու ցան ըլլալ և կը յուսար ինքը որ Թեոփա այս օգնութիւնը չպիտի զլանայ իրեն :

Վերջապէս տիկինը տեսնելով որ բնաւ պատասխան չընդունիր և իւր նամակները ապարդիւն կը մնան , երրորդ գիր մը զրկեց Թեոփայի որուն մէջ իւր հոգին անոր կը յանձնէր ըսելով որ եթէ պահակագունդին վրայ յարձակելու և զինքն ազատելու կարող չէ , գէթ զինքը տանող 4 ձիերուն երկուքը սպաննէ և այս դէպքէն օգուտ քաղելով որ անշուշտ յուզում պիտի պատճառէր , արկղը յափշտակէ և կրակը նետէ . եթէ ոչ , կըսէր , բոլորովին կորսուած է : Թէպէտ և Թեոփա այս նամակներէն և ոչ մին ընդունեց որք հետզհետէ Անթուան Պար-

պիէի կողմանէ Տէգիւռէի կը յանձնուէին , սակայն փութաց Մայէսթուիչ ժամանելու ուրկէ պիտի անցնէր մարքիզուհին . հոն Թեոփա աղեղնաւորները կաշառելու փորձ փորձեց մինչև 100,000 ֆրանգ տալով . բայց աղեղնաւորները մերժեցին :

Ռօքուայի մէջ պահակագունդը Բայլիւօ ատենակային հանդիպեցաւ զոր խորհրդարանը կալանաւորին ընդ առաջ զրկած էր ճամբան հարցաքննելու համար որպէս զի իւր պատասխանները պատրաստելու ժամանակ չունենայ : Տէգիւռէ բոլոր եղելութիւնը մի ըստ միովէ յայտնեց ատենակային և անոր յանձնեց հռչակաւոր արկղը որ այնքան մտատանջութեան և չափազանց յանձնարարութեանց առարկայ եղած էր : Պ. Բալիւօ բացաւ և հոն գտաւ ի մէջ այլոց թուղթ մը որոյ խորագիրն էր , ՚՚ Խոստովանութիւն » :

Այս խոստովանութիւնը արտաքոյ կարգի ապացոյց մ'էր այն կարօտութեան զոր յանցաւորք կունենան իրենց ոճիրները մարդոց կամ Աստուծոյ դժութեանը յանձնելու համար :

Արդէն ինչպէս տեսնուեցաւ , Սէնթ-Բրուա խոստովանութիւն մը գրած էր զոր այրեցին և ահա մարքիզուհին ալ մի և նոյն անխոհեմութիւնը կը գործէր : Այս խոստովանութիւնը որ եօթն յօդուած կը պարունակէր , սապէս կ'սկսէր . « Ես իմ մեղքերս Աստուծոյ և քեզ կը խոստովանիմ , ով հայր իմ » , իւր գործած բոլոր ոճիրներուն կատարեալ հաստատութիւն մ'էր այս :

Առաջին յօդուածին մէջ ինքզինքը կ'ամբաստանէր հրճիգ նետելուն համար .

Երկրորդին մէջ 7 տարեկան եղած ատենը կուսութիւնը կորսընցնելուն համար .

Երրորդին մէջ իր հայրը թունաւորելուն համար .

Չորրորդին մէջ իւր երկու եղբայրները թունաւորելուն համար .

Հինգերորդին մէջ իւր քոյրը թունաւորելու փորձ փորձելուն համար որ կարմեղեանց վանքին մէջ կրօնաւոր էր :

Միւս երկու յօդուածները այլանդակ և հրէշային զեղխութեանց պատմութիւններ կը պարունակէին : Այս կնոջ մէջ Լօքիւսա և Մէսային միանգամայն կը բնակէին . հնութիւնը ասկէ աւելի աղէկ բան մը պարզեւած չէր մեզ :

Պարոն Բալլիւօ այս կարևոր թուղթը տեսնելով վստահու-
թեամբ անմիջապէս հարցաքննել սկսաւ . զոր բառ առ բառ
կը յիշատակեմք :

Հարցուեցաւ տիկնոջ թէ ի՞նչու համար Լիէժ փախած էր .

— Պատասխանեց թէ իւր ներովը հետ գործ ունենալով
Գաղղիայէն հեռացած էր :

Հարցուեցաւ թէ արկղին մէջ գտնուած թղթերէն տեղեկու-
թիւն ունի՞ .

— Պատասխանեց թէ իւր արկղին մէջ ընտանեկան խել մը
թղթեր կան , և այս թղթերուն մէջ ընդհանուր խոստովանու-
թիւն մը . բայց անիկա գրած ատեն միտքը խանգարած ըլլա-
լով չգիտեր թէ ինչ գրած է , ինչպէս նաև չէր գիտեր թէ ինչ
կընէր , վասն զի իւր ազգականներէն հեռի ամեն տեսակ օգ-
նութենէ զուրկ օտար երկրի մէջ գտնուելով միտքը բոլորովին
խաթարեալ էր :

Իւր խոստովանութեան առաջին յօդուածին վրայ հարցում
եղաւ թէ ո՞ր տան մէջ հրձիգ նետած էր .

— Պատասխանեց թէ ամենեւին այդպիսի բան մը ըրած չէ
և այդ տողերը գրած ատեն միտքը խանգարեալ էր :

Իւր խոստովանութեան միւս 6 յօդուածներու վրայ հար-
ցումներ ուղղուեցան .

— Պատասխանեց թէ չգիտեր և չյիշեր բնաւ ատոնք :

Հարցուեցաւ թէ իւր հայրը և եղբայրները թունաւորած
չէ՞ .

— Պատասխանեց թէ այդ մասին բան մը չգիտեր :

Հարցուեցաւ թէ Լաչօսէն չէր որ թունաւորեց իւր եղ-
բայրները :

— Պատասխանեց թէ այդպիսի բան մը չը յիշեր :

Հարցուեցաւ թէ չէր գիտեր որ իւր քոյրը թունաւորած
ըլլալով երկար ատեն չախտի ապրէր նա :

— Պատասխանեց թէ ատիկա նախատեսած էր , վասն զի
իւր քոյրն ալ եղբայրներուն նման մի և նոյն հիւանդութեանց
ենթակայ էր . թէ իւր խոստովանութիւնը գրած ժամանակը բո-
լորովին մտքէն ելած է , և թէ իւր ազգականաց հաւանու-
թեամբ Գաղղիայէն դուրս ելած է :

Հարցուեցաւ թէ ինչո՞ւ համար իւր ազգականաց կողմանէ
այսպիսի խորհուրդ մը տրուած էր իրեն .

— Պատասխանեց թէ իւր եղբայրներուն գործին համար
էր և թէ կը խոստովանի որ Սէնթ-Քրուան Պատթիլէն ելնելէն
ի վեր բնաւ տեսած չէր զանիկա :

Հարցուեցաւ թէ Սէնթ-Քրուան բնաւ զինքը համոզած
չէր իւր հայրը մեռցնելու համար .

— Պատասխանեց թէ բնաւ չյիշեր , և ոչ իսկ կը յիշէ թէ
Սէնթ-Քրուան իրեն փոշի կամ ուրիշ դեղեր տուած ըլլայ .
նոյնպէս չը յիշեր թէ Սէնթ-Քրուան իրեն ըսած ըլլայ որ զինքն
հարստացնելու միջոցները գիտէ :

Իրեն ներկայացուեցան 8 նամակ և հարցուեցաւ թէ որի կը
գրէր զանոնք .

— Պատասխանեց թէ բնաւ չը յիշեր :

Հարցուեցաւ թէ ինչո՞ւ համար Սէնթ-Քրուային 300,000
ֆրանք խոստացած էր .

— Պատասխանեց թէ այս գումարը Սէնթ-Քրուաի տալ
կուղէր , վասն զի կարօտութիւն ունէր և վասն զի իւր բարե-
կամը կարծած էր զայն . թէ բնաւ չէր ուզած որ ասիկա հրա-
պարակը ելլէ իւր պարտատէրներէն վախնալով . թէ Սէնթ-
Քրուաի երախտապարտ էր և սակայն իւր ճամբորդութեան մէջ
զայն կորսնցուցած էր և իւր ամուսինը այս խոստումէն բը-
նաւ անղեկութիւն չունէր :

Հարցուեցաւ թէ այս խոստումը իւր եղբայրներուն մահ-
ուանէն առաջ թէ ետքն եղած է .

— Պատասխանեց թէ բնաւ չյիշեր և թէ այս կէտը խընդ-
րոյն հետ վերաբերութիւն չունի :

Հարցուեցաւ թէ կը զգէ՞ր անունով դեղադործ մը կը ճանչ-
նայ .

— Պատասխանեց թէ երեք անգամ անոր սունը գացած
է իւր հոսման հիւանդութեան համար :

Հարցուեցաւ թէ արկղը յափշտակելու համար ինչո՞ւ Թէոֆի-
ային նամակ գրած է .

— Պատասխանեց թէ այդպիսի բան մը չգիտեր :

Հարցուեցաւ թէ ինչո՞ւ համար Թեոֆային գրած նամակին
մէջ ըսած էր որ եթէ արկղը ձեռք չը ձգէ , կորսուած է ինքը
(տիկինը) .

— Պատասխանեց թէ չյիշեր :

Հարցուեցաւ թէ Օֆմօնի ճամբորդութեան միջոցին՝ իւր հօրը հիւանդութեան առաջին նշանները տեսաւ ինքը .

— Պատասխանեց թէ ինքը զգացած չէր որ իւր հայրը 1666 ին Օֆմօնի ճամբորդութեան մէջ գէշ վիճակ մը ունեցած է ոչ երթալու ոչ վերադառնալու ատեն :

Հարցուեցաւ թէ Բընօթիէի հետ բնաւ յարաբերութիւն մը չէ ունեցած .

— Պատասխանեց թէ Բընօթիէի հետ երեսուն հազար ոսկւոյ առևտուր մ'ունեցած է զոր Բընօթիէ կը պարտէր իրեն , իսկ ուրիշ բան ոչ :

Հարցուեցաւ թէ ինչպէս եղած էր որ Բընօթիէ երեսուն հազար ոսկի պարտական եղած էր իրեն .

— Պատասխանեց թէ ինքը և իւր ամուսինը տասը հազար սկուդ փոխ տուած էին Բընօթիէի զոր վերջը հատոյց իրենց . իսկ անկէ ետքը բնաւ յարաբերութիւն մը չէր ունեցած անոնց հետ :

Մարքիզուհին ինչպէս կը տեսնուի ամեն բան կատարելապէս կուրանար : Փարիզ հասնելով բանտարկուեցաւ . բանտին մէջ իւր ուրացութիւնը շարունակեց , սակայն զինքն ընկճող ահաւոր հոգերուն վրայ ուրիշներ աւելցան :

Քիւլէ ոստիկանը վկայեց թէ Լաչօսէ խորհրդական տ'Օպրէյի քով կը ծառայէր որ միանգամայն Սէնթ-Քրուայի ծառան էր , այն ատեն տիկին Պրէնվիլիէ ըսած էր որ եթէ քաղաքային տեղակալը գիտնար թէ Լաչօսէ Սէնթ-Քրուայի ալ ծառան է , աղէկ բան մը եղած չպիտի ըլլար , յայնժամ տիկին Պրէնվիլիէ ըսած էր . — « Ահ , իմ եղբայրներուս բան մը մի ըսեր , վասն զի գաւազանի հարուածներ կուտան անոր և աղէկն այն է որ Լաչօսէ իւր ապրուստը ճարէ փոյթ չէ ուր որ ալ ըլլայ » :

Ուտտի Քիւլէ տ'Օպրէյի պարօններուն բնաւ բան մը չըսաւ թէ և կը տեսնէր որ Լաչօսէ ամեն օր Սէնթ-Քրուայի և յիշեալ Պրէնվիլիէ տիկնոջ տունը կերթար կուգար . այս տիկինը Սէնթ-Քրուան կը շողքօրթէր անոր արկղը ձեռք ձգելու համար և կուղէր որ Սէնթ-Քրուա քսան կամ երեսուն հազար Փրանքի տոմսակը իրեն յանձնէր , եթէ ոչ զայն գաշոյնով պիտի զարնէր . ըսած էր նաև որ յիշեալ արկղին մէջ գտնուածը պէտք չէ որ մարդ տեսնէ . թէ հետևանքը խիստ գէշ կըլլայ

և թէ արկղը իրեն կը վերաբերի : Վկան աւելցուց թէ արկղին բացուելէն վերջը ինքը յիշեալ տիկնոջ իմացուցած էր որ Բիքառ պաշտօնեան յիշեալ արկղին մէջ խել մը տարօրինակ բաներ գտնուին ըսած էր . այն ատեն տիկին Պրէնվիլիէ կարմրեցաւ և խօսքը փոխեց : Վկան հարցուց տիկնոջ թէ ինքը դաւակից չէ . պատասխանեց . — Ես , ոչ . յետոյ աւելցուց իբր թէ ինքնիրեն կը խօսի . — պէտք էր Լաչօսէն Բիքառտիա զրկել : Վկան ըսաւ նաև որ տիկինը երկար ատենէ ի վեր Սէնթ-Քրուայի քովն էր յիշեալ արկղը ձեռք ձգելու համար զոր եթէ ստանար , անշուշտ զայն խեղդել պիտի տար : Այս վկան աւելցուց նաև որ Լաչօսէին բռնուիլը և ամեն բան խոստովանելու պարտաւորեալ ըլլալը ինքը Պրիանքուռի իմացնելով , Պրիանքուռ Պրէնվիլիէ տիկնոջ վրայ խօսելով սապէս պատասխանած էր . — « ուրեմն տիկինը կորսուած է » : Նոյնպէս օրիորդ տ'Օպրէյ Պրիանքուռի համամիտ ըլլալը յայտնելով Պրիանքուռ պատասխանած էր թէ տ'Օպրէյ օրիորդը երախտապարտ է իրեն , զի թէ զինքը և թէ քաղաքային տեղակալին կինը թուանաւորել ուզած էին , սակայն ինքը արդելք եղած էր : Պրիանքուռի լսածին նայելով Պրէնվիլիէ տիկինը շատ անգամ ըսած էր թէ չսիրած մարդիկներէն ազատելու միջոցները խիստ շատ են և թէ արգանակի մէջ այդպիսիներուն ատրճանակի հարուած մը կ'տային :

Օրիորդ Էտմհիւէ Պրիսիէն տիկինը վկայեց թէ Սէնթ-Քրուա ամեն օր Պրէնվիլիէ տիկնոջ տունը կերթար որուն մէկ արկղին մէջ ինքը (օրիորդը) երկու փոքրիկ տուփ տեսած էր պարզուած սնդիկի փոշի պարունակող , զոր շատ աղէկ կը ճանչէր , վասն զի դեղագործի աղջիկ էր : Պրիսիէն աւելցուց նաև թէ Պրէնվիլիէ տիկնոջ հետ օր մը ճաշելով տիկինը ուրախութենէն փոքրիկ տուփ մը ցցուցած էր ըսելով , « Ահաւասիկ իմ թշնամիներէս վրէժ լուծելու միջոցը . այս տուփը թէև մեծ չէ , սակայն շատեր կրնայ մահացնել » : Այն ատեն օրիորդը տուփը անոր յանձնեց . բայց տիկինը անմիջապէս սթափելով պօռաց . « ո՛վ Աստուած իմ , ինչ ըսի , կաղաչեմ մէկու մը բան մի ըսեր » : Նոյնպէս վկայեց օրիորդը թէ պալատան գրադիրներէն Լամպեռթ ըսած էր իրեն որ Սէնթ-Քրուայի կողմանէ Պրէնվիլիէ տիկնոջ երկու փոքրիկ տուփ տարած էր . թէ Լաչօսէ շատ

անդամ տիկնոջ խոստացած հարիւր Փրանքը չստանալով Սէնթ-Քրուային գնաց գանգատեցաւ և սպառնացաւ որ իւր տեսածները քաղաքային տեղակալին պիտի երթայ պատմէ . այն ատեն հարիւր Փրանքը վճարուեցաւ իրեն . նոյնպէս կինը վկայեց որ Սէնթ-Քրուա և Պրէնվիլիէ տիկինը իրենց վրայ միշտ թոյն կը կրէին հարկ եղած ատեն գործածելու համար :

Լօռան Բէռուէտ որ Կլազէն դեղագործին քով կը ծառայէր , վկայեց թէ շատ անգամ տիկին մը իւր տիրոջ քով կուգար առաջնորդութեամբ Սէնթ-Քրուայի . թէ ծառան իրեն ըսած էր որ այս տիկինը Պրէնվիլիէ մարքիզուհին է և թէ գրաւ կը դնէ որ Կլազէնին թոյն պատրաստել տալու համար կուգային և եկած ատեննին կառքերնին Սէն-Ժէրմէնի տօնավաճառը կը թողուին :

Պրէնվիլիէ տիկնոջ քով ծառայող օրիորդ Մարի տը Վիլլըռէյ վկայեց թէ խորհրդական տ'Օպրէյի մահուանէն վերջը Լաչօսէ եկաւ Պրէնվիլիէ տիկինը գտաւ և անոր հետ առանձինն խօսեցաւ . թէ Պրիանքուռ իրեն (օրիորդին) ըսած է որ յիշխօսեցաւ . թէ Պրիանքուռ կը մեռցնէ . թէ Պրիանքուռ թունաւորուելէ վախնալով ամեն օր դեղթափ կը գործածէր ունով սպաննուելու երկիւղն ունէր միշտ , վասն զի տիկինը թունաւորութեան գաղտնիքն յայտնած էր անոր . թէ պէտք էր օրիորդ տ'Օպրէյի իմացնել որ զինքը թունաւորել կուզէր և թէ Պրէնվիլիէի տղայոց խնամակալն ալ թունաւորելու դիտաւորութիւն ունէին :

Մարի տը Վիլլըռէյ աւելցուց նաև թէ խորհրդականին մահուանէն երկու օր վերջը երբ Լաչօսէ Պրէնվիլիէ տիկնոջ ննջարանին մէջն էր և երբ հանգուցեալ քաղաքային տեղակալի քարտուղար Քուսթէի գալն իմացուցին , տիկինը Լաչօսէն իւր անկողնոյն ներքև պահեց . Լաչօսէն Սէնթ-Քրուայէն նամակ մը կը բերէր մարքիզուհւոյն :

Փրանսուա-Տէզիուէ պաշտօնակալը վկայեց թէ արքայական հրամանաւ Պրէնվիլիէ տիկինը Լիէժի մէջ ձերբակալելով , անոր անկողնոյն ներքև արկղ մը գտաւ զոր անմիջապէս կնքեց . տիկինը անոր մէջ գտնուած մէկ թուղթը խնդրեց որ իւր խոստովանութիւնն էր . բայց ինքը մերժեց զայն յանձնել . թէ ի

միասին գալու ատեն Պրէնվիլիէ տիկինը ճամբան իրեն ըսաւ թէ այնպէս կը կարծէր որ Սէնթ-Քրուայի թոյները շինողը Կլազէնն էր . և թէ Սէնթ-Քրուա օր մը Պրէնվիլիէ տիկնոջ հետ ժամագրութիւն մ'ընելով Սէնթ-Օնօռէի խաչատեղին չորս հատ պղզտիկ սրուակ ցցուց իրեն և ըսաւ . « ահա Կլազէնին ինձի զըրկածը » . տիկինը մէկ հատն ուզեց . բայց Սէնթ-Քրուա պատասխանեց թէ աւելի լաւ կը համարի մեռնիլ քան այսպիսի բան մը իրեն տալ : Տէզիուէ աւելցուց որ Անթուան-Պարպիէ աղերջաւորը երեք նամակ յանձնած էր իրեն զոր Պրէնվիլիէ տիկինը Թեռիայի դրած էր : Առաջինին մէջ կը խնդրէր որ զինքը պաշարող զինուորներուն ձեռքէն ազատելու համար փութով օգնութեան հասնի : Երկրորդին մէջ կըսէր որ պահակագունդը ընդ ամենը ութ անձէ կը բաղկանայ զոր հինգ հոգի կրնային ընկճել : Իսկ երրորդին մէջ կըսէր որ եթէ զինքը չը կրնար ազատել , գոնէ պաշտօնակալին ծառային ձին և պաշտօնակալը տանող կառքին չորս ձիերէն երկուքը սպաննէ և արկղը ու արձանագիրը յափշտակելով կրակը նետէ . եթէ ոչ ինքը (տիկինը) բոլորովին կորսուած է :

Լավիօլէթ աղերջաւորը վկայեց թէ Պրէնվիլիէ տիկինը ձերբակալութեան իրիկունը երկար դնդասեղ մը ուղեց բերանը նետել և սակայն ինքն արգիլեց զայն . Լավիօլէթ տիկնոջ ըսած էր թէ ինչ որ կը խօսուէր իր վրայ , ճշմարիտ էին և թէ ինքը (տիկինը) իր բոլոր ընտանիքը թունաւորած է , որուն պատասխանեց որ եթէ այդպիսի բան մը ըրած է , չար խրատուց արգիւնք է :

Անթուան-Պարպիէ աղերջաւորը վկայեց թէ Պրէնվիլիէ տիկինը սեղանին վրայ շուր խմելու ատեն գաւաթէն կտոր մը կտորել ուզեց , և որովհետև ինքը թոյլ չտուաւ , տիկինը իւր ամբողջ հարստութիւնը խոստացաւ տալ եթէ Պարպիէ զինքն ազատէր :

Անթուան վկայեց նաև որ տիկինը շատ նամակներ գրեց Թեռիայի և ամբողջ ճանապարհորդութեան մէջ ապակի , հող կամ գնդասեղ կլելու համար ամեն կարելի ջանքն ըրաւ . իրեն առաջարկեց Տէզիուէի կոկորդը կտրել , պարոն պաշտօնակալին ծառան սպաննել և արկղը յափշտակելով կրակը նետել և ամեն բան այրելու համար ալ վառած պատրոյկ գործածել . տիկինը

Բրնօթիէի ալ նամակ մը գրեց և իրեն յանձնեց, ըայց ինքը
տանիլ կեղծեց և չտարաւ :

Հուսկ ապա Յուանսուազ Ռուսէլ վկայեց թէ ինքը երբ
Պրէնսլիլիէ տիկնոջ քով կը ծառայէր, տիկնոջ օր մը իրեն հա-
ղարջի անուշեղէն տուաւ ուտելու համար. ինքն ալ դանակի
մը ծայրով ուտելէ վերջը անմիջապէս ցաւ մը զգաց : Օր մ'ալ
տիկնոջ պատառ մը թաց ապուխտ տուաւ իրեն զոր կերաւ և
այն օրէն ի վեր մինչև երեք տարի ամբողջ շարունակ ստա-
մաքսի ցաւ մ'ունէր այնպէս որ կարծես թէ սիրտը կը խայթէ-
ին, որով միշտ թունաւորուած ըլլալու կասկածն ունէր :

Այսպիսի ապացոյցներու առջև ուրացումը այլ ևս օգուտ
չէր ըներ, ուստի Պրէնսլիլիէ մարքիզուհին չկրցաւ այնչափ պըն-
դել թէ ինքը յանցաւոր չէ և ժամանակին երևելի փաստա-
բաններէն մին Պ. Նիվէլ յանձն առաւ անոր դատին փաստա-
բան կանգնիլ :

Պարոն Նիվէլ տաղանդաւոր հանճարով մը ամբաստանու-
թեան բոլոր պարագայները մի ըստ միով է հերքել ջանաց, մար-
քիզուհւոյն Սէնթ-Քրուայի հետ ունեցած շուտիւնը միայն խոս-
տովանելով. իսկ Պ. տ'Օպրէյի և իւր զաւակաց սպանութեան
մասին անոր ունեցած մասնակցութիւնը բոլորովին ուրացաւ .
այս սպանութիւնը աւելի Սէնթ-Քրուայի վրէժխնդրութեանը
կուտար որոց դէմ ոխ պահած էր : Իսկ տիկնոջ խոստովանու-
թեան գալով որ ամենէն զօրաւոր ամբաստանութիւնն էր, սկը-
սաւ այսպիսի պարագայներու մէջ արուած վկայութեանց վա-
ւերականութիւնը ժխտել, ըստ առածին թէ յանցաւորներուն՝
իրենց անձին դէմ տուած վկայութիւնը երբէք չկրնար ընդուն-
ուիլ : Ասոր ապացոյց երեք օրինակ յառաջ բերաւ զոր մի առ
մի կը յիշատակեմք :

ԱՌԱՋԻՆ ՕՐԻՆԱԿ

Տօմիւնիւքիւս Սօթօ անուն անուանի օրէնագէտ աստուա-
ծաբան մը որ Կարորոս Ե. ի խոստովանահայրն էր և Պօղոս Գ. ի
օրով Երեանից եպիսկոպոսական ժողովներուն ներկայ դանուած
էր, մարդու մը խնդիր ներկայացուց որ իւր մեղքերը պարու-

նակող թուղթ մը կորսնցուցած էր : Կղերական դատաւորը այս
թուղթը գտնելով և զայն գրողին վրայ տեղեկութիւններ քա-
ղել ուղեւով, իւր մեծէն խափու պատժուեցաւ այն իրաւամբ որ
խոստովանութիւնը սրբազան բան մ'ըլլալով յաւիտենական մա-
ռացութեան մէջ պէտք է թաղուի : Ըստ այսմ առաջարկու-
թեան հետեւեալ դատաստանը կատարուեցաւ զոր Փորթուկա-
լի Ռօտուիկ Աքիւնեօ անուանի արքեպիսկոպոսին « ճառ յա-
ղագոս խոստովանահարց » գրքին մէջ կը կարդամք :

Պարսըժօն քաղաքին մէջ գուսան մը մարդասպանութեան
պատճառաւ զոր ինքը 'գործած և խոստովանած էր, մահ-
ուան դատապարտուելով տանջանաց ժամը հասած ատեն մեր-
ժեց խոստովանուիլ և ամէն աղաչանք անկարելի եղան զայն
ողորբել, այնպէս որ ամենուն մտքին մէջ համոզում մը գոյացաւ
թէ դատապարտեալը մահուանէ վախնալուն համար չէր ուղեր
խոստովանուիլ :

Սպանիոյ Վալէնցիա քաղաքին ուր վճռուած էր դատա-
պարտութիւնը, արքեպիսկոպոս սուրբն Թովմաս տը Վիլլընէօ-
վի իմացուցին : Արժանաւոր հովիւր ուղեց ինքն օնձամբ հա-
մողել եղեւնագործը ի խոստովանութիւն որպէս զի հոգին և
մարմինը միանգամայն չկորսնցնէ : Բայց զարմացաւ երբ տեսաւ
որ դատապարտեալը խոստովանահարց դէմ սոսկալի ատելու-
թիւն մ'ունի. վասն զի իւր կատարած սպանութիւնը քահանա-
յի մը խոստովանելով, քահանայն զայն հրապարակ հանած էր
մինչդեռ ոչ ոք տեղեկութիւն չունէր այս դէպքէն . ինքը քա-
հանային խոստովանած ատեն իւր եղեւնագործութեան բոլոր
պարագայները պատմած և մինչև իսկ սպանելոյն թաղուած
տեղը յայտնած էր . խոստովանահարցը այս ամեն պարագայնե-
րը հրապարակելով, դատապարտեալը չէր կրցած ուրանալ,
հետեւաբար և մահուան դատապարտուած էր . այն ատեն մի-
այն իմացած էր որ իւր խոստովանահարցը սպանելոյն եղբայ-
րն էր և վրէժխնդրութեան ոգին ստիպած էր այս վատ քա-
հանան որ խոստովանութիւնը յայտնէ :

Սոյն յայտարարութեան վրայ սուրբն Թովմաս տը Վիլլընէօվ
խորհեցաւ որ այս դէպքը դատաստանէն աւելի կարևորութիւն
ունէր, զի դէպքը մասնաւոր անձի մը կեանքին կը վերաբե-
րէր մինչդեռ միւս կողմէն կրօնական պատուոյ խնդիր մը կը

ծագէր որոյ հետեանքը աւելի ծանր էր և կարևոր : Ուստի արքայիսկոպոսը դատապարտելոյն ըրած յայտարարութիւնը ստուգելու համար խոստովանահայրը կանչել տուաւ և տեսնելով որ քահանան իւր յայտնութեան ոճրագործութիւնը կը խոստովանի՝ հրաման ըրաւ դատաւորաց որ դատապարտեալը անպարտ արձակեն ի մեծ զարմացումս և ի խնդութիւն հասարակութեան :

Իսկ խոստովանահայրը թէև ամենածանր պատժոյ դատապարտուեցաւ , սակայն սուրբն թովմաս տը Վիլլընէօլ անոր անմիջապէս խոստովանիլը տեսնելով և փորձով ցցունելով որ դատաւորք իսկ խոստովանութեանց մեծ յարգանք պէտք է նշուիրեն , պաաիժը մեղմացուց :

Ե Ր Կ Ր Ո Ր Գ Օ Ր Ի Ն Ա Կ

1579 ին թուրուզցի պանդոկապետ մը օտարական մը հիւրընկալելով իւր տունը , ընտանիքէն դաղտնի դայն սպաննած և մառանին մէջ թաղած էր : Սակայն թշուառականը իւր խղճի խայթէն տանջուելով քահանային խոստովանեցաւ իւր մեղքը , սպանութեան բոլոր պարագայները և թաղուած տեղն ալ յայտնելով : Հանդուցելոյն ազգականները ամեն խուզարկութիւն ընելէ վերջը քաղաքին մէջ մունետիկ կանչել տուին ըսելով որ , ով որ այս մարդուն վրայ տեղեկութիւն մ'ունի , մեծ գումար մը պիտի ստանայ ի վարձատրութիւն : Խոստովանահայրը խոստացեալ գումարէն հրապուրուելով դաղտնապէս իմացուց թէ պանդոկապետին մառանին մէջ եթէ վնտուեն , ըսպանելոյն դիակը պիտի գտնեն : Եւ արդարև նշանակեալ տեղը գտան դիակը , պանդոկապետը բանտարկուեցաւ և տանջանաց ենթարկուելով խոստովանեցաւ գործած ոճիրը . բայց խոստովանութենէն վերջը միշտ պնդեց թէ իւր խոստովանահայրը զինքը մտանած էր :

Այն ատեն խորհրդարանը զայրանալով որ ճշմարտութիւնը գտնելու համար այսպիսի վատ միջոց մը ընտրած էին , բանտարկեալը անմեղ հրատարակեց մինչև որ խոստովանահօր վկայութենէն զատ ապացոյցներ կարենան գտնել : Իսկ խոստովանահայրը գլխատութեան դատապարտուեցաւ և իւր դիակը կրակը նետուեցաւ , զի դատարանը իմաստութեամբ վճռած էր թէ հոգ-

ւոյ վրկութեան համար անհրաժեշտ եղած սրբազան խորհուրդ մը յարգելը նուիրական պարտաւորութիւն է :

Ե Ր Ր Ո Ր Գ Օ Ր Ի Ն Ա Կ

Տաճիկ երիտասարդ մը հայ կնոջ մը սաստիկ սիրահարած էր . բայց կինը իւր իմաստութեամբ տարվածուին փափաքանաց երկար ատեն արդելք եղաւ : Վերջապէս երիտասարդը չկրնալով համբերել սպառնացաւ կնոջ որ թէ զինքը և թէ ամուսինը պիտի սպաննէ եթէ իւր կիրքը չգոհացնէ : Կինը այս սպառնալիքէն սոսկալով հաճութիւն կեղծեց և ժամագրութիւն ըրաւ իւր տունը այնպիսի ատեն մը յորում իւր ամուսինը բացակայ կը գտնուէր . բայց որոշեալ ժամուն ամուսինը վրայ հասաւ և թէպէտ տաճիկը թրով մը և երկու հրացանով զինեալ էր , սակայն գործն այնպէս բերաւ որ երկուքը տաճիկին վրայ յարձակելով սպաննեցին և իրենց տան մէջ թաղեցին առանց մէկու մը դիտութեան :

Այս դէպքէն քանի մը մ'օր վերջը իրենց ոճիրը ազգակից քահանայի մը դային խոստովանեցան և այս եղեռնական դէպքը մի ըստ միով պատմեցին : Աստուծոյ այս անարժան պաշտօնեան կարծեց որ մահմետական օրէնքով կառավարեալ երկրի մը մէջ ուր քահանայի և խոստովանահօր պաշտօնները կամ բնաւ ճանչցուած չեն և կամ ջնջուած են , արդարութիւնը երևան հանելու համար առնուած տեղեկութեանց աղբիւրը չեն քններ և իւր վկայութիւնը մի և նոյն ծանրութիւնն ունի ինչ որ ունին սովորական վկայութիւնք . ուստի այս պարագայներէն իւր անյագութեան մաս մը հանել ուզելով , քանիցս անգամ սպանիչ կնկան և ամուսնոյն տունը եկաւ ամեն ամեն ատեն մեծ մեծ գումարներ փոխ ուզեց սպառնալով որ եթէ չտան ոճրագործութիւննին երևան պիտի հանէ : Այս թըշուառները առաջին անգամ քահանային հնազանդութիւն յայտնեցին . բայց վերջերք իրենց բոլոր հարստութենէն զրկուելով անոր խնդրած գումարը մերժելու պարտաւորեցան . քահանան իւր սպառնալեաց հաւատարիմ մնալով անմիջապէս սպանելոյն հօրը գնաց և ամեն բան մի ըստ միով պատմեց ան-

կէ ստակ կորդելու համար : Այս անձը որ իւր որդին պաշտե-
լու չափ կը սիրէր , գնաց ժամանակին վէզիբը տեսաւ և իւր
որդւոյն սպանիչը գտած ըլլալն յայտնելով քահանային խոստո-
վանութեան շնորհիւ , արդարութեան գործադրութիւնը խընդ-
րեց . բայց այս յայտնութիւնը յուսացուած արդիւնքը չունե-
ցաւ . զի վէզիբը որքան կարեկցութիւն յայտնեց երկու դժ-
բաղդ հայերուն վրայ նոյնքան զայրոյթ զգաց քահանային
դէմ որ զանոնք մատնած էր :

Այն ատեն վէզիբը ամբաստանողը դահլիճին վրայ նայողսեն-
եակ մը զրկեց և Հայոց եպիսկոպոսը կանչել տալով հարցուց թէ
ինչ է խոստովանութիւնը , ինչ պատիժ պէտք է տալ այն քահանա-
յին որ խոստովանութիւնը երեւան կը հանէ և թէ ինչ ընել պէտք
է այն անձին նկատմամբ որոյ ոճրագործութիւնը այսպիսի մի-
ջոցաւ մը երեւան կուդայ : Եպիսկոպոսը պատասխանեց թէ խոս-
տովանութեան գաղտնիքը անբռնաբարելի է , թէ քրիստոնէ-
ական արդարութիւնը խոստովանութիւնը երեւան հանող քա-
հանան կենդանւոյն այրել կը հրամայէ և այս եղանակաւ ամ-
բաստանեալը անմեղ կը հրատարակէ . վասն զի յանցաւորին կող-
մանէ քահանային եղած խոստովանութիւնը քրիստոնէական
կրօնքէն հրամայեալ է և քահանային պատիժը յաւիտենական
դատապարտութիւն է :

Վէզիբը եպիսկոպոսին տուած պատասխանէն գոհ ըլլալով
ամբաստանողը ուրիշ սենեակ մը զրկեց և ամբաստանեալները
իւր ներկայութեանը կոչեց այս դէպքին պարագայները հաս-
կընալու համար . խեղճերը կիսամեռ վիճակի մէջ վէզիբին
ոտքը փարեցան , և կինը պատմեց որ իրենց պատիւն ու
կեանքը պաշտպանելու հարկէն ստիպեալ զէնք առած և
իրենց թշնամին սպաննած էին . աւելցուց նաև թէ Աստուած
միայն զիտէր իրենց ոճրագործութիւնը և այս դէպքը անշուշտ
գաղտնի պիտի մնար երկար ատեն եթէ մի և նոյն Աստուծոյ օ-
րէնքը հարկադրած չըլլար զիրենք երթալ քահանային խոս-
տովանելու անկէ քառութիւն ստանալու համար . բայց աւա՛ղ ,
զի քահանային անյադ ազահութիւնը զիրենք բոլորովին աղ-
քատացնելէ վերջը ոճրագործութիւնն ալ հրապարակ հանած
էր : Վէզիբը զանոնք երրորդ սենեակ մը զրկեց և ի ներկայու-
թեան եպիսկոպոսին մատնիչ քահանան կանչելով հարցուց թէ

խոստովանութիւնը երեւան հանող քահանայի մը ինչ պատիժ կը
տնօրինէ կրօնքը . յետոյ եպիսկոպոսին խորհրդով զայն ի տես
հասարակութեան կենդանւոյն այրելու դատապարտեց որպէս զի
դժոխքն երթալով իւր ոճրագործութեան և անհաւատարմու-
թեան պատիժը կրէ հոն :

Վճիռն անմիջապէս գործադրուեցաւ :

Պատարանին ցցուցած այս երեք օրինակները չկրցին ներ-
գործութիւն մ'ընել դատաւորաց վրայ , զի ասոնք մարքիզու-
հիին յանցաւորութիւնը վճռող բաւական ապացոյցներ ու-
նէին ի ձեռին . հետեւաբար դատաստանին ընթացքէն ամեն
մարդ համոզուեցաւ թէ մարքիզուհին պիտի դատապարտուի :
Արդարև դեռ վճիռը չարտասանուած 1676 յուլիս 16 հինգշաբ-
թի առաւօտ Սօրպօնի քահանան պարոն Բիւօղ՝ մարքիզու-
հիին բանտէն ներս մտաւ զոր առաջին նախագահը զրկած էր :
Այս պատուական դատաւորը դատաստանին ելքը կանխատե-
սելով և մտածելով որ այսպիսի յանցաւորի մը վերջին ժամն
հասած է և միթարութեան կը կարօտի , այս բարի քահանան
բերել տուած էր , որ թէև այս պաշտօնն չէր ուղած ընդունիլ
պնդելով թէ օտարի մը արիւնը առանց արտասուքի տեսնել
անկարելի է իրեն , նա մանաւանդ որ բանտարանին մէջ արդէն
երկու քահանայ կային որոնք շատ աղէկ կրնային վարել այս պաշ-
տօնը , սակայն Պ. նախագահին ստիպմամբ որ վստահելի անձ մը
կը մնառէր , պարտաւորած էր ընդունիլ այս ծանր պաշտօնը :

Արդարև Պ. նախագահը ինքն ալ կը խոստովանէր որ թէև
յանցաւորները դատելու և քննելու սովորած էր , սակայն Պրէն-
վիլիէ տիկնոջ տարօրինակ զօրութենէն ինքն ալ կը սոսկար : Պա-
րոն Բիւօթի դալէն մէկ օր առաջ նախագահը առաւուրնէ մին-
չև գիշեր այս դատին աշխատած էր յորում ամբաստանեալը
տաններք ժամ ամբողջ Պրիեանքուռի հետ երես առ երես
դատուած էր , որ ամենէն զօրաւոր վկայներէն մէկն էր : Մի
և նոյն օրը ուրիշ հարցաքննութիւն մ'ալ եղած էր հինգ ժամ
յորում տիկինը դատաւորաց մեծ յարգանք ցցուցած իսկ վը-
կային հետ գողողութեամբ վարուած և զայն յանդիմանած էր
ըսելով թէ անիկա արբեցող թշուառական ծառայ մ'էր և զին-
քըն իւր տունէն վռնտած էր անառակութեանցը համար :

հետեւաբար այսպիսի անձի մը վկայութիւնը ի հարկէ իրեն դէմ պիտի ըլլար : Առաջին նախագահը այս անողորբելի ողին խորտակելու համար կրօնի պաշտօնէին վրայ դրած էր իր յոյսը . վասն զի կրէվի մէջ զանիկա սպանները միայն բաւական չէր այլ պէտք էր որ անոր թոյններն ալ հետը մէկտեղ մեռնէին և կամ հասարակութիւնը անոր մահուան վրայ երբէք չցաւէր :

Հայր Բիռօզ մարքիզուհւոյն ներկայացաւ իւր քրոջմէն նամակ մ' ունենալով որ ինչպէս ըսինք , Սէն-ժագի վանքին մէջ քոյր Մառի անուամբ կրօնաւորուհի մ' էր . այս նամակը դորովագին և սիրալիբ լեզուաւ մը կը յորդորէր տիկին Պրէնվիլիէն որ այս պատուական անձին վրայ վստահութիւն ունենայ և զանիկա ոչ միայն իբրև պաշտպան այլ իբրև բարեկամ նկատէ :

Երբ Պ. Բիռօզ ամբաստանելոյն քով դնաց , ամբաստանեալը դատարանէն նոր կը դառնար ուր երեք ժամ ամբողջ մնացած էր առանց բան մը խոստովանելու և առաջին նախագահին խօսքերէն յուզուելու . թէպէտ և նախագահը դատաւորի պաշտօնը կատարելէ զատ քրիստոնէի լեզուաւ խօսած և անոր ողբաղին վիճակը յայտնած էր . վասն զի տիկինը վերջին անգամն էր որ մարդոց կերևար և քիչ ատենէն Աստուծոյ պիտի երևար . նախագահը անոր սիրտը շարժելու համար արտասուալիբ աչօք և հեծեծածայն այնպիսի խօսքեր արտասանած էր որ ամենէն հին և ամենէն խիստ դատաւորներն անգամ ըսելով յարտասուս չարժած էին : Մարքիզուհին քահանան տեսներուն պէս , կարծելով որ իւր դատաստանը մահուան փոխուած է , դէպ ի անոր յառաջացաւ ըսելով .

— Պարոնն է ուրեմն որ կուգայ . . . :

Բայց հայր Քամիլիսի որ պարոն Բիռօզի հետ ընկերացած էր , անմիջապէս ընդմիջելով .

— Տիկին , ըսաւ անոր , նախ աղօթքով մը սկսինք :

Այն ատեն երեքը մէկէն ի ծունր իջան և Սուրբ Հոգւոյն մաղթանք մ' ուղղեցին . Պրէնվիլիէ աիկինը խնդրեց որ աղօթք մ' ալ Աստուածածնայ ուղղեն . յետոյ երբ աղօթքը լնցաւ քահանային մօտեցաւ և իւր խօսքը շարունակելով ,

— Պարոն , ըսաւ , զձեզ ուրեմն դրկեց Պ. նախագահը զիս մխիթարելու համար . ձեզի հետ պիտի անցնեմ իմ կենացս մը . նացած մասը . երկար ատենէ ի վեր անհամբեր կը ցանկայի զձեզ տեսներու :

— Ի բոլոր սրտէ , տիկին , պատասխանեց քահանան , կարելի եղած հոգևորական պաշտօնները կատարելու կուգամ , միայն կը ցաւիմ որ այսպիսի դժբաղդ պարագայի մը մէջ կը կատարեմ զայն :



Սենթ-Քրուս կայմակնանար գետին քաւպեցաւ .

— Պարոն , կրկնեց մարքիզուհին ժպտելով , պէտք է ամեն բանի հպատակիլ :

Այն ատեն դէպ ի հայր Քավինեի դառնալով շարունակեց . « Հայր իմ, շատ երախտապարտ եմ ձեզ պարօնը իմ քովս բերելուդ և առ իս ըրած բոլոր այցելութեանցդ համար , կաղաչեմ աղօթեցէք ինձի համար : Այսուհետև միայն պարօնին հետ պիտի խօսիմ . վասն զի անոր հետ գործեր ունիմ տեսնելիք . ողջամբ երթաք հայր իմ, ինձի տարած բոլոր ինամացդ համար Աստուած վարձահատոյց ըլլայ » :

Այս խօսքերէն վերջը հայր Քավինեի դուրս ելաւ . մարքիզուհին քահանային , և անոր վրայ հսկող երկու մարդոց և կընոջ հետ առանձին մնաց : Բանտարկեալը Մօնտիօմէռուի աշտարակին նման շինուած մեծ սենեկի մը մէջ կը գտնուէր որուն խորը գորշագոյն վարագուրէ անկողին մը տիկնոջ համար և փոկէ անկողին մը պահապանուհւոյն համար կը գտնուէր : Ասիկա մի և նոյն սենեակն էր ուր ժամանակաւ Թէօֆիլ բանաստեղծը ինչպէս կ'ըսեն , բանտարկուած էր և ուր տակաւին դռան քով անոր ձեռքովը գրուած ոտանաւորներ կը տեսնուէին :

Մարքիզուհին վրայ հսկող երկու մարդիկ և կինը քահանային ինչ նպատակաւ գալը հասկնալնուն պէս սենեկին խորը քաշուեցան և թողուցին որ մարքիզուհին Աստուծոյ առաքելոյն մխիթարութիւնները ազատաբար խնդրէ և ընդունի : Այն ատեն մարքիզուհին և քահանան սեղանի մը քով դէմ դէմի նստան . մարքիզուհին ինքզինքը դատապարտեալ համարելով սկսաւ խօսակցիլ . բայց քահանան ըսաւ իրեն թէ տակաւին դատաստանը տեսնուած չէ , թէ վճիռը երբ տրուիլը մանաւանդ ինչ վախճան ունենալը չը գիտեր : Մարքիզուհին ընդմիջեց ըսելով . « Պարոն , դժուարին չէ ինձ դուշակել վճիռը . եթէ տրուած չէ , անշուշտ պիտի տրուի և այդ մահուան վճիռ է , զոր այս առաւօտ կտրասեմ ըսել . միայն Պ. նախագահէն շնորհ մը կապտեմ , այն է դատաստանէն վերջը անոր գործադրութիւնը յապաղել . վասն զի եթէ վերջապէս այսօր վճիռը գործադրուի ժամանակ չպիտի ունենամ պատրաստուելու , մինչդեռ այնպէս կը կարծեմ թէ երկար ժամանակի պէտք ունիմ » :

Քահանան բանտարկեալէն այսպիսի խօսքեր չէր սպասեր . ուստի անոր զգացումները տեսնելով շատ ուրախ եղաւ : Եւ արդարև Պ. նախագահէն զատ հայր Քավինեի ալ պատմած էր իրեն (քահանային) թէ նախընթաց կիւրակէն նախագահը

տիկնոջ մահուանէ ազատիլը այնքան հաւանական չէր նկատեր և քաղաքին մէջ համբաւեալ զրոյցը հետզհետէ ստուգութեան կը փոխուէր : Այս խօսքերը առաջին անգամ բանտարկելոյն երկիւղ և մինչև իսկ սոսկում ազդեցին , յարմէ պարտաւորեալ ըսաւ . « Հայր իմ , ուրեմն այս գործէն պիտի մեռնիմ ես » : Եւ երբ քահանան ուղեց քանի մը մխիթարական խօսքեր ուղղել իրեն , նա անմիջապէս գլուխը վեր վերցնելով և թօթուելով սէգ ձայնով մը ըսաւ . « Ոչ , ոչ , հայր իմ , հարկ չկայ զիս մխիթարելու . զի պատրաստ եմ զօրաւոր կնոջ նման անմիջապէս մեռնելու » :

Եւ որովհետև քահանան ըսաւ իրեն թէ մահը այնպիսի բան մը չէ որուն այնքան շուտ և այնքան դիւրութեամբ կարելի ըլլայ ենթարկուիլ և հետևաբար պէտք է զայն նախատեսել յանկարծակիի չգալու համար , կինը պատասխանեց թէ ընդամէնը մէկ քառօրդ ժամ պէտք է իրեն խոստովանելու և երկվայրկեան մը մեռնելու համար : Քահանան դո՛հ եղաւ տեսնելով որ կիրակիէն մինչև հինգշաբթի բանտարկելոյն զգացումները այս աստիճան փոխուած էին :

« Այս , շարունակեց տիկինը , որքան մտածեմ այնքան աւելի մօտ կը գտնեմ ինքզինքս Աստուծոյ դատարանին առաջ ուր պիտի դատուիմ յԱստուծոյ մարդոց դատաստանէն վերջը » :

« Տիկին , պատասխանեց քահանան , չեմ գիտեր թէ վճիռը ինչ պիտի ըլլայ և ոչ իսկ թէ երբ պիտի արտասանուի , բայց եթէ ՚ի մահ դատապարտե զքեզ և այսօր իսկ արտասանուի , կը համարձակիմ ըսել որ վաղուքնէ առաջ չկրնար գործադրուիլ . ուստի ենթադրելով որ քու մահդ անստոյգ իսկ ըլլայ , հարկ է որ ամեն պատահարներու այժմէն պատրաստուիս » :

« Ո՛հ , պատասխանեց բանտարկեալը , իմ մահս ստոյգ է և պէտք չէ որ ապարդիւն յոյսերով խաբուիմ . ձեզի իմ սրտիս գաղանիքը պիտի յայտնեմ . բայց ասկէ առաջ պէտք է զխնամ , թէ ինչ գաղափար ունիք դուք իմ վրաս և թէ ինչ պէտք է ընեմ ներկայ վիճակիս մէջ » :

« Դուք իմ դիտաւորութիւնս կը գուշակէք , պատասխանեց քահանան , և իմ ըսելիք խօսքերուս ուղին կը պատրաստէք : Չեր խղճմտանայ գաղանիքը հասկնալէ և Աստուծոյ հետ ձեր

ունեցած գործերուն վրայ վիճարանելէ առաջ ուրախ եմ, տի-
կին, որ ձեր բռնելիք ընթացքին վրայ քանի մը խրատներ պի-
տի տամ: Չձեզ տակաւին յանցաւոր չեմ ճանչեր և ձեզի են-
թադրեալ բոլոր ոճիրներուն վրայ իմ դատաստանս կը յետաձը-
գեմ զի ձեր խոստովանութեանը վրայ կրնամ հիմնել զայն. ա-
յո՛, ձեր յանցաւոր ըլլալուն վրայ տակաւին կը տարակուսիմ.
սակայն ձեզի դէմ եղած ամբաստանութիւնները գիտեմ. այս
ամբաստանութիւնները հրապարակ ելած են և մինչև առ իս
հասած են. վասն զի կրնաք երեւակայել որ ձեր գործերը մեր-
կապարանոց եղած են և խիստ շատեր գիտեն զայն »:

« Այո՛, այո՛, ըսաւ բանտարկեալը ժպտելով, գիտեմ որ շատ
կը խօսին իմ վրաս և ժողովրդեան առակ եղած եմ »:

« Ուրեմն, կրկնեց քահանան, քեզի դէմ եղած ամբաստա-
նութիւնը թունաւորութեան ոճիր մ'է. ես կըսեմ որ եթէ դու
յանցաւոր ես ինչպէս կը կարծեն, Աստուծմէ ներում չես կըր-
նար ընդունիլ մինչև որ չը խոստովանիս դատաւորաց թէ ինչ է
քու թոյնդ, ինչ է անոր դեղթափը և ո՞յք են քու դաւակից-
ներդ: Պէտք է տիկին, բոլոր չարագործաց անունները տալ ա-
ռանց մէկուն խնայելու, վասն զի եթէ անոնց ներես. քու թոյ-
նըդ պիտի չարունակեն և մահուանէդ վերջը անոնց ընելիք
բոլոր սպանութեանց համար յանցաւոր պիտի ըլլաս դուն. զի
կենդանութեանդ չուղեցիր անոնց անունները յայտնել. այս-
պէս ամեն մարդ պիտի ըսէ թէ դուն տակաւին կատրիս վասն
զի քու ոճիրդ մահուանէդ վերջն ալ պիտի ապրի: Արդ, տի-
կին, պէտք է գիտնաս որ մահուան հետ միացեալ մեղքը եր-
բէք ներում չընդունիր և քու ոճիրներուդ թողութիւն ստա-
նալու համար եթէ ոճրագործ չես, պէտք է քեզմէ առաջ գա-
նոնք սպաննել, իսկ եթէ չըստաննես, գիտցիր, տիկին, որ ա-
նոնք դքեզ պիտի սպաննեն »:

« Այո՛, պարոն, կը հասկնամ ձեր ըսածը, ըսաւ մարքիզու-
հին վայրկեան մը լուրթենէ և խորհրդածութենէ վերջը, և
առանց յանցաւոր ըլլալ խոստովանելու կը պատասխանեմ ձեզ
որ եթէ յանցաւոր եմ, լաւ կը կշռեմ ձեր խօսքերը. սակայն
խնդիր մ'ունիմ, պարոն և գիտցէք որ անոր լուծումը շատ կա-
րեւոր է ինձի. արդեօք այս աշխարհի մէջ աններելի մեղք մը
չկայ. արդեօք չկան ահագին և բազմաթիւ մեղքեր որոց ե-

կեղեցին չը համարձակի ներել և եթէ Աստուծոյ արդարու-
թիւնը չը ներեր, անոր գթութիւնը չը կրնար արձակում չնոր-
հել: Այս խնդիրը կ'ընեմ ձեզ զի անօգուտ է խոստովանիլս ե-
թէ այսպիսի յոյս մը չկայ »:

« Ինձի ըրած հարցումդ, տիկին, պատասխանեց քահա-
նան ակամայ սոսկմամբ մը նայելով մարքիզուհիին, ընդհանուր
խնդիր մ'է և քու խղճին ներկայ վիճակին հետ բնաւ վերա-
բերութիւն չունի: Եւ սակայն պատասխանեմ քու հարցմանդ:
Ոչ, տիկին, այս կենաց մէջ աններելի մեղք երբէք չկայ որքան
ալ ահագին որքան ալ բազմաթիւ ըլլան, հաւատոյ մէկ տրա-
մադրութիւնն է այս, այնպէս որ իբրև ուղղափառ չես կրնար
մեռնիլ եթէ անոր վրայ տարակոյս ունիս: Ստոյգ է որ ժա-
մանակաւ քանի մը աստուածաբաններ հակառակը պնդեցին.
բայց իբրև հերետիկոս դատապարտուեցան: Յուսահատութիւ-
նը և վերջնական անզղջութիւնը միայն աններելի են և ասոնք
մահուան մեղքեր են և ոչ կենաց »:

« Պարոն, պատասխանեց մարքիզուհին, անշուշտ Աստուած
կը ներէ ինձ որ ձեր ըսածներուն վրայ համոզուիմ և կարծեմ
թէ անիկա բոլոր մեղքերը կրնայ ներել, ինչպէս որ այս հե-
ղինակութիւնը շատ անգամ գործածած է: Հիմա իմ բոլոր ցա-
ւրս այն է որ Աստուած իւր բարութիւնը չուզեր ի գործ դը-
նել ինձ նման թշուառ էակի մը վրայ որ անոր չնորհաց անար-
ժան գտնուած է »:

Քահանան կարելի եղածին չափ զայն վստահեցուց և սկը-
սաւ զայն ուշադրութեամբ քննել անոր հետ խօսակցելով. « Ի
ծնէ աներկիւղ և քաջասիրտ կին մ'է ասիկա, կըսէր ինքնիրեն.
հեզ և համեստ երեւակայութեան մը ծնունդ, ամեն բանի ան-
տարբեր է, առոյգ և թափանցիկ միտք մ'ունի, ամեն ինչ
պարզ և յստակ կերպով կը մբռնէ և կարճ բայց ճիշդ ու մե-
կին բառերով կը բացատրէ, գոյնար գործէ մը դուրս ելնելու
համար յանկարծ հնարքներ կը գտնէ և ծանրաաղաուկ իրաց
մէջ լաւ գիրք կը բռնէ. մանաւանդ թէ բնաւ բանի մը չը յա-
րիր և մի և նոյն բանի վրայ խօսուած ատեն ի վեր կոստնու.
ասոր համար է որ, անոր ուղղած խօսքերս ժամանակ ժամա-
նակ փոփոխելու կը պարտաւորիմ, որպէս զի մէկ նիւթի վրայ
քիչ զբաղեցնեմ զանիկա, զոր նոր ձեռով և գարձուածքով մը

կը ներկայացնեմ՝ և կառաջարկեմ իրեն » :

« Անիկա քիչ և բաւական աղէկ կը խօսէր , բայց առանց պատ-
րաստութեան և արուեստակութեան , ինչ որ կուզէր ըսել այն
միայն կըսէր . անոր դէմքէն և խօսակցութենէն վատարարոյ
մէկն ըլլալը ամենեւին չէր հասկցուեր ինչպէս հասկցուեցաւ իւր
հայրասպանութիւնը հրապարակաւ խոստովանելովը . այսպէս
զարմանալի էր տեսնել մէկը որ մեծ բնաւորութիւն , յանկար-
ծական պատահարներու մէջ անտարբերութիւն , անյողդողդ
հաստատամտութիւն , և մահուան սպասելու և անոր ամեն տան-
ջանքները կրելու համար աներկիւղութիւն ունենալովն հայրաս-
պանութեան մեծ վատութիւն մը գործելու կարող եղած ըլլայ
զոր դատաւորաց խոստովանեցաւ : Անիկա իւր դէմքին վրայ այս-
պիսի մեծ չարութիւն մը պատկերացնող բան մը չունէր . շագա-
նակագոյն և խիտ մազեր ունէր , դէմքը կլոր և բաւական կա-
նոնաւոր էր , աչքերը կապուտակ , աղու և կատարելապէս գե-
ղեցիկ էին , մորթը չափազանց սպիտակ և քիթը բարեկազմ
էր . դիմաց գծագրութիւնը բնաւ անհաճոյ բան մը չունէր , բայց
խիտ հրապուրիչ բան մ'ալ չունէր . արդէն քանի մը խորշու-
ներ կային դէմքին վրայ և բուն տարիքէն աւելի տարիքոտ
կերեւար . բան մը ստիպեց զիս առաջին խօսակցութեանս իւր
տարիքը հարցնելու » :

« Պարոն , ըսաւ ինծի , եթէ մինչև Մազդաղինէի օրը ապ-
րէի 46 տարեկան պիտի ըլլայի . նոյն օրը ծնայ ես և նոյն ան-
ուամբ կը յորջորջուիմ . մկրտութեանս Մարիամ Մազդաղինէ
կոչեցին զիս . բայց որքան ալ մօտ է այս տօնը սակայն մինչև
այն օրը չպիտի ապրիմ . այսօր կամ առաւելն վաղը պիտի
վերջանայ այս կեանքը և մեծ շնորհք մը բրած պիտի ըլ-
լան ինծի եթէ օր մը աւելի ապրիմ , այս շնորհք ձեր խոս-
տումէն կախեալ է » : « Տիկինը տեսնողը անպատճառ 48 տա-
րեկան կը կարծէր : Անոր դէմքը ի բնէ որքան ալ գեղե-
ցիկ էր , սակայն երբ անոր երեւակայութեան մէջ վիշտ մը
ծագէր , անպատճառ դէմքը կը մասնէր զինքը և ժամա-
նակ առ ժամանակ բարկութեան և ցասման նշաններ կը տես-
նէի : Մոռցայ ըսելու թէ տիկինը խիտ կարճահասակ էր :
Ահաւասիկ անոր մարմնոյն և մտաց նկարագրութիւնը զոր քիչ
ժամանակի մէջ ճանցայ » :

Մարքիզուհին իւր կենաց առաջին ծրագիրը խոստովանահօր
ներկայացուցած ատեն յիշեց որ քահանան պատարագ մա-
տուցած չէր տակաւին և պատարագի ժամանակը հասած ըլ-
լալն իմացնելով բանտարանին մատուռը նշանակեց և աղաչեց
քահանային որ պատարագը ի պատիւ Նօզուր-Տամի ընէ որ
պէս զի սուրբ Կուսին առ Աստուած բարեխօսութիւնը կարե-
նայ ընդունիլ , զոր միշտ իբրև պաշտպան նկատած էր և մաս-
նաւոր երկիւղածութեամբ կը յարգէր իւր ոճիրներուն և անա-
ռակութեանց մէջ . և որովհետև քահանային հետ մէկտեղ
չէր կրնար իջնել խոստացաւ որ գոնէ մտքով ներկայ ըլլայ
պատարագին :

Առաւօտեան ժամը տասն ու կէսին քահանան անկէ բաժ-
նուեցաւ որուն հետ 4 ժամ շարունակաբար խօսակցելով , իւր
խանդակաթ գորովով և հեղահամբոյր բարոյականաւն այնպիսի
խոստովանութիւններ ընել տուած էր անոր զոր դատաւորաց
սպառնալիքը և տանջանաց երկիւղը չէին կրցած ի վեր հանել :
Այսպէս բարի քահանան սրբութեամբ և երկիւղածութեամբ
պատարագ մատոյց և աղաչեց զԱստուած որ թէ խոստովանա-
հօր և թէ համբերողին մի և նոյն զօրութեամբ օգնականութեան
հասնի :

Քահանան պատարագէն վերջը բանտարանը մտնելու ա-
տեն քիչ մը գինի խմելով , պալատին Սընէյ անուն գրավաճառի
մը հանդիպեցաւ դիպուածով և անկէ իմացաւ թէ Պրէնվիլիէ
տիկնոջ դատաստանը տեսնուած և թեք կտրելու դատապար-
տուած էր նա : Այս խիտ պատիժը որ վերջը վճռագրոյն մէջ
մեղմացաւ , իրեն գորովազին գութ մը ներշնչեց առ զղջաց-
եալն և անմիջապէս անոր քովն ելաւ :

Դուռը բացուելուն պէս տիկինը զուարթութեամբ անոր ընդ-
առաջ վազեց և հարցուց թէ իրեն համար աղէկ աղօթեց , և
երբ քահանան զինքը վտահեցուց . « Հայր իմ , ըսաւ անոր ,
մեռնելէ առաջ վերջի թոշակն ընդունելու միտքարութիւնը չը
պիտի ունենամ արդեօք » :

« Տիկին , պատասխանեց քահանան , եթէ մահուան դատա-
պարտուած ես , անշուշտ առանց ատոր պիտի մեռնիս և զքեզ
խաբած պիտի ըլլամ եթէ այսպիսի յոյս մը տամ քեզ : Պատ-
մութեան մը մէջ Սէն-Բօլ անուն սպարապետի մը մահը կը կար-
գամք որ չէ կրցած վերջին թոշակն ընդունիլ թէև շատ աղա-

չանքներ ըրած է : Ասիկա կուէվի մէջ գլխատուեցաւ Նօղոք-
Տամի աշտարակներուն զխմացը . իւր աղօթքը կատարեց .
ինչպէս դուն պիտի կատարես քուկինդ եթէ մի և նոյն բաղ-
դին վիճակիս : Ահաւասիկ այսչափ և Աստուած իւր բարու-
թեամբը ասիկա բաւական կը համարի » :

— « Բայց ինձի կերևայ թէ , կրկնեց մարքիզուհին , Սէն-
մաու և Թու պարոնները մեռնելէ առաջ հաղորդուեցան » :

— « Ձեմ կարծեր , պատասխանեց քահանան , վասն զի ա-
տոնց գլխատութիւնը պատմող գրքերուն մէջ այդպիսի բան
մը գրուած չէ » :

— « Բայց պարոն Մօսմօռանսին , ըսաւ բանտարկեալը » :

— « Բայց պարոն Մառիլաք , պատասխանեց քահանան » :

Արդարև եթէ հաղորդութեան պարգևը առաջինին չնորհ-
ուած էր , երկրորդին մերժուած էր որուն վրայ մարքիզուհին ա-
հաբեկ եղաւ ու զի պարոն Մառիլաք իւր ընտանիքէն էր և անոր
հետ ունեցած ազգականութիւնը մեծ պատիւ կը համարէր
իրեն : Անշուշտ տիկինը չէր գիտեր որ պարոն Ռօհան գիշե-
րային պատարագի մէջ զոր հայր Պուռտալու նորա հոգւոյն
փրկութեան համար մատուցած էր , հաղորդութիւն առած էր ,
վասն զի անոր վրայ բնաւ չը խօսեցաւ և քահանային տուած
պատասխանին վրայ հառաչանք մը արձակելով բաւականացաւ :

« Այլուստ , շարունակեց քահանան , երբ արտաքոյ կարգի
օրինակ մը յառաջ կը բերէք , շատ խորը մի թափանցէք կ'ա-
ղաչեմ , զի ատոնք բացառութիւն են և ոչ օրէնք : Դուք առանձ-
նաշնորհութիւն չէք կրնար սպասել և իրաց վիճակը ձեզի նը-
կատմամբ սովորականէն տարբեր չը կրնար ըլլալ . այսպէս ինչ-
պէս ուրիշ բանտարկելոց նոյնը պիտի ըլլայ նաև ձեզի համար :
Ինչ պիտի ընէիք եթէ Կարողս Բ. ի օրով ծնած և մեռած ըլ-
լայիք : Մինչև այս իշխանին թագաւորութեան օրը յանցաւոր-
ները առանց խոստովանութեան կը մեռնէին և միայն ասոր հը-
րամանաւ այս խոստութիւնը վերցաւ : Ասկէ զատ , տիկին , հաղոր-
դութիւնը փրկութեան համար անհրաժեշտաբար կարևոր չէ և
մարդիկ կրնան հոգևորապէս հաղորդուիլ Աստուծոյ խօսքը
կարդալով որ մարմնոյն նման է , եկեղեցւոյ հետ միանալով որ
Քրիստոսի խորհրդաւոր ոգին է և անոր հետ ու անոր համար
տանջանաց այս վերջին հաղորդութիւնը կրելով որ ձեր բաժինն

է տիկին և որ տանջանաց ամենակատարեալն է : Եթէ դուն քու
ոճիրդ ի բոլոր սրտէ կարհամարհես , եթէ դուն զԱստուած բո-
լոր հոգւովդ կը սիրես և եթէ հաւատք ու երկեղածութիւն
ունիս , քու մահդ մարտիրոսութիւն և երկրորդ մկրտութիւն
մը պիտի ըլլայ » :

« Աւաղ , կրկնեց մարքիզուհին , ձեր ըսածներուն նայելով ո-
րովհետև զիս ազատելու համար դահճին ձեռքը միայն պէտք
էր , ինչ պիտի ըլլայի արդեօք եթէ Լիէժի մէջ մեռնէի և այս
ժամուս ո՞ւր պիտի գտնուէի . նոյնպէս եթէ չը բռնուէի և Գաղ-
ղիայէն դուրս 20 տարի ալ ապրէի , ինչ պիտի ըլլար իմ մահս
քանի որ զայն սրբադնացներու համար կառավիսարան մը միայն
պէտք էր : Հիմա կը ճանչնամ իմ բոլոր սխալներս , պարոն , և վեր-
ջինը այսինքն դատաւորներուն զիմաց իմ ըրած լրբութիւնս ամե-
նէն մեծը կը համարիմ : Բայց գոհութիւն Աստուծոյ , տակաւին
բան մը կորսուած չէ , և որովհետև վերջին հարցաքննութիւն
մ'ալ ունիմ , կուզեմ իմ բոլոր կեանքս կատարելապէս խոստովանիլ .
խսկ դուք , պարոն , կը խնդրեմ որ իմ կողմանէս Պ. նախագահէն
մասնաւորապէս ներում խնդրէք . երէկ ամբաստանելոյն աթո-
ռին վրայ գտնուած միջոցիս խիստ սրտաշարժ խօսքեր ըրաւ
ինձի որոց վրայ յուզուեցայ , բայց չուզեցի յայտնել . վասն զի
կը խորհէի որ եթէ ես չխոստովանիմ իմ յանցանքս , զիս դա-
տապարտելու համար բաւական զօրաւոր ապացոյցներ չպիտի
կարենային գտնել : Սակայն բոլորովին տարբեր եղաւ և հա-
մարձակութեամբս դատաւորները վրաս դայթակղեցուցի . արդ-
կը ճանչնամ իմ սխալս և զայն պիտի դարմանեմ . աւելցու-
ցէք նաև պարոն , որ Պ. նախագահին այսօր ինձի ըրած դա-
տաստանին վրայ ամենեկին չեմ ցաւիր և ոչ իսկ կը դանդաղեմ
պարոն ատենադպրին դէմ , այլ երկուքէն ալ յանհունս շնոր-
հակալ եմ զի իմ փրկութիւնս անոնցմէ կախեալ էր » :

Քահանան բանտարկեալը քաջալերելու համար պատասխա-
նելու վրայ էր և ահա դուռը բացուեցաւ , անոր ճաշը կը բե-
րէին զի ժամը մէկ ու կէսն էր : Մարքիզուհին ընդմիջեց և
մտաց ազատութեամբ ճաշին հանդերձանացը հսկեց իբրու թէ
իւր գիւղային տան մէջ պատիւ կընէր , իրեն պահպանութիւն
ընող կինը և երկու մարդիկը սեղանի նստեցուց և քահանա-
սին դառնալով , « Պարոն , ըսաւ անոր , անշուշտ կուզէք որ ձե-

զի համար չնեղուինք . այս բարի անձինքը ինձի հետ ճաշելու սովորութիւնն ունին զիս մինակ չձգելու համար և մի և նոյնը պիտի ընենք այսօր եթէ ներէք » : Յետոյ անոնց դառնալով ըսաւ « Այս վերջին ճաշն է որ ձեզի հետ պիտի ընեմ » : Ապա խօսքը կնոջն ուղղելով , « Իմ թշուառ Ռիւս տիկինս , ըսաւ անոր , երկար ատենէ ի վեր քեզի նեղութիւն կուտամ , բայց քիչ մ'ալ համբերէ և պիտի ազատիս ինձմէ . վաղը պիտի կրնաս Տրափէ երթալ և ասոր համար բաւական ժամանակ ունիս . վասն զի եօթը կամ ութը ժամ վերջը ալ ինձի հետ գործ չպիտի ունենաս և ես աս պարոնին ձեռացը մէջ պիտի գտնուիմ և քեզի թոյլ չպիտի տան որ ինձի մօտենաս : Արդ այս վայրկենէն ազատ ես մեկնելու վերատին հոս դառնալու համար , վասն զի չեմ կարծեր որ իմ գլխատութիւնս տեսնելու սիրտդ հանդուրժէ » :

Մարքիզուհին այս խօսքերը կըսէր մտաց կատարեալ հանդարտութեամբ և առանց դողողութեան . և որովհետեւ այս անձինքը ժամանակ առ ժամանակ ետեւին կը դառնային իրենց արցունքը ծածկելու համար , մարքիզուհին գթութեան ակնարկ մը նետեց անոնց վրայ : Յայնժամ տեսնելով որ ճաշը սեղանին վրայ մնացած էր և ոչ ոք կուտէր , հրաւիրեց քահանան որ իւր ապուրն ուտէ ներում խնդրելով որ բանտապահը կաղամբ խառնած էր մէջը որով ապուրը պարզ և քահանային հրամայելու անարժան եղած էր : Իսկ ինքը արգանակ մը խմեց և երկու հաւկիթ կերաւ , ներում խնդրելով որ չէր կըրնար ծառայել իրենց . բայց կը ցաւէր որ իր քովը ոչ պատառաքաղ և ոչ դանակ թողած էին : Ճաշին մէջ տեղը բանտարկեալը աղաչեց քահանային որ անոր կենացը խմելու հրաման չնորհէ : Քահանան ալ փոխադարձաբար անոր կենացը խմեց , տիկինը շատ ուրախացաւ . « Վաղը պահք է , ըսաւ դաւաթը վար դնելով . և թէպէտ իմ մեծ աշխատանացս օրն է վաղը որովհետեւ տանջանք և մահ միանգամայն պիտի կրեմ , բայց երբէք չեմ ուզեր եկեղեցւոյ կանոնաց դրժել պահքս ուտելով » :

— « Տիկին , պատասխանեց քահանան , եթէ զօրանալու համար արգանակի պէտք ունիս , ներելի է քեզ . վասն զի անձիդ փափկութեանը համար չէ այլ հարկ անհրաժեշտ ըլլալուն համար զայն պիտի ուտես . եկեղեցւոյ օրէնքը չը հակառակիր այս մասին » :

— « Պարոն , կրկնեց մարքիզուհին , եթէ ասոր պէտք ունե-

նայի , դժուարին չէր ինձի զայն ճաշակել մանաւանդ որ հըրաման կուտաք . բայց կարծեմ թէ աւելորդ պիտի ըլլայ այդ ընդ ամենը երեկոյեան ժամուն և մէյ մ'ալ կէս դիշերէն առաջ պիտի կարենամ ճաշել և կարծեմ թէ վաղը անցընելու համար երկու թարմ հաւկիթ զոր տանջանքէս վերջը պիտի ընդունիմ , բաւական է » :

Ճշմարիտ է , ըսաւ քահանան , որ կնոջ անտարբերութենէն կը սոսկար և սարսափի կզգար տեսնելով որ տիկինը բանտապետին հրաման կընէր որպէս զի նոյն իրիկունը սովորականէն աւելի զօրաւոր արգանակ մը և կէս դիշերէն առաջ երկու սնակ լեցուն արգանակ պատրաստել տայ : Ճաշն աւարտելէ վերջը , գրիչ և մեքան տուին անոր զոր խնդրած էր , տիկինը քահանային ըսաւ թէ իր ըսելիքները գրել տալէ առաջ , ինքը նամակ մ'ունէր գրելու :

Այս նամակը զոր իւր ամուսնոյն կը գրէր , շատ կը նեղէր զինքը , բայց գրելէ վերջը այլ ևս ազատ պիտի ըլլար : Բանտարկեալը այս պահուն իւր ամուսնոյն նկատմամբ այնպիսի գորով մը ցցուց , որուն վրայ չափազանց զարմացաւ քահանան և զանիկա փորձել ուզելով ըսաւ թէ այս գորովը փոխադարձ չէ , վասն զի իւր ամուսինը բողբոլիւն բարձի թողի ըրած և ամբողջ դատաստանի ատեն բնաւ զինքը վնասած չէր . սակայն մարքիզուհին զայն ընդմիջելով ըսաւ . « Հայր իմ , իրերը այդքան շուտ և աւերելոյթս պէտք չէ դատել միշտ , պարոն Պրէնփիլիէ իմ օգտիս նախանձախնդիր եղած է միշտ և ինչ որ կըցած է , ըրած է . մեր թղթակցութիւնը ամենեւին դադրած չէ որքան ատեն որ Քաղղիայէն դուրս ապրեցայ . և վստահ եղիք որ իմ բանտարկութիւնս լրած ատեն անմիջապէս Փարիզ կը հասնէր նա եթէ իւր գործերը ներէին . բայց պէտք է գիտնաք որ անիկա պարտքերու մէջ խեղդուած է և եթէ հոս գար , իւր պարտատէրները կը ձերբակալէին զինքը . ուստի ամուսինս իմ վրաս բնաւ անկարեկիր չէ եղած » :

Այս խօսքերէն վերջը անիկա սկսաւ իւր նամակը գրել և լնցնելէն ետքը քահանային ներկայացուց ըսելով . — Պարոն , մինչև մահուանս կէտը իմ բոլոր զգացմանցս տէրն էք դուք , կարդացէք այս նամակը և եթէ փոփոխելի բան մը կը տեսնէք , ըսէք ինձի » : Ահաւասիկ զրած նամակը :

« Երբ հոգիս Աստուծոյ ձեռքը կաւանդեմ, կուզեմ բարեկամութեանս վրայ վստահեցնել զձեզ, այս բարեկամութիւնը կենացս մինչև վերջին շունչը պիտի տևէ, ներում կը խնդրեմ այն ամեն բաներուն համար զոր առ ձեզ ունեցած պարտաւորութեանցս հակառակ գործեցի, ամօթայիր մահուամբ մը կը մեռնիմ որուն պատճառ թշնամիներս եղան. և սակայն ի բոլոր սրտէ կը ներեմ անոնց և կը խնդրեմ որ դուք ալ ներէք: Կը յուսամ թէ իմ վստահամբաւութեանս ալ պիտի ներէք որ ձեզի բաժին պիտի մնայ. բայց մտածեցէք որ ժամանակաւոր է մեր կեանքը և քիչ ատենէն թերևս դուք ալ հաշիւ պիտի տաք Աստուծոյ ձեր ամեն գործոց և մինչև իսկ ունայն խօսքերուն համար ինչպէս որ ես նոյն վիճակին մէջ եմ այս ժամուս: Ձեր ժամանակաւոր գործերը կարգադրեցէք և մեր զաւակաց ինամ տարէք և անոնց օրինակ եղիք. այս մասին Մառիլաք և Քուսթէ տիկիներուն խորհուրդ հարցուցէք: Որքան աղօթք որ կրնաք, ընել տուէք ինձի համար և հաւատացէք որ ինքզինքս բոլորովին ձեզի նուիրելով կը մեռնիմ

ՏՕՊՐԷՅ »

Քահանան ուշադրութեամբ նամակը կարդալով դիտել տըւաւ թէ մէկ պարբերութիւնը բոլորովին աւերորդ էր. այսինքն իւր թշնամիներուն նկատմամբ ըրած խօսքերը:

— « Տիկին, ըսաւ անոր, ձեր թշնամիները ձեր ոճիրներն են միայն և ձեր թշնամի անուանածները անոնք են որ ձեր հօրը և ձեր եղբայրներուն յիշատակը կը սիրեն զոր դուք անոնցմէ աւելի պարտական էիք սիրել »:

« Բայց, պարոն, պատասխանեց մարքիզուհին, իմ մահս հաւածողները միթէ իմ թշնամիս չե՞ն և այս հալածանաց ներել միթէ քրիստոնէական պարտաւորութիւն մը չէ »:

« Տիկին, պատասխանեց քահանան, անոնք ձեր թշնամիները չեն. դուք մարդկային սեռին թշնամիս էք և ոչ ոք ձեր թշնամիս չէ, վասն զի ձեր ոճիրները առանց սոսկումի կարելի չէ յիշել »:

« Նոյնպէս, պատասխանեց անիկա, միթէ անոնց դէմ զայրոյթ պէտք չէ ունենամ և պիտի կարենամ արքայութեան մէջ

տեսնել իմ մահուանս պատճառ եղողները »:

« Տիկին, ըսաւ քահանան, ինչպէս կը հասկնաք, և ինչ ըսել կուզէք. ընդհանրապէս երբ մարդ ուրիշներու մահուան կը փափաքի, այսպէս կը խօսի, կաղաչեմ ուրեմն բացատրեցէք »:

« Քաւ լիցի որ այդպիսի փափաք մը ունենամ, կրկնեց մարքիզուհին. ընդհակառակն Աստուած այս աշխարհին մէջ երկարատե երջանկութիւն իսկ միւս աշխարհին մէջ անսահման փառք և բարեբաստութիւն կը շնորհէ անոնց: Ուրեմն ուրիշ նամակ մ'ըսէք ինձի որ գրեմ ինչպէս որ կը կամիք »: Երկրորդ նամակը գրելէ վերջը մարքիզուհին այլ ևս իւր խոստովանութեան վրայ սկսաւ խորհիլ և աղաչեց քահանային որ գրէ՛ք ձեռք անուս:

« Վասն զի, ըսաւ անոր, այնքան մեղք և այնքան ոճիր գործած եմ որ եթէ բերանացի պարզ խոստովանութիւն մ'ընեմ չպիտի կարենամ վստահ ըլլալ որ իմ ըսածներս ճիշդ են »:

Յետոյ երկուքը մէկէն ի ծունր եկան սուրբ Հոգւոյն շնորհքը խնդրելու համար. ապա քահանան ոտք ելաւ և սեղանի մը առջև նստաւ մինչդեռ մարքիզուհին ծունկ չօքած իւր խոստովանութիւնը կսկսէր:

Երեկոյեան Յրդ ժամուն հայր Քալինեի ներս մտաւ որ առաւօտուն Բիռօդ քահանան բերած էր հոն. մարքիզուհին անոր այցելութենէն չախորժեցաւ. բայց ուրախ դէմքով մ'ընդունեց զայն:

« Հայր իմ, ըսաւ անոր, չէի յուսար որ այսքան յապաղէիք. բայց կաղաչեմ որ քանի մը վայրկեան ևս պարոնին հետ մինակ թողուք զիս »: Հայր Քալինեի դուրս ելաւ: Այն ատեն մարքիզուհին դէպ ի քահանային դառնալով հարցուց թէ ինչո՞ւ համար այս մարդը քովը կուգայ:

« Որպէս զի մինակ չմնաք », պատասխանեց քահանան:

— « Դուք ալ զիս կը թողուք », պօռաց մարքիզուհին սարսափով խառն զգացմամբ մը:

— « Տիկին, ես պատրաստ եմ ինչ որ ուզէք կատարելու. բայց մեծ բարիք մը ըրած կըլլաք ինձի եթէ թողուք որ քանի մը ժամուան համար տունս վերադառնամ. այս միջոցին հայր Քալինեի կրնայ ձեր քովը մնալ » . . . :

« Ա՛հ, պարոն, պօռաց բանտարկեալը բազուկներն իրարու

կցելով, դուք խոստացաք մինչև մահուանս ժամուն չըթողուլ զիս և ահա մեկնիլ կուզէք: Գիտցէք որ առաջին անգամ այս առաւօտ տեսայ զձեզ. բայց առտուընէ ի վեր իմ կենացս մէջ այնպիսի տեղ մը բռնեցիք զոր իմ ամենէն հին և սիրելի բարեկամներս անգամ չկրցան բռնել»:

« Տիկին, պատասխանեց բարի քահանան, ես ձեր խնդրածէն տարբեր բան մը չեմ ուզեր. եթէ քիչ մը հանգիստ կը խնդրեմ, իմ վաղուան պաշտօնս աւելի ուժով կատարելու և ձեզի աւելի մեծ ծառայութիւն մ'ընելու համար է: Եթէ հանգիստ չընեմ իմ ամեն ընելիքիս և ըսելիքիս մէջ պիտի տկարանամ: Դուք կը կարծէք որ մահուան գործադրութիւնը վաղը պիտի կատարուի. ես չեմ գիտեր թէ ասիկա ճիշդ է թէ ոչ. սակայն նոյն իսկ ձեր խօսքին նայելով վաղուան օրը ձեր ամենէն մեծ օրը ձեր վճռական օրը պիտի ըլլայ, յորում թէ դուք և թէ ես ուժի և զօրութեան պէտք պիտի ունենանք. արդէն 13 կամ 14 ժամէ ի վեր ի միասին ձեր վրկութեանը կաշխատինք, զօրաւոր առողջութիւն մը չունիմ. ուստի պէտք է գիտնաք, տիկին որ եթէ քիչ մը ժամանակ չը շնորհէք ինձի, վաղը մինչև վերջը ներկայ գտնուելու համար ոյժս չպիտի բաւէ »:

« Պարոն, պատասխանեց մարքիզուհին, ձեր ըսածին պատասխանելու անկարող եմ. ինձի համար վաղը այսօրուընէ կարեւորագոյն օր մ'է և ես սխալեցայ, վասն զի պէտք է որ այս գիշեր հանգիստ ընէք դուք. ուստի այս պարբերութիւնը ընձնցընենք և մեր գրածը վերստին կարգանք »:

Զայս ընելէ վերջը քահանան հեռանալ ուզեց. բայց ընթրիքը եկած ըլլալով մարքիզուհին չըթողուց որ քահանան առանց բան մը ուտելու դուրս ելլէ. և երբ անիկա քիչ մը բան կուտէր, տիկինը պահապանին հրամայեց որ երթայ իւր հաշտոյն կառք մը բերէ. իսկ ինքը արգանակ մը խմեց և երկուհակիթ կերաւ: Վայրկեան մը վերջը պահապանը ներս մտաւ ըսելով որ կառքը պատրաստ էր. մարքիզուհին քահանայէն բաժնուեցաւ խոստումն առնելով անկէ որ իրեն համար պիտի աղօթէ և հետևեալ օրը ժամը վեցին բանտարանը պիտի դառնայ:

Հետևեալ օր քահանան աշտարակը դառնալով հայր Քավինին բանտարկելոյն քովը գտաւ որ ի ծունր իջած կաղօ-

թէր անոր հետ և աղօթքն աւարտելու մօտ էր: Քահանան կուլար, բայց մարքիզուհին միշտ անյողդողդ էր և մի և նոյն դէմքով ընդունեց զանիկա ինչ դէմքով որ բաժնուած էր անկէ: Հայր Քավինի քահանային ներս մտնելը տեսնելուն պէս հեռացաւ անկէ. մարքիզուհին ինքզինքն անոր աղօթիցը յանձնեց և ուզեց խոստումն առնել անկէ որ վերստին պիտի գայ, բայց հայր Քավինի չը խոստացաւ: Այն ատեն մարքիզուհին քահանային դառնալով ըսաւ « Պարոն, դուք ճշդապահ էք և ձեզմէ գանդատելու երբէք իրաւունք չունիմ. երկար ատենէ ի վեր կը ցանկայի զձեզ վերստին տեսնելու և վեցերորդ ժամը շատ ուշ հնչեց այսօր »:

« Բայց ահաւասիկ եմ պատասխանեց քահանան. խնդրեմ ըսէք թէ ինչպէս անցուցիք գիշերը »:

« Երեք նամակ գրեցի, պատասխանեց մարքիզուհին, որոնք բաւական ժամանակս սպառեցին, թէ և շատ համառօտ են. մէկը քրոջս, միւսը տիկին Մաւելաքի և երրորդը պարոն Քուսդէի. կուզէի այս նամակները ձեզի ներկայացնել, բայց հայր Քավինի ինքն իր վրայ առաւ և զանոնք կարդալուն համար չուզեցի իմ անձկութիւնս անոր յայտնել: Այս նամակները գրելէն ետքը քիչ մը իրարու հետ խօսակցեցանք և աղօթք մ'ըրինք Աստուծոյ. յետոյ հայր Քավինի ժամագիրքը ձեռքը առաւ կարդալու համար և ես իմ համրիչս մի և նոյն գիտաւորութեամբ. յոգնեցայ և հարցուցի իրեն թէ կրնայի արդեօք անկողնոյս վրայ հանգչիլ քիչ մը, և երբ անիկա, այս, պատասխանեց, երկու ժամ ամբողջ առանց երազի և առանց անհանգրստութեան քուն քնացայ. իսկ երբ արթնցայ մէկտեղ աղօթք մ'ըրինք որ վերջանալու վրայ էր երբ դուք ներս մտաք »:

« Լաւ ուրեմն, տիկին, պատասխանեց քահանան, եթէ կուզէք շարունակենք, ի ծունր իջէք և աղօթենք »:

Մարքիզուհին հնազանդեցաւ և երկիւղածութեամբ ու բարեպաշտութեամբ աղօթեց. աղօթքն աւարտելէ ետքը պարոն Բիւօզ գրիչը ձեռքն առաւ խոստովանութիւնը գրելի շարունակելու համար: « Պարոն, ըսաւ մարքիզուհին, ներեցէք որ նախ խնդիր մը ընեմ ձեզ որ շատ կը չարչարէ զիս. երէկ Աստուծոյ զթութեանը վրայ մեծամեծ յոյսեր տուիք ինձի. բայց ես չեմ համարձակիր յուսալ որ առանց երկար ատեն քաւա-

րանին մէջ մնալու փրկուելու կարող ըլլամ. իմ ոճիրս այնքան սոսկալի է որ առանց այս պայմանի ներում ստանալ անկարելի է ինձ, և երբ իմ յուսացածէս աւելի Աստուծոյ սէրն ընդունելու կարող իսկ ըլլամ, չպիտի կարենամ երկնից մէջ ընդունուիլ առանց անցնելու այն կրակէն որ իմ աղտոզութիւններս պիտի մաքրէ և առանց կրելու այն ցաւերը որ իմ մեղացս արգասիքն են. Բայց լսած եմ, պարոն, որ այս տեղւոյն բոցը ուր հոգիները ժամանակի մը համար միայն կայրին, ամեն տեսութեամբ դժոխոց բոցին կը նմանի ուր դատապարտեալք մշտընջենաւորապէս այրելու վիճակեալ են. ինդրեմ, ըսէք ինձի, թէնչպէս կըլլայ ուրեմն որ մարմինէն բաժնուելու ատեն քաւարանին մէջ գտնուող հոգի մը վստահ ըլլայ թէ դժոխքի մէջ չէ ինքը, և ճանչնայ որ առանց սպառելու զինքն այրող կրակը որ մը պիտի մարի քանի որ նոյն հոգիին կրած տանջանքը դատապարտելոց կրած տանջանաց յար և նման է և զայն լավիզող բոցերը դժոխոց բոցերուն նման յատկութիւններ ունին: Այս ահաւոր ժամուս կասկածանաց մէջ չմնալու համար կուզեմ զիտնալ զայս, պարոն և միանգամ ընդ միշտ հասու ըլլալ թէ յուսով եթէ յուսահատիլ հարկ է ինձ »:

« Տիկին, պատասխանեց քահանան, իրաւունք ունիս, Աստուած երբ մէկու մը կասկած կազդէ, անոր վիշտ ալ կը պատճառէ. երբ հոգին մարմինէն կը բաժնուի, Աստուծոյ և հոգիին մէջ դատաստան մը կը ծագի. զինքը դատապարտող վճիռը կամ զինքն ազատ արձակող խօսքը կը լսէ և կը հասկնայ թէ շնորհաց եթէ մահացու մեղաց մէջ կը գտնուի. գիտէ թէ Աստուած զինքը բոլորովին դժոխքը կը նետէ և թէ ժամանակ մը քաւարանէն կաքորէ: Այս վճիռը դուն պիտի լսես, տիկին, այն պահուն յորում դահճին երկաթք քեզի պիտի հպի եթէ բարեպաշտութեան կրակէն մաքրուելով այս կենաց մէջ առանց քաւարանէն անցնելու չերթաս ընդունիլ քու մարտիրոսութեանդ վարձքը երանելի հոգիներուն մէջ որք Տիրոջ գահը կը շրջապատեն »:

« Պարոն, կրկնեց մարքիզուհին, ձեր խօսքերուն վրայ այնպիսի հաւատք մ'ունիմ որ կարծես թէ ձեր բոլոր ըսածները կը լսեմ արդէն և ասոր վրայ գոհ եմ »:

Քահանան և մարքիզուհին այն ատեն իրենց խոստովանու-

թիւնն սկսան շարունակել զոր առջի իրիկուընէ ի վեր ընդհատած էին, մարքիզուհին գիշեր ատեն քանի սը յօդուածներ



Երբ անոր ձեռքը սեղմեց, ակնարկ մ'ըրաս, որուն վրայ աղեղնաւորներն երեցան.

յիշած էր զոր միւսներուն վրայ աւելցնել տուաւ. յետոյ շարունակեցին, քահանան: ժամանակ առ ժամանակ կանկ կառնուր

անոր զղջում յայտնել տալու համար երբ մեղքերը մեծ էին :

Մէկ ու կէս ժամ վերջը մարքիզուհիին հրաման եղաւ որ վար իջնէ ուր կսպասէր առաջին քարտուղարը վճռագիւրը կարդալու համար : Տիկինը այս հրամանը ամենայն հանգարտութեամբ լսեց իւր ծնդացը վրայ կենալով և միայն գլուխը դարձնելով . ապա առանց իւր ձայնն այլայլելու , « Շատ աղէկ , ըսաւ , խօսք մ'ունինք , հիմա կը լմնցնենք . և անմիջապէս կուգամ » : Ուստի սկսաւ իւր խոստովանութեան մնացորդը շարունակել կատարեալ հանդարտութեամբ : Եւ երբ աւարտեցաւ , բանտարկեալը խնդրեց որ ի միասին աղօթեն , որպէս զի Աստուած նորա անցեալ չարութեանց համար զիղջ չնորհէ առաջի դատաւորաց որոց անաստած էր ի սկզբան : Յետոյ իւր վերարկուն և աղօթից զիրք մը զոր հայր Քալիսեի թողած էր իրեն , հետն առնելով , բանտապանին հետ տանջանաց սենեակը մտաւ ուր պիտի կարդացուէր վճռագիրը :

Հարցաքննութիւնն սկսաւ որ հինգ ժամ տևեց . մարքիզուհին ինչ որ խոստացած էր ըսել , ըսաւ , ուրանալով իւր դաւակիցները և հաստատելով թէ իւր գործածած թոյնին , ինչպէս նաև անոր անդեղեային բաղադրութիւնը չգիտեր : Եւ երբ դատաւորները համոզուեցան թէ անկէ ուրիշ բան մը իմանալ անկարելի է , առաջին քարտուղարին ակնարկ մ'ըրին որ վրճուագիրը կարդայ : Տիկինը յոտին մտիկ ըրաւ իրեն համար տըրուած վճիռը որ հետևեալն էր .

« Արքունիքը , մեծ խորհրդարանները և դատարանները թագաւորին ընդհանուր դատախազի եզրակացութիւնները նկատելով որ դատին հետևորդ պարագայներուն վրայ տիկին տ'Օպրէյ Պրէնպիլիէն հարցաքննած էր , համոզուած են թէ յիշեալ տիկինը իւր հայրը և իւր երկու եղբայրները որոց մին քաղաքային տեղակալ և միւսը խորհրդարանին մէջ խորհրդական էր , թունաւորած է , և իւր քրոջը՝ Թերեզա տ'Օպրէյի կենաց դէմ ալ դաւաճանութեան փորձ փորձած է . որոյ ի փոխարինութիւն յիշեալ Պրէնպիլիէ տիկինը դատապարտեց և կը դատապարտէ պատուաւոր հատուցում մ'ընելու Փարիզի եկեղեցւոյն մեծ դրան առջև ուր պիտի տարուի գերեզմանակառքի մը մէջ դրուելով բոպիկ , վիզը չուան մ'անցուցած և երկու լիտր ծանրութեամբ բոցալաւ ջահ մը բռնած : հոն ի ծունր իջ-

նելով պիտի խոստովանի որ չարասրտութեամբ , վրէժխնդրութեամբ և անոնց հարստութիւնը ժառանգելու համար իւր հայրը թունաւորած , իւր երկու եղբայրները թունաւորել տուած և իւր քրոջը կենաց դէմ դաւաճանած է . ասոնց ամենուն վրայ պիտի զղջայ տիկինը և ներում պիտի խնդրէ Աստուծմէ , թագաւորէն և արդարութէնէն . այս գործողութենէն վերջը տիկինը մի և նոյն գերեզմանակառքով քաղաքին կուէվիի հրապարակը պիտի տարուի և յատկապէս կանգնեալ կառափնարանի մը վրայ պիտի դիխատուի , մարմինը պիտի այրի և մոխիրները օդը պիտի նետուին . տիկինը յառաջագոյն իւր դաւակիցները յայտնելու համար սովորական և արտաքոյ կարգի տանջանաց ենթարկուելով , իւր հօրը , եղբարոց և քրոջ ժառանգութենէն զրկուած է այն օրէն ի վեր յորում յիշեալ ոճիրները գործած է , և իւր բոլոր հարստութիւնը յարքունիս գրաւուած է , կանխաւ 4000 ոսկւոյ գումար մը պիտի առնուի իրմէ իբրև տուգանք առ թագաւորն , 400 ոսկի իւր եղբարոց , հօրը և քրոջ հողւոյն աղօթք ընել տալու համար պալատին բանտարանի մատրան մէջ . 10000 ոսկի ալ իբրև հատուցում տիկին Մանկօյի . և բոլոր ծախքերը , մինչև իսկ Լաչօսէի համար եղածները անկէ պիտի հոգացուին :

Տուեալ ի Խորհրդարանի 1876 յուլիս 16 » :

Մարքիզուհին այս վճիռը առանց սոսկման և տկարութեան լսեց . սակայն աւարտելէ ետքը , « Պարոն , ըսաւ առաջին քարտուղարին , հաճեցէք անգամ մ'ևս կարդալ . գերեզմանակառքը որուն երբէք չէի սպասեր , այնքան շփոթեց զիս և զարմացուց որ մնացածին ուշադրութիւն չկրցի ընել » :

Առաջին քարտուղարը վճիռը նորէն կարդաց . յետոյ , որովհետև տիկինը այլ ևս դահճին կը վերաբերէր , ասիկա մտեցաւ իրեն . մարքիզուհին անոր ձեռքը չուան մը տեսնելով ճանչցաւ զայն և իսկոյն իւր ձեռքերը անոր երկնցուց յոտից մինչև ցզլուխ ցուրա դէմքով մը անոր նայելով առանց բառ մը արտասանելու : Այն ատեն դատաւորները մի առ մի հեռացան և դուրս ելլելու ատեն տանջանաց զանազան գործիները բերել տուին : Մարքիզուհին ուշադրութեամբ դիտեց ոյս պըրկոյնները և սոսկալի օղակները որոնք բազմաթիւ անդամներ

պրկած և աղիողորմ հառաչանքներ արձակել տուած էին . և տեսնելով որ իրեն համար երեք դոյլ ջուր պատրաստուած էր , դէպի քարտուղարին դառնալով որովհետև դահճին հետ խօսիլ չէր ուզեր , ժպտելով մ'ըսաւ . « Անշուշտ դիս խղղելու համար այսքան ջուր բերել տուած էք , պարոն , վասն զի չեմ կարծեր որ այս տարիքիս մէջ այդ ամեն ջուրը ինծի կլլել տալու դիտումմը ունենաք » : Դահիճն առանց պատասխանելու սկսաւ անոր վերարկուն և հետզհետէ բոլոր հագուստները հանել , մինչև որ բոլորովին մերկանալով , զանիկա պատին դէմ սովորական տանջանաց պրկոցին վրայ նստեցուց որ երկու սաք բարձրութիւն ունէր :

Հոն վերստին հարցուեցաւ մարքիզուհիին իւր դաւակիցներուն անունը , նոյնպէս իւր թոյնին բաղադրութիւնը և թէ ինչ էր իւր դեղթափը . բայց տիկինը պատասխանեց թէ հայր Բիւռօղի արդէն ըսած էր ինքը , և միայն սա խօսքն աւելցուց . « Եթէ իմ խօսքիս չէք հաւատար , մարմինս ձեր ձեռքին մէջն է , կրնաք զայն չարչարել » :

Այս պատասխանին վրայ քարտուղարը ակնարկ մ'ըրաւ դահճին որ իւր պաշտօնն սկսի :

Դահիճն սկսաւ մարքիզուհւոյն սաքերը առջևը դրուած երկու օղակներուն մէջ սեղմել , ետքը մարմինը յորսայս պառկեցնելով երկու ձեռքերը պատին օղակներուն վրայ սևեռեց որոնք իրարմէ գրեթէ երեք սաք հեռի էին . այս կերպով գրլուխը ինչ բարձրութիւն որ ունէր , սաքերն ալ նոյն բարձրութիւնն ունէին . մինչդեռ մարմինը նեցուկի մը կռթմնելով կիսով չափ ծուած էր սրպէս թէ անիւի մը վրայ պառկած էր : Դահիճն անոր անդամներն աւելի տարածանելու համար շրջուն գործիք մը երկու անգամ դարձուց որուն վրայ մարքիզուհիին օղակներէն մէկ ոտնաչափ հեռի մնացած սաքերը պարտաւորեցան վեց մասնաչափ իրարու մտնենալ :

Հոս կը պարտաւորիմք վերստին արձանագրութեանց դիմել : « Փօքրիկ պրկոցին վրայ և իւր մարմինը սեղմուելու ատեն տիկինը քանի մ'անգամ պօռաց » . « Ո՛հ Աստուած իմ , զիս կսպաննեն և սակայն ճշմարտութիւնը խօսեցայ » : Ջուր լեցուցին . տիկինը շարժում մ'ըրաւ և այս բառերն ըսաւ , « Դուք զիս կսպաննէք » : Հարցուեցաւ այն ատեն թէ ո՞յք էին իրեն

դաւակիցները . պատասխանեց թէ միայն մարդ մը գիտէր որ տասը տարի առաջ թոյն խնդրած էր իրմէ կնոջը կեանքը զրաւելու համար , բայց այս մարդն ալ հիմա մեռած էր :

« Կրկնեցին ջուրը . տիկինը քիչ մը շարժեցաւ , բայց չուզեց խօսիլ :

« Վերստին ջուր լեցուցին , քիչ մը դարձաւ և շարժեցաւ , բայց դարձեալ չուզեց խօսիլ :

« Հարցուեցաւ իրեն թէ եթէ դաւակից չունէր , ինչո՞ւ համար բանտարանէն Բընօթիէի նամակ գրած և ստիպած էր զանիկա որ կարելի եղածն ընէ իրեն համար , յիշեցնելով որ այս գործին մէջ հաւասար շահեր ունէին իրենք :

« Պատասխանեց թէ բնաւ չէր գիտեր ինքը որ Բընօթիէ Սէնթ-Քրուայի հետ յարաբերութիւն ունեցած ըլլայ այն ատիճան որ ի միասին թոյն գործածած ըլլան . ասոր հակառակը խօսիլ իւր խղճին դէմ մեղանչել էր . բայց որովհետև Սէնթ-Քրուայի արկղին մէջ Բընօթիէի վերաբերեալ տոմսակ մը գրտնուած էր , և որովհետև Բընօթիէ շատ անգամ Սէնթ-Քրուայի հետ տեսնուած էր , ինքը (տիկինը) կարծած էր թէ ասոնց բարեկամութիւնը մինչև իսկ թոյնի առևտուրին հասած կրնար ըլլալ . ինքն ալ այս կասկածով Բընօթիէի նամակ գրելու համարձակած էր . արդ Բընօթիէ կամ Սէնթ-Քրուայի դաւակից էր կամ չէր . եթէ դաւակից էր , անշուշտ պիտի կարծէր որ մարքիզուհին ալ այս թոյնի գործողութեան մէջ բաժին մ'ունէր և զանիկա արդարութեան ձեռքէն ազատելու համար կարելի եղածը պիտի ընէր , իսկ եթէ դաւակից չէր , իւր նամակը արժէք մը չպիտի ունենար . ահա ինչ որ գիտէր :

« Վերստին ջուր լեցուցին . կինը ուժով շարժում մ'ըրաւ , բայց ըսաւ որ այս նիւթին վրայ ինչ որ գիտէր յայտնած է արդէն . ուստի անկէ աւելի խօսիլը իւր խղճին դէմ մեղանչել է :

« Սովորական տանջանքը վերջացած էր . մարքիզուհին արդէն ջուրին կէտը կըլլած էր որմէ խղղուելու չափազանց երկիւղ ունէր . դահիճը կանկ առաւ արտաքոյ կարգի տանջանաց պատրաստուելու համար . հետևաբար երկուք ու կէս սաք պրկոցին տեղ որուն վրայ տիկինը տարածուած էր , երեք ու կէս սաք պրկոց մը անցընել տուաւ անոր երիկամանց ներքև , այնպէս որ մարմինն աւելի կքեցաւ . և որովհետև այս գործողութիւնը ա-

ուանց չուանը երկնցներու կատարուեցաւ , անդամները ստիպուեցան վերստին սեղմուիլ և կապերը մարմնոյն մներուն մէջ այնքան ներդործեցին որ սկսաւ արիւն դուրս գալ . անմիջապէս սկսաւ տանջանքը որ մերթ ընդ մերթ քարտուղարին հարցումներովը և մահապարտին տուած պատասխաններովը կընդհատէր . իսկ աղաղակը գրեթէ այլ ևս չէր լսուեր :

« Մեծ պրկոցին վրայ և մարմինը սեղմուելու ատեն տիկինը շատ անդամ ըսաւ . « Աստուած իմ , զիս կը յօշոտեն . տէր , ներէ ինձի , գթա՛ ինձի » :

« Հարցուեցաւ իրեն թէ իւր դաւակիցներու մասին ուրիշ ըսելիք մը չունի :

« Պատասխանեց թէ կրնան զինքը սպաննել , բայց ինքը չը կրնար սուտ խօսիլ , զի սուտը իւր հոգւոյն կորուստ կը պատճառէ :

« Ուստի ջուր լեցուցին . տիկինը քիչ մը տանջուեցաւ և յուզուեցաւ , բայց չուզեց խօսիլ :

« Հարցուեցաւ թէ ինչ էին իւր թոյներուն բաղադրութիւնը և անոր գեղթափը :

« Պատասխանեց թէ անոր նիւթերը չգիտեր և իր գիացածը միայն սա է թէ թոյնին մէջ սև գորտեր կային . Սէնթ-Քրուա այս գաղտնիքն իրեն յայտնած չէր , և սակայն կը կարծէր թէ Սէնթ-Քրուա ինքն ալ չէր շիներ զանոնք , այլ կըսէր կը պատրաստէր , կը յիշէ որ թոյներէն մէկ քանին անօտր մկնդեղ էին , իսկ գեղթափը կաթն ըլլալը գիտէր միայն . վասն զի Սէնթ-Քրուա ըսած էր թէ՛ եթէ մէկը թոյն զգացած առաջին պահուն գաւաթ մը կաթ խմէ առաւօտուն , այլ ևս երկիւղ չկայ :

« Հարցուեցաւ իրեն թէ տակաւին ըսելիք մ'ունի :

« Պատասխանեց թէ ինչ որ գիտէր խոստովանեցաւ և կրնան զինքը մեռցունել . բայց ասկէ աւելի բան մը կարող չեն հասկընալ :

« Ասոր վրայ վերստին ջուր լեցուցին . տիկինը քիչ մը չարչարեցաւ և ըսաւ թէ կը մեռնի , բայց չուզեց աւելի խօսիլ :

Վերստին ջուր լեցուցին , տիկինը սաստիկ շարժում մ'ըրաւ , բայց չուզեց խօսիլ : Ուստի ջուրը կրկնեցին . տիկինը բնաւ չը շարժեցաւ բայց հառաչանքով մ'ըսաւ . « Աստուած իմ , մեռայ » , բայց դարձեալ չուզեց խօսիլ :

« Ուստի առանց այլ ևս չարչարանք տալու քակեցին վար ջուրցին և կրակին առջևը կեցուցին » :

Կրակին մօտ բանտարանին կրակարանին առջև տիկինը տանջանաց անկողնոյն վրայ տարածուելով իւր քովը դտաւ քահանան որ այսպիսի ահաւոր տեսարանի մը ներկայ գտնուելու քաջութիւն չունենալով հրաման խնդրած էր տիկինէն որ երթայ պատարագ մ'ընէ , որպէս զի Աստուած համբերութիւն և արիւթիւն չնորհէ չարչարելոյն :

Սրդէն տեսնուեցաւ որ քահանան զուր տեղն աղօթած չէր :

« Ա՛հ , պարոն , ըսաւ մարքիզուհին զայն տեսնելուն պէս , երկար ատենէ ի վեր կը փափաքէի զձեզ տեսնելու որպէս զի ձեզ մնով մխիթարուիմ : Իմ չարչարանքս երկար և դժուարակիր եղաւ , բայց վերջին անգամն է որ պիտի տեսնուիմ մարդոց հետ , ապա Աստուծոյ հետ միայն պիտի պարապիմ . տեսէք ձեռքերս , պարոն , նոյնպէս և ոտքերս , միթէ գիշատեալ և մահացեալ չե՞ն . և իմ դահիճներս Քրիստոսի նման մի և նոյն տեղը զիս չե՞ն չարչարած » :

— « Տիկին , պատասխանեց քահանան , քու կրած տառապանքներդ այս պահուս երջանկութիւն մ'են , իւրաքանչիւրը տակաւ առ տակաւ զքեզ երկնից կը մօտեցնէ : Ուստի ինչպէս դու ըսիր , այսուհետև պէտք է Աստուծոյ հետ պարապիս , քու բոլոր մտածութիւններդ և յոյսերդ պէտք է անոր վրայ դնես և ապաշաւող թագաւորին հետ տեղ մը խնդրես անկէ իւր երկնային ընտրելոց մէջ . և որովհետև անոր քով ապականութիւն բնաւ չկայ , պէտք է քու կեանքդ նսեմացնող բոլոր աղտեղութիւնները մէկդի թողուս » :

Անմիջապէս մարքիզուհին քահանային օգնութեամբ ոտքի ելաւ , զի հազիւ կրնար ոտքի վրայ կանգնիլ , և դողդղալով գէպ ի անոր ու դահճին մէջտեղը յառաջացաւ . վասն զի դահիճը վճռէն վերջը բանտարկելոյն տէրն ըլլալով զայն զլսատեղէն ետքը կրնար անկէ բաժնուիլ . ուստի երեքը մէկէն մատուռը մտան և դասին շրջապատին մէջ քաշուելով քահանան և մարքիզուհին ծունր դրին Սրբութեան երկրպագելու համար : Այս միջոցին մատրան միջավայրը քանի մը հետաքրքիր

անձինք երևցան որոնք անցած անցքերուն ուշադրութիւն կը նէին , և որովհետեւ զանոնք դուրս հանել կարելի չէր , և մարքիզուհին զանոնք տեսնելով ձանձրոյթ կզգար , դահիճը դասին վանդակը գոցեց և մարքիզուհին խորանին ետևը տարաւ ու զանի աթոռի մը վրայ նստեցուց . քահանան ալ մարքիզուհւոյն դիմացը նստարանի մը վրայ նստաւ : Այն ատեն միայն՝ քահանան մատրան պատուհանին լուսովը կրցաւ նշմարել տիկինին վրայ եղած փոփոխութիւնը , անոր գունատեալ դէմքը բոցի նման կը վառէր , աչքերը եռանդազին և հրալիր էին և բոլոր մարմինը անակնկալ սարսուռով մը կը դողար : Քահանան ուզեց քանի մը խօսք ուղղել զանկա մխիթարելու համար . բայց մարքիզուհին առանց մտիկ ընելու ,

« Պարոն , ըսաւ անոր , գիտէ՞ք որ իմ վճիռս վատահամբաւիչ և նախատախիբ է , գիտէ՞ք որ իմ վճռագրոյս մէջ կրակ կայ » :

Քահանան չպատասխանեց . բայց խորհելով որ մարքիզուհին բանի մը պէտք ունի , դահիճին ըսաւ որ քիչ մը գինի բերել տայ : Վայրկեան մը ետքը պահապանը երևցաւ գաւաթ մ'ունենալով ի ձեռին . քահանան մարքիզուհւոյն ներկայացուց որ հազիւ չրթունքները թրջելով քահանային վերադարձուց . ետքը տեսնելով որ կոկորդը բացուած էր , թաշկինակովը զայն ծածկեց և պահապանէն դնդասեղ մը խնդրեց խօթելու համար . և որովհետեւ պահապանն իր վրայ դնդասեղ փնտռելով կը յապաղէր , մարքիզուհին կարծեց որ ինքզինքը խղդեղէն կը վախնային . ուստի գլուխը թօթուելով տխուր ժպիտով մը « Ո՛հ , հիմա , ըսաւ , ա՛յ պէտք չէ վախնաք և պարոնը կրնայ երաշխաւորել ձեզ որ իմ անձիս վնաս մ'ընել չեմ ուզեր » :

« Տիկին ըսաւ , պահապանը դնդասեղն անոր տալով , կը ներէք ձեզ սպասեցնելուն համար , կերդնում ձեզ որ ձեր վրայ ամենևին կասկած մը չունիմ , և եթէ այդպիսի կասկած մը կայ , այդ ինձի համար չէ » :

Այն ատեն պահապանը ծունր դնելով անոր առջև , ձեռքն ուզեց համբուրելու համար . տիկինը տուաւ խնդրելով որ իրեն համար աղօթէ առ Աստուած :

« Այո՛ , այո՛ , պօռաց պահապանը հեծկլտանօք , ի բոլոր սըրտէ » :

Այն ատեն տիկինը իւր կապուած ձեռքերով դնդասեղը

թաշկինակին վրայ խօթեց . և որովհետեւ պահապանը դուրս ելած էր և տիկինը քահանային հետ մինակ մնացած . « Չը լսեցի՞ք , պարոն , ըսաւ անոր , երկրորդ անգամ ըսի ձեզի թէ իմ վճռագրոյս մէջ կրակ կայ , կրակ , կը հասկնա՞ք . և թէպէտ ըսուած է որ մարմինս մահուանէս վերջը միայն կրակը պիտի նետուի , սակայն դարձեալ իմ յիշատակիս համար վատանուելութիւն մ'է . ասով թերևս յուսահատական մահուանէ մը ազատել կուզեն զիս , բայց անոր մէջ ամօթ մը կայ ծածկուած և այս ամօթին վրայ կը մըտած եմ » :

« Տիկին , ըսաւ անոր քահանան , քու փրկութեանդ համար մի և նոյն բանն է եթէ քու մարմինդ կրակը նետեն միսիք դառնալու համար և կամ հողին մէջ թաղեն որդերուն կերակուր ըլլալու համար , նոյնպէս եթէ կողովի մը մէջ դնեն և աղբանոցը նետեն և կամ արևելեան անուշահոտութեամբ դիպատեն և շքեղ գերեզմանի մը մէջ զետեղեն : Ինչ կերպով ալ որ ըլլայ , քու մարմինդ որոշեալ օրը յարութիւն պիտի առնու , և եթէ երկնքի համար տահմանեալ է , իր աճիւններէն աւելի փառաւոր դուրս պիտի ելնէ քան այն արքայական դիակը որ սյսպահուս ոսկեզօծ դազաղի մը մէջ կը ննջէ : Թաղման հանդէսը , տիկին , անոնց համար է որ կապրին մէկու մը մահուանէ ետքը և ոչ անոնց համար որ կը մեռնին » :

Այս միջոցին դասին դուռը աղմուկ մը լսուեցաւ . քահանան զնայ նայելու թէ ինչ էր ասիկա . մարդ մը կը սնդէր որ ներս մտնէ և ասոր համար դահիճին հետ կը կռուէր . քահանան մօտեցաւ և հարցուց թէ ինչ կուզէր . ասիկա թամբազործ մ'էր ուրկէ տիկին տը Պրէնպիլիէ Գաղղիայէն մեկնելէ առաջ կտուք մը գնած էր որոյ մէկ մասը վճարած իսկ տակաւին 1200 ոսկի պարտական էր . տունակ մ'ունէր ձեռքը զոր տիկինը տուած էր և որուն վրայ ճշդութեամբ գրուած էին զանազան ժամանակ տրուած թերհաշիւները . այն ատեն մարքիզուհին պատահած բանէն տեղեկութիւն չունենալով կանչեց . քահանան ու դահիճն անոր քով վերադարձան . « Ի՛նչ այսքան կանուխ եկեր կը փնտռեն զիս , ըսաւ անիկա , ես տակաւին պատրաստուած չեմ . բայց ինչ որ է , կը հնազանդիմ » :

Քահանան զանկա վատահեցուց և բուն խնդիրը պատմեց անոր . « Այս մարդն իրաւունք ունի » , պատասխանեց տիկինը , և

դահճին դառնալով շարունակեց . « Ըսէք անոր որ պէտք եղած հրամանը պիտի տամ » . ետքը տեսնելով որ դահիճը հեռացաւ , « Պարոն , ըսաւ քահանային , արդեօք մեկնելու ժամն հասած է . և սակայն ինձի մեծ շնորհք մը բրած կըլլան եթէ քիչ մը ժամանակ շնորհեն . վասն զի թէև հնազանդելու պարտաւորեալ եմ , բայց տակաւին պատրաստուած չեմ . հայր իմ , ներեցէք ինձի . այս տանջանքն ու վճիռը իմ դաղափարներս վեր ի վայր չըջեցին . իսկ վճռագրին մէջ նշանակեալ կրակը իմ աչաց առջև դժոխոց բոցին նման մշտնջենապէս կը վառի . եթէ իմ ունեցած ամբողջ ժամանակիս մէջ միևնակ թողուն զիս ձեզի հետ , իմ փրկութեանս համար ասկէ աւելի մեծ բարեք մը չէին լքեր ինձի » :

« Տիկին , պատասխանեց քահանան , մինչև դիչեր տակաւին ժամանակ ունինք մենք ձեր ընելիք բաներուն վրայ խորհելու համար » :

— « Ոչ , պարոն , ըսաւ մարքիզուհին ժպտելով մը , մի հաւատար , կրակի դատապարտեալ դժբաղդ կնոջ մը համար այդքան շնորհ չեն ըներ . ասիկա մեզմէ կախեալ չէ . երբ ամեն բան պատրաստ ըլլայ պիտի դան մեզ իմացնել թէ ժամանակ է քալելու » :

« Տիկին , կրկնեց քահանան , կրնամ զձեզ վտահեցնել որ քու ինդրած ժամանակդ պիտի շնորհեն քեզ » :

« Ոչ , ոչ , ըսաւ մարքիզուհին կիսահագագ ձայնիւ , ոչ , չեմ ուզեր որ ինձի սպասեն . երբ գերեզմանակառքը դրան առջև պատրաստ ըլլայ , թող ինձի իմացընեն , պատրաստ եմ իջնելու » :

« Տիկին , պատասխանեց քահանան , եթէ Աստուծոյ առաջ երկնալու պատրաստ տեսնէի զքեզ , ամենեին չպիտի ուզէի որ յապաղես , վասն զի այժմու վիճակիդ մէջ ժամանակ չը խընդրել և որոշեալ ժամուն մեկնիլդ բարեպաշտական դորժ մ'է . բայց ամէն մարդ Քրիստոսի նման չը կրնար ընել , որ իւր աղօթքը թողուց և առաքեալներն արթնցուց պարտիզէն դուրս ելնելու և իւր թշնամեաց առաջը վազելու համար : Իսկ դուն , այս պահուս շատ տկար ես , և եթէ դան զքեզ փնտուերու , ես պիտի ընդդիմանամ » :

Դահիճը որ այս խօսակցութիւնը կը լսէր , ի հաստատու-

թիւն քահանային խօսքերուն՝ ուղեց վկայութիւն մը տալ և մարքիզուհին քաջալերել . ուստի « Հանդարտ եղիք , տիկին , ըսաւ , ժամանակը տակաւին հասած չէ , և հարկ չկայ նեղուելու , վասն զի երկու կամ երեք ժամ ունինք տակաւին » :

Այս վտահութիւնը Պրէնսիլիէ տիկնոջ սիրտը քիչ մը հանդարտեցուց որ շնորհակալութիւն յայտնեց դահճին . յետոյ քահանային դառնալով , պարոն , ըսաւ անոր , այս աղօթի համրիչը չեմ ուզեր որ այս մարդուն ձեռքն անցնի , չէ թէ անոր համար որ չկրնար լաւ դորժածել , վասն զի այսպիսիները հակառակ իրենց պաշտօնին վերջապէս ինձի նման քրիստոնեաներ են , այնպէս չէ . այլ անոր համար որ աւելի լաւ կը սեպեմ զայն ուրիշի մը յանձնել » :

« Տիկին , պատասխանեց քահանան , պատրաստ եմ ինդրելուդ կատարելու , և որի որ կուզես , պարտաւոր եմ անոր յանձնելու » :

« Աւաղ , պարոն , ըսաւ մարքիզուհին , քրոջմէս դատ մէկը չունիմ այսպիսի բան մը յանձնելու համար . բայց կը վախնամ որ անիկա ալ իրեն գէմ գործած ոճիրս յիշելով տակայ դպչելու այն բանին որ ինձի կը վերաբերի : Իսկ եթէ քոյրս վիշտ և սուկում չզգայ , մեծ մխիթարութիւն պիտի ընծայէ ինձի սա դաղափարը թէ այս համրիչը իմ մահուանէս վերջը ինքը պիտի գործածէ , և ասիկայ միշտ պիտի յիշեցնէ իրեն թէ ինձի համար աղօթելու պարտաւոր է , սակայն այս համրիչը մեր մէջ տեղի ունեցած գէպքերուն համար միշտ նողկալի յիշատակ մը երևան պիտի բերէ : Աստուած իմ , Աստուած իմ , շատ եղեւնադորժ եմ , պիտի հաճիս արդեօք ներել ինձի » :

« Տիկին , պատասխանեց քահանան , կարծեմ թէ օրիորդ Թոմասի մտախն կը սխալիս , անոր գրած նամակին մէջ աստար թէ քու նկատմամբ ինչ զգացումներ կը յայտնէր , աղօթէ ուրեմն այս համրիչովդ մինչև վերջին ժամդ , աղօթէ անդադար առանց ձանձրանալու , ինչպէս կը վայելէ յանցաւորի մը որ կը զղջայ , և ես կապահովցնեմ զքեզ , տիկին , որ համրիչը քրոջդ պիտի յանձնեմ և անիկա սիրով պիտի ընդունի » :

Մարքիզուհին որ հարցաբնութենէն ի վեր շարունակ կը նեղուէր , քահանային համբերատար ջերմեռանդութեան

Հնորհիւ սկսաւ վերապին աղօթել մեծ եռանդեամբ ինչպէս
առաջ : Այսպէս մինչև ժամ եօթն աղօթեց : Երբ ժամը եօ-
թը հնչեց, դահիճը եկաւ ասջևը կանգնեցաւ առանց բան
մ'ըսելու, տիկինը հասկցաւ որ ժամանակը հասած էր. ուստի
քահանային ձեռքէն բռնելով, « Կաղաչեմ, հայր, ըսաւ, քիչ
մը ժամանակ, քանի մը վայրկեան ևս չնորհեցէք ինձի » :

« Տիկին, պատասխանեց քահանան ոտք ելնելով, երթանք
Սրբութիւն Սրբոցէն Աստուածային արիւնն ըմպելու, և աղա-
չենք զանիկա որ քու վրադ մնացած բիծն ու արատը բոլորու-
վին ջնջէ. և դու այսպէս թողութիւն ընդունիս մեղացդ, ու-
րուն ի սրտէ կը փափաքիս » :

Այն ատեն դահիճն անոր ձեռաց շուանները սեղմեց զոր
առաջ թող ձգած էր, այնպէս որ կը ծածանէին. տիկինն ան-
յողդողդ քայլով մը յառաջացաւ և խորանին առաջ բանտարա-
նի խոստովանահօր և քահանային միջև ծունր դրաւ. մտորան
քահանան թեղանաւոր շապիկ մը հագած բարձրաձայն քանի
մ'աղօթք արտասանեց, յետոյ Սուրբ հաղորդութեան օրհնու-
թիւնը տուաւ անոր, զոր տիկինը ծունր դրած և երեսը դէպ
ի գետին խոնարհած ընդունեց :

Յետոյ դահիճը շապիկ մը պատրաստելու համար առջևէ
քայլեց. իսկ տիկինը մատուռէն դուրս ելաւ, ձախ կողմէն քահա-
նային և աջ կողմէն դահիճի սպասաւորին կաթնելով : Գուրս ել-
նելու ատեն՝ տիկինը առաջին անգամ յուզում զգաց : Տարբ
կամ տասներկու անձինք իրեն կապասէին, և երբ յանկարծ ա-
նոնց դիմաց երևցաւ, յետո նահանջեց, և իր ձեռքերով որքան
ալ կապուած էին, երեսի քողը վար իջեցուց և գէմքը կիսով
չափ ծածկեց : Յետոյ վտրբիկ դռնէ մ'անցաւ որ ետեւէն ան-
միջապէս գոցուեցաւ, այնպէս որ երկու դռան մէջ քահանա-
յին և դահիճին սպասաւորին հետ միայնակ մնաց. այս մի-
ջոցին երեսը ծածկելու համար ըրած բունն շարժումէն համ-
բնչը փրթելով, հատերը գետին ինկան : Սակայն ինքը ա-
ռանց ուշադրութիւն ընելու առաջ կը քայլեր, մինչ զի քա-
հանան իրեն զգացուց, և գետին ծռելով դահիճի սպասաւոր-
ին հետ ժողվել սկսաւ. սպասաւորն ամէնը իւր ձեռաց մէջ
հաւաքելով մարքիզուհւոյն ձեռքը վեցուց : Մարքիզուհին ա-
նոր բարեսրտութենէն չնորհակալ եղաւ. և « Պարոն, ըսաւ,

դիտեմ որ աշխարհի վրայ այլ ևս բան մը չունիմ, իմ բոլոր ու-
նեցածս ձեզ կը վերաբերի, և եթէ ուրիշի բան մը տալ ուզեմ,
ձեր հաճութեամբը միայն կրնամ տալ. ուստի կը խնդրեմ որ
հաճիք այս համբիշը մեռնելէս առաջ այս բարի քահանային
տալ. դուք ասով բան մը չէք կորսնցնեք, զի նուէրն անարժէք
է, իսկ եթէ համբիշն այս քահանային կուտամ, քրոջս յանձ-
նելու համար կուտամ : Կաղաչեմ, ուրեմն, պարոն, որ այսպէս
ընելու հաճութիւն տաք » :

« Տիկին, պատասխանեց սպասաւորը, թէև դատապարտե-
լոյ հազուստները մեզի կը սրտականին, սակայն դուք ձեր ու-
նեցածին տէրն էք, և եթէ մեծ բան մ'ալ լինէր ձեր ունեցա-
ծը, դարձեալ ուզածնուդ պէս կրնայիք դործածել » :

Քահանան տիկնոջ ձեռքէն բռնած ըլլալով զգաց որ անի-
կա սպասաւորին վեհանձնութեան վրայ սարսուռ մը կզգար. վա-
սըն զի տիկինը գոռոզ մէկն ըլլալով այսպիսի չնորհ մը ա-
նարգանք կը համարէր իրեն. սակայն այս յուզումը ի ներ-
քուստ միայն ունեցաւ. իսկ դէմքին վրայ բնաւ չը ցրցոց :
Այս միջոցին մահապարտը բանտին դուրսէն մէջն էր բակին և
առաջին դռնակին միջև, ուր նստուցին զինքը պատուաւոր
հասուցում մ'ընելու գիրքին մէջ դնելու համար : Տիկինը իւ-
րաքանչիւր քայլին դիտատութեան բեմին կը մօտենար. ամէն
նոր դէպք անհանգիստ կընէր զինքը : Հեծեծանօք դէպ ի և-
տին դարձաւ և դահիճը տեսաւ որ շապիկ մը բռնած էր ի ձե-
ռին : Այն ատեն դուրսէն դուրս բացուելով 50 ի չափ մարդ
ներս մտան, որոց մէջ կը գտնուէին Սուրբ Կոնստանտին, Կի-
կին ար Բրֆիլժ, օրիորդ ար Սքիւտերի, Պ. Բօքքլօր և Նիմայ
արբան : Մարքիզուհին զասոնք տեսնելով ամօթէն շառագու-
նեցաւ և դէպ ի քահանային ծռելով, « Պարոն, ըսաւ, այս
մարդը վերապին պիտի հանուեցնէ զիս, ինչպէս ըրաւ անգամ
մը տանջանաց սենեկին մէջ : Ահ, այս սպասաւորութիւնները
չատ վշտառիթ և անողորմեն և հակառակ կամայցս Աստուծմէ
կը հեռացնեն զիս » :

Տիկինը թէև ցած ձայնով կրտէր այս խօսքերը քահանային,
սակայն դահիճը լսելով պատասխանեց թէ ինքը չպիտի մերկա-
ցընէ, այլ իւր հազուստներուն վրայէն շապիկ մը պիտի անցնէ :
Այն ատեն մահապարտին մօտեցաւ, և որովհետև ինքը մէկ

կողմիակ ծառան միւս կողմը կեցած էր, մարքիզուհին չը կրնալով քահանային հետ խօսիլ, նայուածքով կը հասկցնէր անոր թէ ինչ անպատիւ դիրքի մը մէջ կը գտնուէր. և երբ դահիճը շապիկը վրան անցուց, դործողութիւն մը սրուն համար ձեռքերը քակել հարկ եղաւ, երկեղջիւր գդակը հանեց, ձեռքերը չուանով մը վերստին կապեց, մէջքի գօտիին տեղ ալ չուան մը և ուրիշ չուան մ'ալ վիզն անցուց. յետոյ անոր առջև ծունր դնելով, սրունքները վեր վերցուց և դուլպայները հանեց: Յայնժամ մարքիզուհին իւր կապեալ ձեռքերը քահանային վրայ տարածելով,

« Ահ, պարոն, ըսաւ անոր. կը տեսնէք, թէ ինչ կընեն ինձի. հաճեցէք ինձի մօտենալ և մխիթարել զիս »:

Քահանան անոր մօտեցաւ և անոր գլուխը որ իւր կուրծքին վրայ դրած էր, բռնելով ուղեց զայն վեր վերցնել. սակայն տիկինը հեծեծալիւր ձայնով մը, « Ահ, պարոն, ըսաւ զինքը դիտող մարդոց վրայ ակնարկ մը նետելով, ինչ տարօրինակ և բարբարոսական հետաքրքրութիւն է այս »:

« Տիկին, պատասխանեց քահանան արտասուալիւ աչօք, այս մարդոց ուշադրութիւնը բարբարոսութիւն և հետաքրքրութիւն մի համարիր, թէ և ստուգիւ ալ այնպէս լինի, այլ իբր ամօթ նկատէ զոր Աստուած կուղարկէ քեզ քու ուճիրներուդ քառութեան համար: Աստուած որ անմեղ էր, բազմադիմի նախատանաց ենթարկեցաւ և սակայն ուրախութեամբ տարաւ ամէնուն, զի Տերտուղիոսի ըսածին նման, նա զո՛հ մ'եղաւ որ տառապանաց հեշտութեամբ միայն պարարտացաւ »:

Քահանան հալիւ իւր խօսքն աւարտեց, դահիճը բոցավառ ջահ մը առաւ մարքիզուհւոյն ձեռքը զոր մինչև Նօթոճամ պիտի կրէր հոն պատուաւոր հատուցում մ'ընելու համար. և որովհետև ջահը երկու լիտր կը կշռէր, քահանան աջ ձեռքով օգնեց անոր, մինչդեռ քարտուղարը երկրորդ անգամ վճռադիրը կը կարգար. քահանան բանտարկելոյն հետ Աստուծոյ վրայ կը խօսէր և ամէն ջանք կընէր որպէս զի անիկա վերստին չըլտէ իւր վճռադիրը:

Սակայն մարքիզուհին դէմքը գունատեցաւ երբ քարտուղարը հետևեալ խօսքը կրկնեց. « Յետոյ գերեզմանակառ-

քի մը մէջ դրուելով պիտի սարաւի բոպիկ, վեզը չուան մը անցուցած և ձեռքն երկու լիտր ծանրութեամբ բոցավառ ջահ մը բռնած »:

Քահանան բնաւ կասկած չունեցաւ որ տիկինը այս խօսքերը լսած էր: Մարքիզուհին չափազանց այլայլեցաւ երբ գաւթին սեմոց առաջը հասաւ ուր մեծ բազմութիւն մը խռնեալ իրեն կապսէր. հոն ջղաձգութիւն մը զգալով կանկ առաւ և ինքն իւր վրայ կոթնելով որպէս թէ ոտքերը գետինը մխել կուղէր, « Պարոն, ըսաւ քահանային վայրագ և միանգամայն ողորմագին դէմքով մը, կարելի է արդեօք որ այս ժամուս մէջ կոտորուած դէպքերէն ետքը պարոն Պրէնվիլիէ այս աշխարհի մէջ մնալու համար բաւական սիրտ ունենայ »:

— « Տիկին, պատասխանեց քահանան, երբ մեր Տէրը իւր աշակերտներէն բաժնուելու պատրաստուեցաւ, աղօթեց Աստուծոյ որ ոչ թէ զանոնք այս աշխարհէն վերցնէ, այլ աղօթեց որ զանոնք մնուութեան մէջ չը ձգէ. « Հայր իմ, ըսաւ անիկա, չեմ ուզեր որ զանոնք այս աշխարհէն վերցնես այլ զանոնք չարէն պահպանես »: Ուստի, տիկին, պէտք է խնդրես Աստուծմէ որ պարոն Պրէնվիլիէն իւր շնորհացը մէջ պահէ եթէ արդէն է, կամ շնորհք տայ անոր եթէ չունի »:

Սակայն այս խօսքերը բնաւ չազդեցին, վասն զի ամօթը խիստ մեծ էր և հրապարակային. իւր դէմքը խորշոմեցաւ, յօնքերը պրկուեցան, բերանը գալարեցաւ, ամբողջ կերպարանքը անհարկու ձև մը առաւ և սատանան քոջարկեալ անոր վրայ երևցաւ: Այս տագնապը մէկ քառորդ տևեց և Լըպրէօն որ անոր քովն էր, դէմքը լաւ զննելով, յիշատակն այնպէս պահեց որ հետևեալ գիշեր չկրնալով քնանալ և այս անհարկու դէմքը միշտ իւր աչաց առջևն ունենալով, պատկերը նկարեց խիստ գեղեցիկ կերպով որ Լուվրի մէջ կը գտնուի այժմ. և այս պատկերին նայուածքով վագեր գլուխ մ'ալ նկարեց ցցունելու համար թէ գլխաւոր գիծերը մի և նոյնն էին և մին միւսին կը նմանէր:

Բակին մէջ խռնեալ բազմութիւնը անոր յամբ քայելուն պատճառ եղած էր. սակայն երբ աղեղնաւորները ձիով եկան և բազմութիւնը ճեղքեցին, ժողովուրդը բացուեցաւ. այն ատեն մարքիզուհին կրցաւ դուրս ելնել, և որպէս զի բազմութեան նա-

յերու ժամանակ չունենայ , քահանան ձեռքը խաչելով թիւն մը տուաւ պատուիրերով որ իւր տեսութենէն չը կորսնցնէ զայն : Այսպէս ըրաւ տիկինը մինչև փողոցին դուռը ուր կապատէր գերեզմանակառքը . հոն հարկ եղաւ աչքերը վեր վերցնել սովելը գտնուած ահարկու առարկան տեսնելու համար :

Գերեզմանակառքը խիստ փոքր էր սրուն վրայ կը տեսնուէր տակաւին փոխադրած քարերուն և տղմին հետքը . նստելու համար աթոռ մը չկար այլ քիչ մը յարդ կառքին խորը , որ անպիտան ձիէ մը լծեալ էր և ասիկա կառքին տղեղութեան լրումն էր :

Դահլիճն ամենէն առաջ մահապարտը կառքին մէջ դրաւ . տիկինը բաւական ուժով և արագութեամբ մտաւ կառքը շուրջը գտնուող մարդոց աչքէն խուսափելու համար և վայրի կենդանիի մը նման ձախ կողմը անկիւն մը կծկեցաւ յարդին վրայ և ետ ետ դնաց . յետոյ քահանան վեր ելաւ և աջ կողմի անկիւնը անոր քով նստաւ , անկէ վերջը դահլիճն ելաւ կառքը , ետևի տախտակը դոցեց և վրան նստաւ , իւր սրունքները դէպ ի քահանային սրունքներուն երկնցներով : Իսկ ծառան որ ձիապանի պաշտօնն ունէր , կառքին առաջ երկայնութեամբ նըստաւ կռնակը մնարքիզուհւոյն և քահանային կռնակին տարով , իսկ սաքերը դէպ ի ներս խրելով : Այսպէս մնարքիզուհւոյն դէպ ի Նօզո-Տամ ճամբայ ելաւ :

Հազիւ կառքը քանի մը քայլ առաջ գացած էր , մնարքիզուհւոյն դէմքը որ քիչ շատ հանդարտած էր , վերստին այլայլեցաւ . իւր աչքերը որ շարունակ խաչելութեան վրայ յառած էին , գերեզմանակառքէն դուրս բոցեղէն նայուածք մը արձակեցին և այնպիսի յուզմամբ լցուեցաւ որ քահանային տակում պատճառեց . ասիկա զգալով որ տիկինը տխուր տպաւորութեամբ մը զգածեալ էր , և ուղերով զանիկա հանդարտեցնել , հարցուց թէ ինչ տեսաւ :

— « Ոչինչ , պարոն , պատասխանեց եռանդեամբ իւր նայուածքը քահանային ուղղելով , ոչինչ » :

— « Բայց , տիկին , ըսաւ քահանան , դու չես կրնար իմ աչքերս խաբել . վայրկենէ մ'ի վեր աչացո՞ւմէջ կրակ մը կայ որ երկիւղածութեան կրակէն բոլորովին տարբեր է , ուստի անպատճառ վշտառիթ բան մը տեսար . ինչ կրնայ ըլլալ ասի-

կա , կաղաչեմ ըսէ ինծի . վասն զի դու խոստացար որ քեզի եկած ամեն փորձութիւնը յայտնես ինծի » :



Դահլիճն առանց պատասխանելու սկսաւ կրկնոցը վրայէն հանել .

« Այո , պարոն պատասխանեց մնարքիզուհւոյն , խոստումն կը յիշեմ . բայց բան մը չունիմ » :

Յետոյ յանկարծ աչքերը դէպ ի դահիճը դարձնելով որ քահանային դիմաց նստած էր, « Կը խնդրեմ, պարոն, ըսաւ ուժդին ձայնով մը, դիմացս նստեցէք և սա մարդէն ծածկեցէք զիս » :

Չայս ըսելով իւր կապեալ ձեռուրները դէպ ի մէկը կերկրնցնէր որ ձիով գերեզմանակառքին ետէն կուգար. տիկինն այս շարժումն ըրած ատեն ձեռքի ջահը մէկ կողմ մղեց զոր քահանան բռնեց, ինչպէս նաև խաչելութիւնը որ գետին ընկաւ : Դահիճը դէպ ի ետին նայեցաւ . յետոյ մէկ կողմ դարձաւ ինչպէս խնդրած էր մարքիզուհին, և գլուխը շարժելով ցած ձայնով մը քթին տակէն մրմուաց . « Ա, յո՛, այո՛, կը հասկընամ » : Եւ որովհետև քահանան կտտիպէր զինքը . « Պարոն, ըսաւ մարքիզուհին, ձեզի պատմելու արժանի բան մը չէ, և իմ տկարութենէս է անշուշտ որ զիս չարչարող մարդու մը տեսութիւնը անհանդուրժելի կերևայ ինձի : Ա, յո մարդը զոր գերեզմանակառքին ետևը տեսաք, Տէգլուէն է որ Լիէժի մէջ ձերբակալեց զիս և ամբողջ ճամբորդութեանս մէջ այնքան չարչարեց որ զինքը վերստին տեսած ատենս չկրցայ ինքզինքս զսպել » :

— « Տիկին, պատասխանեց քահանան, ըսած եմ և դու ինքնդ ալ պատմած ես խոստովանութեանդ մէջ, սակայն անիկա դքեղ ձերբակալելու պաշտօնն ունէր և արքայական հրամանաւ պարտաւոր էր քու վրայ ի մօտոյ հսկել և խստութեամբ վարուիլ . և եթէ աւելի խստութիւն բանեցնէր քեզի դէմ, իւր պարտքը կատարած պիտի ըլլար : Յիսուս Քրիստոս իւր դահիճները իբրև արդարութեան պաշտօնեայ կը նկատէր . թէև ասոնք անիրաւաբար կը վարուէին իրեն դէմ և մտքերնին եկած ամեն անգթութիւնները կը գործէին . սակայն ինքը համբերութեամբ կը վարուէր և բնաւ չէր տրտնջար, մինչև իսկ մեռնելու ատեն աղօթեց անոնց համար » :

Մարքիզուհին սիրտը խռովեցաւ և կռիւ մը սկսաւ իւր հոգւոյն մէջ որ դէմքին վրայ ալ անդրադարձեց . սակայն վայրկեան մը վերջը իւր հանդարտութիւնը և զուարթութիւնը վերստին ձեռք առաւ :

— « Պարոն, ըսաւ անոր, իրաւունք ունիք, և ես յանցաւոր եմ այսպէս վարուելու համար . ներում կը խնդրեմ Աստուծմէ և կաղաչեմ զձեզ որ կառավարանին վրայ երբ « Ար-

ձակուան տաք ինձի ինչպէս խոստացաք, յիշէք Ղայս » : Յետոյ դահիճին դառնալով, « Պարոն, շարունակեց անիկա, նստարուք ինչպէս առաջ նստած էիք որպէս զի պարոն Տէգլուէն կարենամ տեսնել » : Դահիճը վարանեցաւ, բայց քահանան ակնարկ մ'ընելով անոր, դահիճն առաջին տեղը նստաւ . մարքիզուհին քիչ մը ատեն Տէգլուէին նայեցաւ քաղցր դէմքով մը և ինչպաստ անոր աղօթք մը մրմնջեց . յետոյ աչքը խաչելութեան վրայ դարձնելով սկսաւ իր անձին համար ալ աղօթել . այս բանը սուրբ Քենովարէի եկեղեցւոյն առաջ տեղի ունեցաւ :

Սակայն գերեզմանակառքը թէև ծանր կը քալէր, բայց առաջ կերթար . և վերջապէս Նօդո-Տամի հրապարակը հասաւ : Այն ատեն աղեղնաւորները բազմութիւնը մէկ կողմ ըրին և գերեզմանակառքը մինչև աստիճանները յառաջանալով, հոն կանկ առաւ : Դահիճը կառքէն իջնելով ետևի տախտակը վեր վերցուց, մարքիզուհին բազկացը մէջ առաւ և քարայտակին վրայ դրաւ . յետոյ քահանան վար իջաւ որուն ոտքերը ուռած էին երկար ճամբորդութեան պատճառաւ . եկեղեցւոյ աստիճաններէն վեր ելաւ և մարքիզուհւոյն ետին գնաց կանգնեցաւ որուն աջ կողմը քարտուղար մը, ձախ կողմը դահիճը, և ետևը անհամար բազմութիւն մը կեցած էր : Մահապարտը ի ծունր չոքեցնելով բոցավառ ջահը ձեռքը տուին զոր մինչև այն ատեն քահանան բռնած էր գրեթէ : Քարտուղարը պատուաւոր հատուցումը զոր թղթի վրայ դրած էր, կարդաց անոր . տիկինն սկսաւ կրկնել զայն, բայց այնքան ցած ձայնով որ դահիճը պարտաւորեցաւ բարձրաձայն ըսել իրեն . « Պարոնին պէս արտասանէ դու ալ և անոր ամեն կարդացածը կրկնէ . բարձր, բարձր » : Այն ատեն տիկինը ձայնը բարձրացուց և հաստատամտութեամբ ու ջերմեռանդութեամբ հետևեալը կրկնեց .

« Կը ճանչնամ որ չարասրտութեամբ և վրէժխնդրութեամբ իմ հայրս ու եղբայրներս թունաւորեցի և քոյրս ալ թունաւորելու փորձ փորձեցի, անոնց հարստութիւնը ժառանգելու համար, որուն համար ներում կը խնդրեմ Աստուծմէ, թագաւորէն և արդարութենէն » :

Պատուաւոր հատուցումը այսպէս վերջանալով, դահիճը զայն վերստին իւր բազկացը մէջ առաւ և գերեզմանակառքը տարաւ, բայց այս անգամ ջահը ձեռքը չը տուաւ . քահանան ալ

քովը նստաւ . ամենքն իրենց առջի տեղը նստան և գերեզման նակառքը դէպ ի Կռէվ ճամբայ ելաւ : Մարքիզուհին այս կէտէն սկսեալ մինչև կառափնարան խաչելութիւնը բնաւ աչքէն չը հեռացուց , զոր քահանան ձախ ձեռքովը բռնած անոր կը ներկայացնէր միշտ և բարեպաշտական խօսքերով կը քաջալերէր և կառքին շուրջը բարձրացած ահուելի աղաղակներէն ազատել կը ջանար . այս աղաղակաց մէջ անէծքներ ալ կը տեղային զորս լսել և իմանալ շատ դիւրին էր : Գերեզմանակառքը Կրէվի հրապարակը համներով դիտատութեան բեմէն քիչ մը հեռու կանկ առաւ . այն ատեն քարտուղարը որ պարոն Տրուռէ կանուանուէր , ձիով յառաջացաւ և մարքիզուհոյն ուղղելով իւր խօսքը , « Տիկին ըսաւ անոր , ըսելիք մը չունիք երբէք . վասն զի եթէ յայտնելու բան մ'ունիք , երկոտասան պաշտօնակալները քաղաքին պանդոկին մէջն են և պատրաստ են ձեզ լսելու » :

— « Կը լսես , տիկին , կրկնեց քահանան , ահա մեր ճամբորդութեան վերջն հասանք և գոհութիւն Աստուծոյ , բնաւ ուժեղ չինկար . քու կրած և դեռ կրելիք տառապանացդ արգասիքը չը կորսնցնելու համար եթէ դիպուածով տակաւին բան մը գիտես , զայն մի ծածկեր » :

— « Ինչ որ գիտէի խօսեցայ , պատասխանեց մարքիզուհին , անկէ աւելի բան մը չեմ գիտեր » :

« Բարձրաձայն կրկնէ ուրեմն ըսածդ , կրկնեց քահանան , որպէս զի ամեն մարդ լսէ » :

Այն ատեն մարքիզուհին ուժգին ձայնով մը որքան որ կըրնար , ըսաւ . « Ինչ որ գիտէի խօսեցայ , պարոն , անկէ աւելի բան մը չեմ գիտեր » :

Այս յայտարարութենէն վերջը ուղեցին գերեզմանակառքը կառափնարանին աւելի մտեցնել . բայց բազմութիւնը այնքան խիտ էր որ դահճին ծառան չէր կրնար ճամբայ բանալ թէև խարազանի հարուածներ կուտար : Ուստի հարկ եղաւ քանի մը քայլ անդին կանկ առնուլ . իսկ դահիճը վար իջնելով սանդուխը կը պատրաստէր : Այս ստակալի ժամուն մարքիզուհին հանդարտ և երախտագէտ դէմքով մը քահանային կը նայէր և զգարով որ գերեզմանակառքը կեցած էր , « Պարոն , ըսաւ անոր , հոս չպիտի բաժնուինք իրարմէ , վասն զի դուք

խոստացաք որ զխատութենէս վերջը միայն պիտի թողուք զիս . կը յուսամ որ խոստումնիդ պիտի պահէք » :

« Անշուշտ , պատասխանեց քահանան , քու մահուանդ վայրկեանը իմ բաժանմանս վայրկեանը պիտի լինի . ուստի ասոր համար մի նեղուիր , վասն զի դքեզ չպիտի թողում երբէք » :

« Այս շնորհը կսպասէի ձեզմէ , կրկնեց մարքիզուհին , և դուք հանդիսաւոր խոստում ընելով , գիտէի որ խոստումնիդ պիտի պահէիք : Եթէ կարելի է , կը խնդրեմ որ կառափնարանին վրայ ինձի հետ և իմ քովս գտնուիք . և հիմա , պարոն , որովհետև հրաժեշտի ողջոյնս պէտք է տամ , և որպէս զի գըլխատութեան բեմին վրայ իմ ընելիք բաներս արգելք չլինին , ներեցէք որ կանխաւ շնորհակալ լինիմ ձեզ . վասն զի եթէ երկրի դատաւորներուն վճիռը կրելու և երկնից դատաւորին վրճիռը լսելու տրամադրութիւն մ'ունիմ , ձեր խնամոցը կը պարտիմ զայն , կը մնայ ինձ ձեզի պատճառած նեղութեանցս համար ներում խնդրել ձեզմէ » : Եւ որովհետև արցունքը քահանային ձայնը կը դերուր այնպէս որ անկարելի էր անոր պատասխանել , « Ձիս չէք մեղադրեր , այնպէս չէ » , կրկնեց տիկինը :

Քահանան ուղեց զանիկա վատահեցնել . բայց որովհետև բերանը բացուելուն պէս հեծեծանքը թոյլ չպիտի տար խօսելու , ուստի լուծութիւն պահեց , զոր մարքիզուհին տեսնելով երկրորդ անգամ կրկնեց , « Կաղաչեմ , պարոն , ներեցէք ինձի , և մի ցաւիք ինձի հետ անցուցած ժամանակնուդ համար . իմ մահուանս ատեն կառափնարանին վրայ « Հոգեհանգիստ » մը պիտի ըսէք և վաղն ալ պատարագ մը պիտի ընէք ինձի համար . կը խոստանամ » :

« Այո , տիկին , ըսաւ քահանան հեծեծաձայն , այո , այո , ապահով եղիր , պիտի ընեմ ինչ որ կը հրամայես ինձ » :

Այս պահուս դահիճը տախտակը վեր վերցուց և մարքիզուհին գերեզմանակառքէն վար իջեցուց . անոր հետ քանի մը քայլ առաջ գնաց դէպ ի կառափնատեղին , ուր կը նայէր բոլոր ժողովուրդը . այն ատեն քահանան իւր թաշկինակովն արցունքը ծածկեց , և երբ իւր աչքերը կը սրբէր , դահճին ծառան ձեռքն անոր երկնցուց , որպէս զի կառքէն վար իջնելու համար օգնէ իրեն : Այս միջոցին մարքիզուհին սանդուխէն վեր կ'ելնէր դահճին առաջնորդութեամբ , և երբ տախտակը

կին վրայ հասաւ , դահիճն անոր ծունր դնել տուաւ կոճղի մը առջև որ երկայնութեամբ դրուած էր . բարի քահանան մահապարտէն նուազ անյողդողդ քայլուած քով մը սանդուխէն վեր ելաւ և եկաւ անոր մէկ կողմը ծունր դրաւ երեսն անդին դարձնելով որպէս զի անոր ականջէն խօսելու կարող ըլլայ , այսինքն մարքիզուհին դէպ ի դետը կը նայէր և քահանան դէպ ի քաղաքին պանդոկը : Սյուպէս նստելէ վերջը դահիճը մահապարտին գլուխի գդակը հանեց , ետևի երկու կողմի մահգերը կտրեց , գլուխը երբեմն խտուրթեամբ չարժեղով . և թէպէտ այս ահաւոր տեսարանը կէս ժամու չափ տևեց , սակայն մարքիզուհին ամենեւին դանդաւ մը չըրաւ . և մինչև իսկ վշտի նշան մը չցցուց այլ միայն արտասուաց խոշոր կաթիլներ լուիկ կը հոսէին իւր աչքէն . դահիճը մաղերը կտրելէ վերջը անոր վրայ գտնուած շապիկին վերի կողմը ճեղքեց ուսերը բանալու համար . վերջապէս անոր աչուրները կապեց և ձեռքովը կրկնօրը վերսնելով հրաման ըրաւ որ գլուխը շիտակ բռնէ . տիկինն առանց ընդդիմութեան ամեն բանի հնազանդեցաւ միշտ քահանային խօսքը մտիկ ընելով և ժամանակ առ ժամանակ անոր խօսքերը կրկնելով : Սյու միջոցին դահիճը կառապինարանին ետևը կենալով որուն դիմաց կանգնեալ էր փայտակոյտը , երբեմն երբեմն աչքերը կրկնօրը վրայ կը դարձնէր , որուն ծալքերուն մէջէն երկար թուրի մը կոթը կ'երևար զոր դահիճը ծածկած էր , որպէս զի Պրէնվիլիէ տիկինը կառապինաբանն ելնելու ատեն չը տեսնէ զայն : Քահանան մարքիզուհւոյն « Արձակում » տալէ վերջը գլուխը դարձնելով տեսաւ որ դահիճը տակաւին զինուած չէր . ուստի աղօթքի ձևով հետևեալ խօսքերն ըսաւ և մահապարտին ալ կրկնել տուաւ . « Ո՛վ Յիսուս , որդի Դաւթի և Մարիամու , զթա՛ ինձի . ո՛վ Մարիամ , գուսար Դաւթի և մայր Յիսուսի , աղօթէ ինձի համար . ո՛վ Աստուած իմ , կը բաժնուիմ իմ մարմնէս որ հող է միայն և մարդոց կը յանձնեմ զայն այրելու , յաճիւն դարձնելու և ինչպէս ուղեն , այնպէս ընելու համար , յուսալով և հաւատալով որ օր մը զայն պիտի յարուցանես և հողոյս հետ պիտի միացնես . իմ վիշտս հողոյս համար է միայն . ո՛վ Աստուած իմ , ընդունէ՛ որ զայն քեզ յանձնեմ , քու հանգստութեանդ մէջ ա՛ռ և քու ծոցդ ընդունէ՛ զայն , որպէս զի իւր աղբիւրը


դառնայ ուրկէ բղխած է . ինչպէս բաժնուեցաւ քեզմէ , նոյնպէս առ քեզ կը դառնայ , և ինչպէս դուրս ելաւ քեզմէ , այսպէս վերստին քու քովդ կ'ուգայ . դուն անոր ծնունդը և սկիզբն եղար . ո՛վ Աստուած իմ , դու անոր կեդրոնն ու վախճանն եղիր : »

Մարքիզուհին այս խօսքերն հաղիւ աւարտած էր , և ահա քահանան խուլ հարուածի մը ձայն լսեց , մնավաճառի կտրոցի հարուածի ձայնին նման որ տախտակին վրայ միս կտրելու ատեն կը լսուի . այս պահուն խօսիլն ա՛լ դադարեցաւ : Դաշոյնը սյնքան շուտ կատարած էր իւր գործողութիւնը , որ վայլատակեցն անգամ չէր տեսած քահանան . ուստի ինքնին կանգ առաւ , մաղերը քստմնեցան և ճակատէն քրտինք հոսել սկսան . վասն զի գլուխը դետին ընկնիլը չը տեսնելով , այնպէս կարծեր էր թէ դահիճին հարուածը վրիպած էր և հետևաբար վերստին պիտի սկսէր : Սակայն այս երկիւղը շուտով փարատեցաւ , վասն զի գրեթէ մի և նոյն պահուն գլուխը դէպ ի ձախ կողմը հակեցաւ , և ուսին վրայէն սահելով դէպ ետև գլորեցաւ . իսկ մարմինը երկայնութեամբ դրուած կոճղին վրայ դէպ առաջ ընկաւ , այնպէս որ հանդիսականք արիւնաթաթաւ և գլխատեալ պարանոցը կրցին տեսնել : Այն ատեն քահանան ինչպէս խոստացած էր , « Հոգեհանգիստն » ըսաւ :

Քահանան իւր աղօթքն աւարտելէ ետև գլուխը վեր վերցուց և դահիճն իւր առաջը տեսաւ . « Է՛հ ուրեմն , ըսաւ այս վերջինը , հարուածս աղէկ չէր : Սյուպիսի պարագայներու մէջ ինքզինքս միշտ Աստուծոյ կը յանձնեմ , և Աստուած օգնած է ինձի : Այս կինը բաւական ատենէ ի վեր անհանգիստ ըրած էր զիս որուն համար վեց պատարագ ընել տուի , որով սիրտս և ձեռուրներս զօրացան : »

Այս խօսքերէն վերջը դահիճն իւր վերաբերուին ներքևէն սրուակ մը հանեց զոր գլխատուրթեան բեմին վրայ հետը կը կրէր , կուշտ մը խմեց և արիւնաթաթաւ գլուխը մէկ թևին իսկ գլուխը միւս թևին ներքև առնելով որոյ աչուրները տակաւին կապեալ մնացած էին , երկուքն ալ փայտակոյտը նետեց , զոր ծառան անմիջապէս կրակի տուաւ :

« Հետևեալ օր , կըսէ տիկին տը Սէվինեէ , Պրէնվիլիէ մարքիզուհւոյն ոսկրները կը վնասուէին , վասն զի ժողովուրդը կըսէր թէ սրբուհի մ'էր նա :



1814 ին Պ. տ'Օֆրման, գղեկին տէրը ուր Պրէնկիլիէ մար-
քիզուհին իւր հայրը թունաւորեց, դաշնակից գնդերու մօտե-
նալէն վախնալով, փոքրիկ աշտարակներէն մէկուն մէջ թաքս-
տեան տեղեր շինեց և այս անապատացեալ բերդին մէջ գլա-
նուած արծաթեղէնները և թանկագին իրերը այն տեղերը
պահեց: Օտար գունդերը երեք ամիս ամբողջ խուզարկութիւն
ընելէ ետքը բան մը չկրցին գտնել և տեղերնին քաշուեցան:

Ս. յն ատեն գղեկին տէրը պահուած բաները դուրս հանել
ուզելով, և բնաւ բան մը չը մտնալու համար պատերը խու-
զարկել տալով, անջրպետներէն մէկուն մէջ զարմանօք ահա-
գին խուռոչ մը անտուեցաւ որ մինչև այն ատեն անձանօթ էր:
Լծակներով և բրիչներով պատը փրցուցին, որուն քարերը ի-
նալով գործարանի ձևով սենեակ մը երևան եկաւ. այս գոր-
ծարանին մէջ դարբնոցներ, քիմիական գործիներ, անձանօթ
ջուր մը պարունակող բազմաթիւ սրուակներ և գոյնզգոյն փօշի-
չորս ծրար գտնուեցան: Սակայն գիւտն ընողները դժբաղդա-
բար կարևորութիւն չը տալով այս յայտնութեան, փոխանակ
գիտութեան քննութեանցը յանձնելու, ծրար և սրուակ ամէնքն
անյայտ ըրին, անշուշտ անոնց մահաբեր հետեանքէն վախ-
նալով:

Ս. յսպէս Սէնթ-Քրօսի և Պրէնկիլիէ տիկնոջ թոյներն անհե-
տանալով, անկարելի եղաւ անոնց բաղադրութիւնը վերստին
քննութեան ենթարկել և իսկութիւնն հասկնալ:

